

33-34(672-673)

30.11.2022

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստիճանն և գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԱՆՑԿԱՑԿԵՑ «ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆՔԱՑՆԵՐԻ ՀՈՒԿՈՒՅԹՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՎԻ



րապնդմանն ուղղված գաղափարի իրագործման ծանապարհին. «Այո, ներկայումս հսկայական գործ ունենք կատարելու կանխատեսելի ապագայի համար: Կարծում ենք, որ համաժողովի ընթացքում ներկայացված տեսակետներն ու դրանց քննարկումների արդյունքներում ընդունված գաղափարները միաժամանակ կներկայացնեն միջազգային համապատասխան կառույցներին, տարածաշրջանում քաղաքական հետաքրքրություններ ունեցողներին, և ըստ այդմ գործնական կիրառություն կստանան»:

Նոյեմբերի 26-ին ՀՀ ակադեմիկոսների, քաղաքական, ռազմական վերլուծաբանների մասնակցությամբ ԱՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում անցկացվեց «Արցախյան հիմնախնդիրը արդի քաղաքական գործընթացների հոլովույթում» քննարկող գիտագործնական համաժողով, որի կազմակերպիչներն էին ԱՀ Ազգային ժողովը, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը: Այն մեկնարկեց Արցախի օրհներգով: Ներկայից մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցեցին հայրենիքի պաշտպանության համար մեր բոլոր նահատակների հիշատակին:

Բացման խոսքով հանդես եկավ ԱՀ Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանը, որը նշեց, որ գիտագործնական համաժողովը միտված է 2020թ. 44-օրյա պատերազմից հետո ներկա օրերն արդի քաղաքական գործընթացների հոլովույթում Արցախի հիմնախնդրի անաչառ ու հիմնավոր քննարկմանն ու համապատասխան եզրահանգումներ կատարելուն:

«Այնհայտ իրողություն է, որ ներկա ժամանակներում հանրության շրջանում գերակշռող են դարձել մտահոգություններն ու երբեմն նաև հուսահատությունն ու իրավիճակային թվացյալ անելանելի տրամադրությունները: Ստեղծված պայմաններում, մեր կարծիքով, առավել մեծ է հայ քաղաքական գործիչների, մտավորականության դերը հանրության անվտանգ ու ճիշտ ճանապարհով առաջընդդիմելու և դրանով իսկ բազում ու բազմապիսի փորձություններ հաղթահարած մեր հայրենիքի պահպանումն ու պաշտպանությունը երաշխավորելու գործում, - ասել է Վ.Բալայանը: - Ի վերջո մեր պատմության հերոսական էջերը մեզ մատնացույց են անում, որ անգամ ծայրահեղ իրավիճակներում էթե մենք մեր մեջ ուժ ենք գտել ինքնակազմակերպվել ու դիմակայել, արձանագրել ենք հաջողություններ: Իսկ այդ ամենն առավելապես պայմանավորված է եղել նաև հայ մտավոր ներուժի մեկտեղմամբ ու ճիշտ ուղղորդմամբ»:

Նա հույս հայտնեց, որ գիտաժողովում ներկայացված տեսակետների ու առաջարկությունների, քննարկումների արդյունքները և ընդունված եզրակացությունները կարևոր ուղերձ կդառնան ազգային միասնականությանը դեպի նոր վերածննդի ու ազգային պետականության ամ-

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը ողջույնի խոսք է հղել գիտագործնական համաժողովի մասնակիցներին, որը ներկայացրեց Նախագահի խորհրդական Նելլի Բաղդասարյանը: Գիտաժողովում ողջույնի խոսքով ելույթ ունեցավ ԱՀ Աժ նախագահ Արթուր Թովմասյանը: Պետական նախարար Ռուբեն Վարդանյանի ողջույնի խոսքը փոխանցեց նրա խորհրդական Նարինե Աղաբալյանը: Ողջույնի խոսք ասաց նաև ԿԳՄՍ նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Մինասյանը:

Հրատապ թեմաներով զեկուցումներով հանդես եկան ԱՀ արտաքին գործերի նախարար, պ.գ.դ. Դավիթ Բաբայանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փ. գ. դ., պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, Կովկասյան ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը, դիվանագետ, պ.գ.դ. Ռուբեն Կարապետյանը, ռազմական փորձագետ Հայկ Նահապետյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԱՀ Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր Վահրամ Բալայանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Արմեն Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը, պատմաբաններ Արցախի բուհերից (մի քանի զեկուցումների բովանդակությունը շարունակաբար կներկայացնենք «Լուսարար»-ում):

«Չպետք է ընկճվել, մենք մնան վիճակներ շատ ենք տեսել և հաստատ այս վիճակից նույնպես դուրս ենք գալու: Ինչպես զեկուցումներից տեսանք, ելք, այնուամենայնիվ, կա: Ուղղակի պետք է տոկալ, պետք է դիմանալ, ինչին մենք տվոր ենք: Մասնավոր Արցախյան այնպիսի իրավիճակների դիմացավ 90-ականներին և հետո հաղթեց, որովհետև կար հավատ: Պետք է վերականգնել հավատը: Իսկ մենք գալիս ենք Արցախ այն բանի համար, որ այն միշտ ուժ, կորով հաղորդող հզոր աղբյուր է: Եվ հավատացեք, նորից տոնելու ենք հաղթանակներ: Վկայությունը՝ մեր հաղթանակների այն շարանը ծանրագույն ժամանակներից հետո և էլք գտնելու արցախյան գարնանային հնարամտությունը»:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ԱՇ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ



«Արցախյան հիմնախնդիրը արդի քաղաքական գործընթացների հոլովույթում» գիտագործնական համաժողովի հարգելի մասնակիցներ, հարգարժան մտավորականներ

Կարևորում են համաժողովի խորագիրը և վստահ են, որ այն կարող է ծառայել որպես արդի աշխարհաքաղաքական գործընթացների քննարկման, համապատասխան էլքերի և լուծումների առաջադրման բովանդակային հարթակ: Պետք է արձանագրենք, որ արդի աշխարհաքաղաքական գործընթացների և վերադասավորումների պայմաններում ձևավորվում է նոր աշխարհակարգ, որի տարածաշրջանային մակարդակում Արցախի Հանրապետությունը ներկայանում է հետևյալ իրողություններով և օրակարգային խնդիրներով:

2020թ. աղբյուրաբան-դարաբան պատերազմն իր ունեցած հետևանքներով խաթարեց տասնամյակներով հաստատված տարածաշրջանային կարգը: Տարածաշրջանային նոր իրողությունների պայմաններում վտանգված է հայկական երկու պետությունների ապագան:

Պատերազմով պայմանավորված իրողությունների հետևանքով որպես Արցախի Հանրապետության արտաքին անվտանգային երաշխիք ամրագրվել է ՌԴ խաղաղապահ առաքելությունը, որն այսօր հիմնական զսպող հանգամանք է Աղբյուրաբանի կողմից Արցախի Հանրապետության դեմ հետագա լայնածավալ ագրեսիան կանխելու գործում: Ստեղծված պայմաններում ՌԴ խաղաղապահների ներկայության ժամկետի երկարաժամկետը կենսական անհրաժեշտություն է:

Աղբյուրաբանը շարունակում է «սողացող ագրեսիաների» մեխանիզմով և հրադադարի ռեժիմի պարբերական խախտումներով պատերազմել Արցախի և Հայաստանի հանրապետությունների դեմ, որի նպատակը էթնիկ հիմքով ահաբեկչությունը և հայաթափումն է:

Աղբյուրաբանը շարունակում է սպառազինությունների համալրման և հայ ժողովրդի դեմ ատելության համակարգված քաղաքականությունը: Ստեղծված պայմաններում Արցախի Հանրապետությունը պարտադրված է հետևողականորեն բարելավելու սեփական ժողովրդի անվտանգության մեխանիզմները, այդ թվում՝ առաջնահերթորեն Պաշտպանության բանակի ինքնապաշտպանական կարողությունները:

Աղբյուրաբան-դարաբանյան հակամարտությունը մնում է չկարգավորված՝ աղբյուրաբանական ագրեսիվ ու ցեղասպան քաղաքականության պատճառով: Այս հարցում Աղբյուրաբանի վրա միջազգային ներազդման ջանքերը շարունակում են դեկլարատիվ մակարդակում մնալ:

Մենք կարևորում ենք միջազգային խաղացողների և ուժային կենտրոնների առաջարկները՝ ուղղված աղբյուրաբան-դարաբանյան հակամարտության կարգավորմանը, տարածաշրջանի միջպետական հակապետությունների հարթմանը, մակրոտարածաշրջանային մակարդակում կոնֆլիկտային զարգացումների բացառմանը: Միաժամանակ այդ առաջարկները պետք է համապատասխանեն մեր ազգային կարիքներին ու շահերին և բացառեն միակողմանի լուծումները: Արցախն առաջնային տեղ ունի տարածաշրջանային հիմնախնդիրների կարգավորման և Մայր Հայաստանի անվտանգության ու զարգացման հարցերում: Ուստի կարևոր է աղբյուրաբան-դարաբանյան հակամարտությունը դիտարկել տարածաշրջանային ու համահայկական լայն համատեքստերում: Ստեղծված միջազգային և տարածաշրջանային իրողությունների պայմաններում Արցախի Հանրապետության օրակարգային հարցերի կենտրոնում շարունակում է առաջնային մնալ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի՝ միջազգային հանրության կողմից ճանաչման հարցը:

Մենք մեծապես կարևորում և ողջունում ենք Արցախի Հանրապետության ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմանն ուղղված միջազգային խոսույթը և ակնկալում, որ այդ գործընթացները գործնական դրսևորումներ կունենան:

Հուսով ենք, որ միջազգային հանրությունը վերջնականապես կընդունի այն հանգամանքը, որ մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունն ինքնանպատակ չեն: Մենք պայքարում ենք տնօրինելու մեր ճակատագիրը մեր հայրենի բնօրրանում և ճանաչման միջոցով ստանալու միջազգային երաշխիքներ մեր ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովման հարցում:

Արցախի Հանրապետության ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման ու պաշտպանության տրամաբանությունից դուրս որևէ այլ գործընթաց կամ լուծում, անկասկած, տանելու է Աղբյուրաբանի կողմից Արցախի Հանրապետության բնակչության էթնիկ բնաջնջմանը: Մենք հաստատական ենք մեր ժողովրդի առջև ծառայած կենսական հարցերին լուծում տալու և բոլոր հնարավոր մեխանիզմներով մեր ազգային շահերը պաշտպանելու հարցում:



ՈՒՂԵՐՁՆԵՐ

# ԱՆ ԱԺ ՆԱԽԱԳԱՆ ԱՐԹՈՒՐ ԹՈՎԱՄԱՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ «ԱՐԶԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀՈՒՎՈՒՅԹՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ



Հարգելի նախագահող, Համաժողովի մասնակիցներ, հյուրեր

Ողջունում եմ բոլորիդ Ազգային ժողովի հյուրընկալ օջախում և խորապես կարևորում «Արցախյան հիմնախնդիրը արդի քաղաքական գործընթացների հոլովություն» խորագրով գիտագործնական համաժողովի նախաձեռնումն ու կազմակերպումը:

Մեր օրերում, երբ վտանգված է Արցախի պետականությունը, հակամարտության վերջնական լուծման կողքին դրվում է նաև Արցախի ժողովրդի ինքնորոշ-

ման իրավունքի իրացման հեռանկարը:

Չնայած հակամարտող կողմերի՝ դարաբաշյան հիմնախնդրի հանդեպ հակառակ դիրքորոշումներին, մենք միանշանակ հակված ենք բանակցային գործընթացը եԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո շարունակելուն: Մեր այս դիրքորոշումը պետք է ընկալելի լինի նաև Հարավային Կովկասում իրենց տարածաշրջանային շահերը հետապնդող երկրների համար: Միջազգային հանրությունը պարտավոր է հարգել արցախահայության պահանջը, քանզի այն համապատասխանում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին ու նորմերին:

Հակամարտության կարգավորումը, տարածաշրջանում տևական և կայուն խաղաղությունն անհնար է առանց Արցախյան կողմից օկուպացված և փաստացի Արցախյան վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական մշակութային ու հոգևոր ժառանգության պահպանության, այդ թվում՝ բոլոր հնարավոր միջոցներով մշտադիտարկման կազմակերպման՝ կանխելու համար հայերի

էթնիկ գտնան նպատակով իրականացրած գործողությունները:

Արցախյան ցայտօր, խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, Արցախի նկատմամբ պարբերաբար ագրեսիվ գործողություններ է ձեռնարկում, որոնք որակվում են ինչպես հայատյացության դրսևորում, այնպես էլ տարածաշրջանում խաղաղության և կայունության խախտման և հատկապես՝ խաղաղապահ առաքելության չեզոքացման նենգ դրսևորում:

Մենք շարունակելու ենք մեր ջանքերը՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման և անվտանգության համար մղված Արցախյան ազատամարտի արդյունքների պաշտպանության, խնդրի խաղաղ և արդարացի լուծմանը հասնելու ուղղությամբ:

Մենք կանգնած ենք անցյալից դասեր առնելու, ընդօրինակելու, կատարվածը հանրագումարի բերելու հրամայականի առջև: Ներկա դրությամբ առաջնահերթ խնդիրը երկրի հուսալի անվտանգության ապահովումն է: Կարևորում ենք հատկապես

ՈՂ-ի կողմից այս հարցի նկատմամբ ընդգծված վերաբերմունքն ու իրականացված գործնական քայլերը:

Աշխարհաքաղաքական բարդ ու անկանխատեսելի իրավիճակին և արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար առաջնային ու կարևոր գործնական պետք է հանդիսանան համաժողովրդական համախմբվածությունն ու համերաշխությունը:

Հավատացած եմ՝ այսօրվա գիտաժողովը հետաքրքիր քննարկումների ու եզրահանգումների հարթակ կհանդիսանա, ինչը հնարավորություն կընձեռնի քննելու մեր ձեռքբերումներն ու թերացումները, ներկայիս մարտահրավերները գիտագործնական հարթության վրա ուսումնասիրելու և համապատասխան գնահատականներ ու առաջարկներ հավաքագրելու:

Մեր պայքարը շարունակական է, դիրքորոշումը՝ անփոփոխ:

Կրկին ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ մաղթում եմ արդյունավետ ու արգասաբեր աշխատանք:

Շնորհակալություն:

# ԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՈՒԻԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ



Հարգելի նախագահող, Համաժողովի մասնակիցներ, հյուրեր

« Ա Ր Գ Վ Խ Ի շուրջ ընթացող բարդ աշխարհաքաղաքական զարգացումներում, երբ առեւտրային լուծում ենք լրջագույն մարտահրավերների, նման համաժողովի անցկացումն Ստեփանակերտում առանձնահատուկ կարևորություն ունի:

Քառասունչորսօրյա պատերազմը և դրան հաջորդած իրադարձությունները բոլորովին մեր իրավիճակ են ստեղծել տարածաշրջանում: Ուստի առկա իրողությունների վերլուծությունն ու քննարկումը չափազանց կարևոր են մեզ համար: Վստահ եմ՝ այսօր այստեղ արժեքավոր մտքեր են հնչելու և քննարկումներ են ծավալվելու ի շահ Արցախի Հանրապետության: Ինչպես գիտեք, բոլորովին վերջերս եմ ստանձնել Արցախի պետական նախարարի պաշտոնը՝ գիտակցելով ստեղծված իրավիճակի ողջ լրջությունը: Եվ ինձ համար, որպես պետնախարար, Արցախի սուբյեկտայնությունը, անվտանգությունն ու սոցիալ-տնտեսական զարգացումը բացարձակ գերակայություն են: Մեր նպատակն է ապահովել Արցախի՝ որպես լիարժեք սուբյեկտի մասնակցությունը հակամարտության կարգավորման գործընթացում՝ հասնելու միջազգային մեխանիզմներով երաշխավորված անվտանգության արցախահայության համար: Մենք ծրագրում ենք մեծածավալ աշխատանքներ իրականացնել Արցախի սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման և հանրապետության կայուն զարգացումն ապահովելու ուղղությամբ: Չուզեմք քաղաքական կանգնելու և փոխելու աշխարհի ընկալումն Արցախի մասին և բարձրացնելու Արցախի ճանաչելիությունը: Արցախը ոչ միայն հակամարտության գոտի է, այլև երկիր, որտեղ, օրինակ՝ 30 հազար երեխա է ապրում, որտեղից սերունդ են աշխարհին հայտնի տաղանդավոր ու հեղինակավոր բազում մարդիկ, որտեղ համամարդկային, հայկական և քրիստոնեական բազմաթիվ արժեքներ են արարվել ու պահպանվել:

Մեր բոլորիս ջանքերն այս ճգնաժամային օրերին ուղղված են Արցախի համար կարևորագույն այս խնդիրների կարգավորմանը, որում, անշուշտ, մեր գիտնականները, վերլուծաբանները, քաղաքական-հասարակական գործիչները լուրջ անելիքներ ունեն, և մենք ապավինում ենք ձեռք, համայն հայության օգնությանն այս հարցում: Աշխարհում այսօր ամենուր հակամարտություններ են, և աշխարհագրական որևէ կետում անվտանգությունն այլևս երաշխավորված չէ: Աշխարհը մտնել է գլոբալ փոփոխությունների փուլ, և մեր խնդիրն է ճիշտ գնահատել իրավիճակը, շփոթելու ու հնարավորությունները և առավելագույնս ամրապնդել մեր դիրքերը: Եթե մեզ հաջողվի միավորել բոլոր ջանքերը, համոզված եմ, որ կկարողանանք լուծել մեր երկրի առջև ծառայած առաջնային խնդիրները: Ինչպես արդեն առիթ են ունեցել ասելու, վստահ եմ, որ հայկական աշխարհի վերածնունդը սկսվելու է Արցախից: Բարի ընթացք են մաղթում այս կարևոր գիտաժողովին:

Հարգանքով՝ Ռուբեն Վարդանյան:

# ԱՆ ԿԳՄ ՆԱԽԱՐԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՄՄԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ



Արցախի Հանրապետության Ազգային ժողովի մեծարգո նախագահ,

Համաժողովի կազմակերպիչ հարգելի անդամներ, հարգելի մասնակիցներ, գործընկերներ

Մեր գիտաժողովը գիտագործնական բնույթ ունի և նվիրված է գերարդիական թեմային՝ արցախյան հիմնախնդիրներն արդի քաղաքական գործընթացների հոլովություն: Սա երևի ամենից շատ քննարկվող, բարդ, հրատապ, բայց միևնույն ժամանակ շատ նուրբ դիվանագիտական մոտեցումներ պահանջող թեմաներից է: Քննարկվելիք հարցերը ոչ մեկին չեն կարող անտարբեր թողնել, քանի որ Արցախը կանգնած է ներքին ու արտաքին սպառնալիքների ու մարտահրավերների առջև: «Կրթական համակարգը, գիտության ոլորտը առաջիններից են,

որոնք առաջին հարվածն են ընդունում իրավիճակի ցանկացած դրսևորման դեպքում: Մենք այսօր ամուր կանգնած ենք մեր պապերի հողի վրա, և դժվար է գերազանահատել այդ առաքելությունը, որը կարելի է ընդամենը երկու բառով բնութագրել՝ համուն Արցախի: Բազմիցս պատմությունն է մեզ ուսուցանել և ապացուցել, այսօր ևս Արցախի ժողովրդի անվտանգության, ինքնության, ազգային արժեքների, պետականության պաշտպանության երաշխիքներն են հայ զինվորը, գիտնական մտավորականների սուր միտքն ու գրիչը, հմուտ դիվանագետը, ազգանվեր պետականաշինության տեսլականով պետական գործիչը: Միայն այս գաղափարը կարևորելով՝ մենք կարող ենք կրկին հաղթանակներ կերտել: Հակառակ դեպքում մենք նորից կվերապրենք 2020 թվականի դաժան պատերազմի պարտության ցավը: Ուժն է ծնում իրավունքը, այս անարդար, բայց իրատես բանաձևված ճշմարտությունը երկրագնդի ժողովուրդների բոլոր ժամանակների ուղեկիցն է եղել: Արցախահայությունը, ճիշտ ընկալելով այդ ճշմարտությունը, իր պատմական երկարամյա կենսափորձի վրա հենվելով՝ կենաց և մահու պայքար է մղել արտաքին ու ներքին

բոլոր թշնամիների դեմ՝ հանուն հայրենիքի, պետականության, ժողովրդի ազատության ու անկախության: Այդ պայքարի բարձրակետը դարձավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծնունդը: Իրականությունն այն է, որ թեկուզ մենք այսօր հայտնվել ենք ոչ այնքան շահավետ վիճակում, բայց նաև կա այլ իրականություն ու պատմություն՝ լի հայի հաղթական իրադարձություններով, Արցախյան շարժման նվաճումներով, ազատագրական պայքարը, որն աննախադեպ մի երևույթ է և ունի առանձին ուսումնասիրության կարիք, Շուշիի, պատմական Արցախի այլ տարածքների ազատագրումը: Պատմությունը սովորություն ունի կրկնվելու, և մենք պարտավոր ենք ու պարտք ենք մեր երեխաներին մեծ տարածքով, լիարժեք պետականությամբ, անվտանգության ամուր համակարգով, պահպանված ազգային ինքնությամբ և արժեքներով մի մեծ ու հզոր հայրենիք: Մենք պարտավոր ենք կրկնել պատմությունը՝ հանուն մեր նահատակված հերոսների, որոնց շնորհիվ և որոնց կյանքի հաշվին մենք այսօր այստեղ ենք և ամուր կանգնած ենք մեր պապերի հողի վրա: Գիտելիքներով օժտված մարդիկ անպարտելի են: Առա-

վել անպարտելի են նրանք, ովքեր լավ են տիրապետում սեփական պատմությանը և կարողանում են դասեր քաղել անցյալից:

Այսօրվա գիտագործնական համաժողովի հարթակը միավորել է խոշոր գիտնականների, առաջատար փորձագետների, երիտասարդ հետազոտողների և առիասարակ, շարքային քաղաքացիների: Այստեղ կքննարկվի հարցերի լայն շրջանակ՝ կապված դարաբաշյան հակամարտության, արցախյան հիմնախնդրի ռազմաքաղաքական լուծումների, Արցախի Հանրապետության սուբյեկտայնության բարձրացման, ազգերի ինքնորոշման իրավունքի հիմնարար սկզբունքների հետ: Կքննարկվեն նաև Արցախի Հանրապետության խորհրդարանի գործառույթները արցախյան հիմնախնդրի կարգավորման ասպարեզում: Համոզված եմ, որ համաժողովի աշխատանքները կլինեն բեղմնավոր ու օգտակար: Եվ միասին մենք կհասնենք նշանակալի ու արժանի արդյունքների:

Գիտագործնական համաժողովի մասնակիցներին մաղթում եմ արդյունավետ շփում, նոր հետաքրքիր զաղափարներ և ամենայն բարիք:

ԱՐՏԱԽԸ՝ ԳՈՐԾՈՆ

ԱՆ ԱՐՏԱԽԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՀՈՒՆՎՈՒՅԹՈՒՄ



«Արցախյան հիմնախնդիրը արդի քաղաքական գործընթացների հոլովություն» գիտազործնական խորհրդածրոյվում «ԱՅ արտաքին քաղաքականության գերակա հիմնախնդիրները արդի քաղաքական գործընթացների հոլովություն» թեմայով զեկուցումով հանդես եկավ ԱՅ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար, պատմական գիտությունների դոկտոր Դավիթ ԲԱԲԱՅԱՆԸ: Այն ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

Սա շատ կարևոր միջոցառում է, որը մենք պարբերաբար պետք է իրականացնենք, քանի որ իրավիճակն օրհասական է, բարդ: Եվ որպեսզի այս ծանր իրավիճակից կարողանանք դուրս գալ ավելի արդյունավետ ձևով, պետք է համադրենք գիտական ներուժը և քաղաքական ներուժը: Մի բան, որ դժբախտաբար մեր պետականության երկար տարիների ընթացքում չի հաջողվել իրականացնել: Բայց մենք անկախ ամեն ինչից պետք է շարունակենք այս ուղղությամբ մեր աշխատանքները: Որպեսզի տեսնենք, թե ինչպիսի արտաքին քաղաքականություն պետք է վարենք, ինչպես պետք է դուրս գանք այս իրավիճակից, նախ և առաջ պետք է գնահատական տանք ստեղծված իրավիճակին: Գիշտ գնահատական տալուց է մեծապես կախված հարցերի լուծման բանալին: Արցախը, Մայր Զայաստանը, հայոց պետականությունն առհասարակ հայտնվել են իրենց ողջ պատմության մեջ ամենաբարդ ու ամենավտանգավոր իրա իրավիճակում: Այո, ժամանակներ են եղել, երբ մենք պետականության կրուստ ենք ունեցել, տարբեր սարսափելի իրադարձությունների, զարգացումների միջով ենք անցել, բայց ներկա իրավիճակն ամենաբարդն է: Եթե մենք կորցնենք մեր պետականությունը, իսկ Արցախի պետականությունը վտանգված է, կկորցնենք հայոց պետականությունն առհասարակ և ընդհանրապես՝ հայ ժողովրդի բնօրրանը: Մենք այլևս ռեսուրս չունենք, էթնիկ, ժողովրդագրական առումով, ծովից ծով չենք, որ պետականությունը կորցնենք ու սպասենք, որ հարմար պահ լինի՝ նորից վերականգնենք: Հայ ժողովրդի էթնիկ արեալը այնքան է սահմանափակվել, որ գրեթե համընկնում է հայոց պետականության հետ: Իրավիճակի բարդությանը գումարվում է նաև այն, որ ադրբեջանա-դարաբաղյան երրորդ պատերազմից հետո կտրուկ փոխվել է նաև ռազմաքաղաքական հավասարակշռությունը տարածաշրջանում: Արցախը դարձել է ամենախաղտախոցելի: Մեր ողջ պատմության ընթացքում մենք երբևէ չենք հայտնվել նման իրավիճակում. փոքրացած՝ կախված տարբեր հանգամանքներից: Պարզ է, որ այս խոցելիության աստիճանը թշնամիների համար ստեղծում է լրացուցիչ գայթակղություն. հարցը կարգավորել վերջնականապես, այսինքն՝ պարզապես ոչնչացնել Արցախի պետականությունը: Սա մենք պետք է լավ հասկանանք: Դրան գումարած, որ ՀՀ ռազմաքաղաքական ներուժն է թուլացել 3-րդ պատե-

րագմի հետևանքների, ժողովրդի կրած բարոյա հոգեբանական հարվածների արդյունքում: Իսկ թշնամին հասնում իր ռազմաքաղաքական ուժի գագաթնակետին Թուրքիայի շնորհիվ: Մի երկիր, որ մտնում է մի նոր դարաշրջան: Օսմանյան կայսրության փլուզումից հետո սա նոր վերակենդանացման մի դարաշրջան է, որովհետև մենք տեսնում ենք նրա ակտիվությունը Անդրկովկասում, Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արևելքում, ամենուր: Դրան գումարած Ադրբեջանի այս էյֆորիկ վիճակը: Պետք է նաև հաշիվի առնենք աշխարհաքաղաքական այլ զարգացումներ: Մեր ռազմաքաղաքական, այսպես կոչված, եղբայրական երկրների դժվարությունները, աշխարհաքաղաքական պայքարը գերտերությունների միջև:

Բայց սա չի նշանակում, թե Արցախը փրկելու հնարավորություն չկա: Ամենևին: Ցանկացած վտանգ, մարտահրավեր նաև հնարավորություն է, մասնավորապես որ մենք ունենք այդ հնարավորությունները, ճիշտ է, սահմանափակ, բայց այնուամենայնիվ կան:

Արցախի արտաքին քաղաքականության գերխնդիրը պետականաշինության, ողջ հայության համար Արցախի փրկությունն է: Սա պարզ է:

Արցախի գոյությունն ինքնին կարևոր աշխարհաքաղաքական գործոն է, որովհետև նրա գոյությունն Անդրկովկասում մի իրավիճակ է ստեղծում, նրա անհետացումն ստեղծելու է լրիվ այլ, անկանխատեսելի, նույնիսկ կարելի է ասել՝ կանխատեսելի իրավիճակ, որովհետև սկսվելու են նոր գործընթացներ, շատ ավելի հզոր, շատ ավելի վտանգավոր, որը գոյաբանական մեծ սպառնալիքներ է ներկայացրել տարբեր երկրների, գերտերությունների համար՝ պանթուրքիզմի վեկտորի ուժեղացում: Այսօրվա դրությամբ փաստորեն Արցախի գոյությունը ամենակարևոր գործոնն է, որը թույլ չի տալիս, որ պանթուրքիստական ծավալապաշտական այդ վեկտորը հասնի իր նպատակին: Զլինի Արցախը՝ սրընթաց ձևով ստեղծվելու է մի լրիվ այլ ռազմաքաղաքական կոնֆիգուրացիա և Կենտրոնական Ասիայում, և Մերձավոր Արևելքում, և Կովկասում, Պոլիժիեում և այլուր: Շատ կարևոր մի գործոն, որ մենք պետք է հասկանանք: Այսինքն՝ մեր լինելությունն ինքնին արդեն իսկ գործոն է: Սա՝ պետք է մենք հաշիվի առնենք. սա մեր ամենակարևոր աշխարհաքաղաքական, արտաքին քաղաքական լծակն է, որը մենք ունենք: Մնացած բոլորն ածանցյալ են սրանից: Հետևաբար, այս իրավիճակում պետք է նաև կարողանանք այնպես անել, որ խուսափենք տարբեր բարդություններից: Մեր առջև կանգնած ամենամեծ վտանգը Ադրբեջանի կազմում հայտնվելն է: Այնպես է, թե սա ինչի կերի: Մենք տեսնում ենք պաշտոնական Բաքվի դիրքորոշման կտրուկ փոփոխությունը: Գիշտ է, նրանք հայտարարում էին, որ չեն դիտարկում որևէ հնարավորություն Արցախի՝ Ադրբեջանից դուրս գոյությունը, բայց հիմա նույնիսկ Արցախի գոյության մասին չեն խոսում: Հարց է ծագում՝ հնարավոր է, ինչպե՞ս պետք է մենք ապրենք այս տարածաշրջանում: Բացահայտ է, որ Ադրբեջանի կազմում Արցախն ունի միայն մեկ ապագա՝ հայաթափում: Եվ այստեղ շատ կարևոր է գիտական ներուժի առկայությունը. մենք պետք է հասկանանք՝ ում հետ գործ ունենք: Ադրբեջան պետությունը աշխարհաքաղաքական՝ երկի աշխարհում իրականացված ամենահաջողված պրոյեկտներից մեկն է. այն ստեղծվել է արհեստականորեն՝ աշխարհաքաղաքական զարգացումների ներքո, ինչը որևէ կերպ չի նսեմացնում նրանց ազգային արժանապատ-

վությունը: Բայց մենք պետք է հասկանանք, թե ինչպես է դա ստեղծվել: Ժողովուրդը նույնպես ձևավորման փուլում է և ունի մեծ քանակով փորձառատություններ. 800 հազար թալիշներ, 350 հազար լեզգիներ, 120 հազար ավարներ, որոնք վերջնականապես չեն դարձել ադրբեջանցի: Հետևաբար, Ադրբեջանի համար անընդունելի է, մոռացե՛ք այդ բանը, Արցախի ցանկացած կարգավիճակ իր կազմում: Նա չի գնալու դրան: Եթե Ադրբեջանի փոխարեն Նիգերիան լինի, էլի այդպես կանի, եթե նրանք հայրենասեր են: Բայց դժբախտաբար մենք ունենք մի իրավիճակ, երբ նրանց հասարակությունը համախմբված է, էլիտաներն էլ հայրենասեր են: Այո, այդ հայրենասիրությունը ծավալապաշտությամբ է դրսևորվում, բայց դա այդպես է: Հետևաբար Արցախի գոյությունը ամենամեծ վտանգն է Ադրբեջանի համար: Արցախի անհետացումն էլ հայոց պետականության համար մահվան դատաժյուր է: Սա պարզ է: Այս իրավիճակում մեզ համար հասկանալի է, անընդունելի է ցանկացած իրավիճակ Ադրբեջանի կազմում: Այո, մենք պատավոր ենք ապրել կողք կողքի՝ որպես հարևաններ, բայց իրենց կազմում անհնարին է: Հետևաբար, այս թեզը տանում ենք մինչև վերջ: Այսինքն՝ մեր արտաքին քաղաքականության մեջ ավանդական մեր կարևորագույն խնդիրները մնացել են անփոփոխ՝ ԱՀ միջազգային ճանաչում, երկկողմ հարաբերությունների զարգացում, հակամարտության կարգավորում, սրանց գումարվել է սուբյեկտայնությունը: Երկու տարի է, ինչ անընդհատ խոսում ենք սուբյեկտայնության բարձրացման մասին. Արցախը պետք է լինի սուբյեկտ: Սուբյեկտ՝ նշանակում է ինքնուրույն կարողանալ իր ճակատագիրը տնօրինել: Իսկ ինքնուրույնության կարևորագույն բաղադրիչը սկզբունքայնությունն է: Զի կարող լինել երկիր կամ մարդ-սուբյեկտ, եթե ինքն սկզբունքային չէ: Մեր սկզբունքայնության ամենակարևոր գործոնը մեկն է՝ մենք չենք լինելու Ադրբեջանի կազմում, ինչ էլ որ անեն: Եթե մենք մեր սկզբունքայնությունը ներկայացնում ենք, պատկերացրեք, որ ընդունվում է: Տեսե՛ք, թե հոկտեմբերի 30-ին Ստեփանակերտի հանրահավաքն ինչ մեծ ռեզոնանս ունեցավ աշխարհում: Իր արդյունքը տվեց: Ի դերև ելան Ալիևի բարբառացները, թե իբր Դարաբաղում 20 հազար մարդ է ապրում: Իհարկե, սա չի նշանակում, որ շաբաթ մեկ պետք է հանրահավաք կազմակերպենք: Հանրահավաքը պետք է լինի խիստ նպատակային: Դրա համար մեր քայլերը պետք է լինեն նպատակային, փորձարկումները, տարբեր բաներ շատ թանկ են նստելու մեր ժողովրդի վրա: Ուստի պետք է հստակ ներկայացնենք այն, ինչ ունենք: Ուրեմն, այդ կարևորագույն կետերն են՝ ինքնորոշման իրավունք և նրա փաստի ճանաչում, երկկողմ հարաբերությունների զարգացում, հակամարտության կարգավորում, սուբյեկտայնության պահպանում: Սրանք եղել են և կան մեր կարևորագույն ուղղությունները, որոնցով պետք է առաջ շարժվենք: Չպետք է հանկարծ գայթակղության դիմենք. Ադրբեջանն ունի թուրքական դիվանագիտություն, որն աշխարհի ամենամեծ դիվանագիտությունն է, որը աշխարհի աշխարհաքաղաքական պայքարի ամենաուժեղ դպրոցներից մեկն է, և պետք է լավ ուսումնասիրենք: Նրանք շատ հետաքրքիր խայծեր են գցում, որպեսզի մենք կուլ տանք: Օրինակ, ասում են՝ եկեք երկխոսություն ծավալենք: Ոմանք կարող են մտածել, թե դա լավ է: Բայց այդ երկխոսությունը ինչի՞ համար են երբեմն շրջանառության մեջ դնում: Ադրբեջանի կոկորդին մի մեծ փուշ կա,

որ չի կարողանում հանել. դա 1994թ. ԵԱՀԿ գագաթնաժողովի բանաձևն է, որով ճանաչվում է Արցախի սուբյեկտայնությունը, քանի որ ճանաչում է Արցախը և՛ որպես հակամարտության, և՛ որպես բանակցությունների կողմ: Այնուհետև այս որոշումները հաստատվել են 1995թ. մի շարք հարակից որոշումներով: Հետևաբար, նա փորձելու է անընդհատ այդ բանաձևը չեզոքացնել մեր ձեռքերով: Փորձելու են մեզ տանել ադրբեջանական երկխոսության: Մենք երբեք չպետք է հրաժարվենք Մինսկի ձևաչափից, անկախ նրանից՝ այդ ձևաչափը հիմա սառեցված է, թե՞ չէ, քանի որ սա միակն է, որտեղ Արցախի սուբյեկտայնությունը ճանաչվում է: Եվ ընդհանրապես, շատ կարևոր է, որ մենք ճիշտ մեկնաբանենք տարբեր փաստաթղթեր: Առհասարակ քաղաքականության մեջ գրեթե չկան հստակ բաներ. ամեն ինչ կարելի է մեկնաբանել տարբեր ձևերով: Ասենք, նույն ՄԱԿ-ի չորս բանաձևերը: Մենք մեկնաբանում ենք անում որպես Արցախի սուբյեկտայնության որոշում. քանի որ այնտեղ մշակված է՝ տեղական հայկական ռազմական ուժեր: Սա արդեն մեր սուբյեկտայնությունն է: Այսինքն՝ հարկ է շատ պրոֆեսիոնալ մոտենալ, որ հանկարծ չփոշիացնենք մեր ներուժը, քանզի մենք այդքան ներուժ չունենք: Այդ ձևաչափը մեզ համար չափազանց կարևոր է: Եվ ամենակարևորն այն է, որ Արցախը մնա իբրև արժեք հայության համար թե՛ Մայր Զայաստանում, թե՛ սփյուռքում, որովհետև առանց դրա մեր սկզբունքայնությունը կթուլանա: Եթե ողջ հայության համար Արցախը գերագույն արժեք է, աշխարհը կլսի մեզ: Եվ այս ուղղությամբ մենք պետք է աշխատենք: Սփյուռքում շատ մեծ է Արցախի վարկանիշը: Եվ սա իր ազդեցությունն է թողնում մեր աշխատանքի վրա: Հայ ժողովուրդը սփյուռքային ժողովուրդ է, դա նաև մեզ թույլ է տալիս պահել հաշվեկշիռը: 2 մլն հայ կա ԱՄՆ-ում, որոնք ամեն օր մեզ հետ են եղել այս տարիներին: Մենք իրավունք չունենք նրանց հետ հարաբերությունները խզել: Մենք իրավունք չունենք հակառուսական, հակաամերիկյան, հակաիրանական լինել, պետք է բոլորի հետ մորմալ հարաբերություններ ունենանք. առավել ևս, որ այդ հնարավորությունը կա: Կապ չունի՝ վիրավոր ես, ինչ վիճակում ես, եթե սկզբունքային ես, քեզ ուշադրություն են դարձնելու: Դրա համար մեր սկզբունքայնությունը պետք է պահենք: Անհրաժեշտ է դիմակայել ևս 2,5 տարի: Հուսով ենք, 2025 թվականից հետո ռուսական խաղաղապահ առաքելության մանդատը կերակրածով: Այն ժամանակ կարող ենք թեթև փորձարկումներ անել: Հիմա պետք է լինենք չափազանց զգույշ, չափազանց պրոֆեսիոնալ և հայրենասեր, միասնական: Դրա համար շատ ենք կարևորում այսպիսի հանդիպումները, առավել ևս, որ մեծ գիտնականներ կան այստեղ, մեծ հայրենասերներ, որոնց ասածը պետք է անպայման հաշիվի առնվի: Մենք պարզապես այլ իրավունք չունենք, քանի որ միգրացիոն սա նաև ինչ-որ տեղ առաքելություն է, որ Աստված տվել է այս սերնդին, որպեսզի ծանրագույն այս իրավիճակից դուրս բերենք մեր սուրբ հայրենիքը, որն առերեսվում է օրհասական մարտահրավերների: Եթե ճիշտ աշխատենք, բոլոր հնարավորությունները կան Արցախը փրկելու: Եթե դրանք չլինեն, մենք պետք է ազնիվ լինենք և բարձրաձայնենք, բայց քանի որ կան, մինչև վերջ պետք է կանգնենք: Իրավունք չունենք այս հողի համար իրենց կյանքը տված մեր այնքան հերոսներից հետո փոքրոգություն ցուցաբերել:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՆ ԲԱՑՈՒՄ



Նոյեմբերի 26-ին Ստեփանակերտում տեղի ունեցած՝ «Արցախյան հիմնախնդիրը արդի քաղաքական գործընթացների հոլովույթում» գիտագործնական համաժողովին, որն աչքի ընկավ մասնակիցների կողմից արված առաջարկություններով, մասնակցում էր նաև դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ, որի ներկայացրած «Արցախյան հիմնախնդիրը և Մերձավոր Արևելքը արդի աշխարհաքաղաքական զարգացումների լույսի ներքո» զեկուցումը ուշագրավ դրույթներ է պարունակում արցախյան հիմնախնդրի լուծման հնարավորությունների առումով: Ներկայացնում ենք դրանք:

ՄԵՐ ԱՆՎՏԱՆԱԳՅՈՒՄԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ Ռ. Կարապետյանի, քաջ գիտակցելով, թե մենք ինչ իրավիճակում ենք հայտնվել այս վերջին պատերազմից հետո, պետք է տասնապատկենք մեր ջանքերը և փորձենք նաև ոչ սովորական լուծումներ գտնել, միգրացիոն հնարավորություններ փնտրելու համար մայենք նաև դեպի այն տեղերը, որոնց ոչ բավարար ուշադրություն ենք դարձրել: Նրա կարծիքով, այդպիսի մի հնարավորություն է մեր անմիջական տարածաշրջանը, որ կոչվում է Մերձավոր Արևելք, ավելի կոնկրետ՝ Մեծ Մերձավոր կամ Նոր Մերձավոր Արևելք, այն տարածաշրջանը, որի մասն ենք նաև մենք: «ԽՍՀՄ փլուզումից և 44-օրյա պատերազմից հետո առաջին անգամ թուրքիայի դերի և ռազմական ներկայության փաստը, ու նաև՝ նրա կողմից անախադեպ տնտեսական կլանումը՝ հարևան Կրասսոմի պարագայում և Բաքվի վրա նրա վերահսկողության լիակատար հաստատումը տարբեր նախագծերի իրականացման միջոցով ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, որ ազդարարել է այդ Նոր Մերձավոր Արևելքի մի նոր հանգրվանի սկիզբը»,- նկատել տվեց բանախոսը: Նա թվարկում է մեզ համար այն բարենպաստ հնարավորությունները, որ կարող ենք ունենալ Մերձավոր Արևելքի հետ մեր հարաբերությունները զարգացնելու դեպքում: Նրա խոսքով՝ Մերձավոր Արևելքը մեր անմիջական անվտանգային միջավայրն է, որը պատմության ընթացքում ուղղակի և անուղղակի ազդել է Հայաստանի և Արցախի բնական կենսագործունեության ապահովման և զարգացման վրա, որին, ցավոք, Հայաստանի անկախությունից հետո բավարար ուշադրություն չի դարձվել: Այժմ մեր այսօրվա անկախատեսելի աշխարհին տարբեր որակումներ են տրվում՝ քվանտային կամ անարխիկ, ինչը պարզ ուրվագծվում է Մերձավոր Արևելքում, որտեղ տեսանելի են 4 հստակ բևեռներ: Ռ. Կարապետյանը դա կոչում է քառակուսի, որում թուրքիան է, Իրանը, Իսրայելը և արաբական աշխարհը, և նշում է դրանցից երկուսի՝ Իրանի և արաբական աշխարհի հետ մեր աշխատելու հնարավորությունները և կենտրոնաճակով դրանց վրա՝ պարզաբանում է, թե մենք ինչ կարող ենք անել այս նոր ստեղծված իրավիճակում: Արաբական աշխարհի հիմնական դերակատարներն են Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Եմիրությունները և տարածաշրջանային ծանրաքառային Եգիպտոսը: Նրա դիտարկմամբ՝ Մեծ Մերձավոր Արևելքում այդ քառակուսու մեջ պետք է նաև հաշվի առնենք Իրանի հետ հարաբերություններում Արաբական Միացյալ Եմիրությունների և Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև Եգիպտոսի պրոբլեմները, որոնք ունեն Իրանի հետ: Աճուշտ, սա էլ է մեր քաղաքականության վրա որոշակի սահմանափակումներ դնում: Այսուհանդերձ, թուրքիայի աճող ազդեցիկ, ծավալապաշտական քաղաքականությունը բախվում է Իրանի և Շոցի երկրների տարածաշրջանային և աշխարհաքաղաքական շահերի հետ: Ռ. Կարապետյանն արձանագրում է դրա արդյունքում վերջին տարիներին Եգիպտոսի կողմից ուշադրությունը Հայաստանի նկատմամբ:

ՀԱՏՈՐԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԱՅԻՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՀԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուբեն Կարապետյանը ուշադրություն է հրավիրում կրոնական գործոնի վրա՝ նշելով, որ Արցախյան հիմնախնդրում Ադրբեջանը միշտ փորձել է շահարկել իսլամական գործունը դիվանագիտական տարբեր հարթակներում: Այսպես, 1993-ին ներգրավվելով աղվան-մոջահեդներին, 2020թ.՝ սիրիացի վարձկաններին: Այս տարիների ընթացքում բազմակողմ հարթակներում Բաքվին հիմնականում հաջողվել է ապահովել իսլամական պետությունների աջակցությունն արցախյան հարցում: Սակայն երկկողմ հարթակում այլ է իրավիճակը: Եթե թուրքիայի դիվանագիտական աջակցությամբ Ադրբեջանին հաջողվել է խոչընդոտել տարածաշրջանային ամենակարևոր երկրներից մեկի՝ Սաուդյան Արաբիայի հետ Հայաստանի դիվանագիտական հարաբերությունները հաստատմանը, սպա մյուս արաբական երկրների հետ Հայաստանի հարաբերությունները զարգացում ապրեցին: Այսուհանդերձ, թեև համաձայնվելով այն հիմնադրույթի հետ, որ արցախյան հակամարտությունը կրոնական հիմք չունի, արցախյան հարցում նրանք այսօր էլ շարունակում են պահպանել որոշակի դրական չեզոքություն: Մինչդեռ այլ խնդիր են հայթուրքական հարաբերություններում Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Եմիրությունների կամ Իսրայելի մոտեցումներն ու դիրքորոշումները: Եվ այստեղ է, որ նրանք հստակ տարանջատում են մտցնում թուրքիայի և Ադրբեջանի միջև: «Թեև արցախյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ մեր ակնկալիքները արաբական աշխարհից սահմանափակ են, այնուամենայնիվ, հաշվի առնելով թուրքիայի դերի մեծացումը տարածաշրջանում ու հատկապես Իրանի վճռական կեցվածքն այդտեղ աշխարհաքաղաքական սրվող պայմաններում, հնարավորություն են ընձեռում հայկական կողմին արաբական երկրները առավել ակտիվ ներգրավելու Հայաստանում և Արցախում որպես հավասարակշռող և կայունացնող ուժ թուրքադրեջանական և Իրանի միջև»,- պարզաբանում է դիվանագետը՝ ընդգծելով, որ գլոբալ և տարածաշրջանային զարգացումները և դաշինքների նոր վերանայման իրողությունները մեզ համար հեռանկարներ են բացում՝ պայմանով, որ կարողանանք հմտորեն օգտագործել տարածաշրջանային խաղաղողների միջև առկա բազմաթուրք հակասությունները, գտնել համատեղ ընդհանուր շահերը՝ վարելով նուրբ ոսկերչական դիվանագիտություն:

գործնական հարաբերությունների հաստատման՝ հաշվի առնելով իսլամական և արաբական աշխարհում այդ երկրի ազդեցությունն ու կշիռը: Նա հիշեցնում է անցյալ տարի Սաուդյան Արաբիա՝ ԳՅ նախագահ Արմեն Սարգսյանի հետ պատմական այցի մասին, որին նաև ինքն է մասնակցել, հայկական պատվիրակության նկատմամբ ցուցաբերված բացառիկ բարձր ընդունելությունը, որտեղ հնչեցված ուղերձները վկայում էին Հայաստանի հետ հարաբերությունները զարգացնելու նրանց լուրջ տրամադրվածության մասին: Բանախոսին անհասկանալի է միայն, թե ինչու են Հայաստանի իշխանությունները, մասնավորապես, արտաքին գործերի նախարարությունը հապաղում և մեջբերում է Ալիկի՝ այս նոյեմբերի 8-ին Շուշիում արած հայտարարությունը, թե իբր մզկիթներ ոչնչացնող Հայաստանը չի կարող ընկերություն անել մուսուլմանական երկրների հետ, որ Հայաստանը ազդեցիկ քաղաքականություն է վարում ոչ միայն իրենց, այլև ողջ իսլամական աշխարհի դեմ: Ռ. Կարապետյանի մեկնաբանմամբ սրա հասցեատերը հիմնականում Իրանն էր, բայց այն նաև ուղղված էր արաբական աշխարհին ու հատկապես Սաուդյան Արաբիային, քանի որ Բաքուն քաջ գիտակցում է այն վտանգը, որը կարող է ներկայացնել Հայաստանի մերձեցումը այդ երկրի հետ: Բանախոսի ուշադրությունից չի վրիպել, որ Ադրբեջանը ջանք չի խնայում տապալելու սկսված այդ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը՝ վերջին մեկ տարվա մեջ արդեն 3 բարձրաստիճան պատվիրակություն ուղարկելով և ընդունելով նախարարի ու նախագահի մակարդակներով: Ռ. Կարապետյանը հիշեցնում է նաև Արցախյան վերջին պատերազմի ամենաթեժ ժամանակահատվածում Սաուդյան Արաբիայի կողմից արգելանք դնելը թուրքական ապարմների ներմուծման վրա այն դեպքում, երբ լուռ էր միջազգային հանրությունը:

ԿԱՐՎՈՐ ԵՄ ՄԵՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԵՐԻ ԱՍԵՐԾՈՒՄԸ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

Գիտնականը կարևոր է համարում նաև արաբական երկրներում հայագիտական նոր կենտրոնների և համալսարանական ամբիոնների ստեղծումը, ինչին մեր կողմից պետք է ամենայն աջակցություն ցուցաբերվի: Հատկապես դա արդիական է այսօր, երբ Մերձավոր Արևելքում տեսնում ենք հայ համայնքների ակնհայտ քայքայումն ու թուլացումը: Նպատակահարմար է գտնում արաբական երկրներում հայկական համայնքային կառույցների հետ համատեղ նախաձեռնել հայկական մշակութային տների հիմնադրումը, որոնք կարող են դառնալ Հայաստանի ու Արցախի հզոր քարոզչական կենտրոններ և միասնական գործունեություն ապահովել Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի համար: Անփոփելով՝ Ռ. Կարապետյանը նշեց, որ արաբական աշխարհի հետ սերտ համագործակցության հաստատումը կարող է ապահովել քաղաքական և տնտեսական լուրջ դիվիդենդներ, որոնք, անկասկած, կնպաստեն Հայաստանի տարածաշրջանային քաղաքականությանը, այդ թվում՝ Արցախյան հիմնահարցի լուծման գործում հայկական դիվանագիտության ճկունության աստիճանի բարձրացմանը, Հայաստանի ու Արցախի տնտեսական հզորացմանը, ինչը չափազանց կարևոր է թուրքական էքսպանսիայի դիմակայմանը և թուրք-ադրբեջանական տանդեմի հավասարակշռմանը Հարավային Կովկասում: «Արաբական աշխարհը ոչ միայն Մեծ Մերձավոր Արևելքի կարևոր բևեռներից է, որը նաև մեր բնական դաշնակիցն է, այլև կարող է նպաստել Հայաստանի քաղաքական ու դիվանագիտական վերադարձին մեր իսկ սեփական տարածաշրջան, ուր Հայկական բարձրակարգ դակում հազարամյակներով ապրել ու արարել է հայ ժողովուրդը»:

ՆԱԵՎ՝ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԽՆԴԻՐ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՂՐԻ ՆԵՐՎԱ ՓՈՒԼԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՐՊԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Հրայր ՓԱՇԱՅԱՆ  
Մեսրոպ Մաշտոց համալսարանի ավագ դասախոս, ք.գ.թ., դոցենտ

Հողվածում անդրադարձ է արվում իրար հետ փոխկապակցված երկու հարցի՝ Ղարաբաղյան հիմնախնդրի արդի փուլի մի քանի առանձնահատկությունների և այդ առանձնահատկություններից բխող մեր անելիքներին կամ կարգավորման հնարավորություններին:

2020 թվականի պատերազմի հետևանքով ձևավորված իրողությունները վկայում են, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը թևակոխել է նոր փուլ, որին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես աղբյուր-զանական կողմը, օգտագործելով ունեցած ձեռքբերումները, տարբեր առիթներով հայտարարում է, որ Ղարաբաղյան հակամարտությունը լուծել է ռազմական ճանապարհով, և այդ հարցն այլևս փակված է:

Մյուս կողմից, սակայն, հենց նույն Ադրբեյջանի Հայաստանի Հանրապետության ու Արցախի հայապատկան մնացած հատվածի նկատմամբ 2020թ. 44-օրյա պատերազմից հետո իրականացվող ռազմական գործողություններն ու քաղաքական ճնշումները վկայում են հիմնախնդրի առկայության մասին: Այն փաստը, որ միայն այս տարվա մարտ-օգոստոս ամիսներին ադրբեյջանական կողմը երկու անգամ ռազմական գործողություններ է ձեռնարկել Արցախի Հանրապետության հայկական մնացած հատվածի դեմ, դրա խտուրտ վկայությունն է: Իհարկե, բացի հայկական կողմից, հիմնախնդրի առկայության և նրա վերջնական կարգավորման անհրաժեշտության մասին պարբերաբար խոսում են նաև բազմաթիվ այլ պետություններ:

Այս փուլի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ տեսանելի ապագայում հայկական կողմերն օբյեկտիվորեն գրկված են ուժի դիրքից հիմնախնդիրը լուծելու հնարավորությունից: Սա իրողություն է, որի հետ չհամաձայնելը լի է արկածախնդրությամբ ու աղետալի հետևանքներով: Այն, որ ՀՀ-ն այլևս գրկված է Արցախի անվտանգության երաշխավորի երբեմնի դերակատարությունից, բազմիցս են հայտարարել երկրի բարձրագույն իշխանության ներկայացուցիչները: Իհարկե, սա բնավ չի նշանակում, թե մենք չպետք է քայլեր ձեռնարկենք մեր պաշտպանական ունակություններն ու կարողություններն ամրապնդելու համար: Ընդհակառակը, պետք է այդ ուղղությամբ անընդհատ աշխատել, ուղիներ գտնել եղածը պահպանելու, միաժամանակ առանց ավելորդ պաթոսի անաղմուկ առաջ շարժվելու համար՝ ունենալով հստակ տեսլական:

Այսինքն՝ ուզենք թե չուզենք, 2020թ. պատերազմի հետևանքով հիմնախնդրի կարգավորման ոչ ուժային տարբերակն է մեզ համար առաջնային պլան մղվել: Դա նշանակում է, որ ներկա փուլում մեր անելիքներն առավելապես պետք է ուղղվեն քաղաքական-դիվանագիտական և իրավական հարթություններ՝ փափուկ ուժի ընձեռած մեթոդներով հիմնախնդիրը ցանկալի ուղղությամբ առաջ տանելու համար: Այլ տարբերակ այս պահին պարզապես հնարավոր չէ:

Այժմ՝ քաղաքական-դիվանագիտական և իրավական խնդիրների ու անելիքների մասին: Իրավական առումով հիմնախնդրի կարգավորումը, կարելի է ասել, մեզ համար հակամարտության կարգավորման ամենանպաստավոր ու ձեռնտու տարբերակն է, քանի որ, ինչպես գիտենք, միջազգային իրավունքի տեսանկյունից գոյություն չունի որևէ փաստաթուղթ, որը կարող է ապացուցել Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեյջանին պատկանելությունը: Բացի դրանից, միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներից մեկը՝ ինքնորոշման իրավունքը, նույնպես ընձեռում է այդ հնարավորությունը: Այս դեպքում, բնականաբար, հարց է ծագում՝ ո՞րն է խնդիրը, ինչո՞ւ մենք, օրինակ, Կոստվոյի պես միջազգային դատարան չենք ներկայացնում իրավական փաստաթղթերի ողջ փաթեթը և լուծում հիմնախնդիրը: Բանն այն է, որ չնայած այդպիսի հզոր իրավական հիմքերի առկայությանը, անցած երեք տասնամյակներում մենք այդպես էլ չենք մշակել Ղարաբաղյան հակամարտության իրավական փաստաթղթերի փաթեթը, քանի որ ոչ միայն դրա համար անհրաժեշտ մասնագետներ չենք պատրաստել, այլև դրա անհրաժեշտությունն ի սկզբանե չենք էլ գիտակցել: Այլապես գաղափարի առկայության դեպքում մշտապես կարելի է նպատակահամարեցնել համապատասխան ուղիներ ու միջոցներ գտնել:

Որպես օրինակ՝ այստեղ տեղին է անդրադառնալ ՀՀ-ի և ԱՀ-ի՝ ՄԱԿ-ին առնչված հարցին, կապված տարածված թյուրըմբռման հետ, թե իբր հետխորհրդային բոլոր հանրապետությունները, մերձբալթյան երկրներից բացի, ՄԱԿ են ընդունվել մեկ ընդհանուր որոշմամբ՝ որպես ԽՍՀՄ փլուզման փաստի արձանագրում: Խոսելով տարածքային ամբողջականության և զզգերի ինքնորոշման իրավունքի միջև գոյություն չունեցող, բայց թվացյալ հակադրության մասին, շատերն են, այդ թվում՝ մեր քաղաքական գործիչներն ու փորձագետները, Արցախի՝ այսպես ասած, Ադրբեյջանի պատկանելության մասին թեզը հիմնավորում ՄԱԿ-ի՝ որպես միջազգային անենահեղինակավոր ու պետությունների ճանաչումը հաստատող կառույցի կողմից Ադրբեյջանին ու Հայաստանին կառույցին անդամակցելու հանգամանքը: Մինչդեռ փաստն այն է, որ բոլոր նախկին միութենական հանրապետությունները ՄԱԿ-ի անդամ են դարձել առանձին-առանձին ընդունված բանաձևերով, թեև անդամակցության ընթացակարգը, իհարկե, բոլորի համար եղել է նույնը: Սակայն Ադրբեյջանի պարագայում գոյություն ունի կարևոր մի նրբություն, որն առանցքային նշանակություն ունի՝ ԱՀ տարածքային ամբողջականության, և՛ ԼՂՀ անկախության համատեքստում:

Այսպես, 1992թ. հունվարի 29-ին ընդունված (S/23496) բանաձևով Անվտանգության խորհուրդը որոշում է Հայաստանի անդամակցությունը և «գոհունակությամբ ընդունել... ՄԱԿ-ի սկզբունքների և նպատակներին հետևելու Հայաստանի պատրաստակամությունը»:

Իրավիճակն այլ է Ադրբեյջանի պարագայում:

1992թ. փետրվարի 14-ին ընդունված (S/23597) բանաձևով ԱԽ-ն տառաջիորդն ընդունում է նոր անդամակցությունը՝ «ընդհանրականության սկզբունքի ուժեղացման [նպատակով]» («further strengthening of the principle of universality»), ինչը uti possidetis juris՝ սովորության սկզբունքի ակնհայտ հավաստիացումն է, որն ընդհանրաբար կիրառվել է նաև ապագադրությամբ համատեքստում. «Այլ կերպ ասած, ըստ քաղաքական գիտությունների թեկնածու Յ. Նիկողոսյանի, անուշադրության մատնելով նոր կազմավորված հանրապետությունը հենց Ադրբեյջանի օրենսդիր իշխանության կողմից 1918-1920թթ. մուսավաթական հանրապետության իրավահաջորդ հռչակելու փաստը՝ ՄԱԿ-ը ճանաչել է Ադրբեյջանի անդամակցությունը որպես ինքն իրենով ենթադրվող փաստ՝ ԽՍՀՄ

փլուզման արդյունքում: Բազում այլ փաստարկներից բացի, թերևս, սա է նաև այն կարևոր փաստը, որ ԼՂ ժողովրդի անկախության պայքարը կարելի է դիտարկել ապագադրությամբ մեթոդներով և ենթադրաբար»:

Սակայն միայն իրավական փաստերին ու փաստարկներին տիրապետելը բավարար պայման չէ հիմնախնդիրն արդարացիորեն լուծելու համար: Եթե նույնիսկ մի պահ պատկերացնենք, որ մենք տիրապետում ենք այդ բոլոր իրավական հիմնավորումներին, ապա հարց է ծագում՝ կարո՞ղ ենք մեր խնդիրներն այնպես մատուցել միջազգային հանրությանն ու գերտերություններին, որպեսզի դրանք ընկալվելի լինեն նրանց համար: Այս դեպքում ևս անհրաժեշտ են քաղաքական-դիվանագիտական ասպարեզում դրանք ճիշտ ներկայացնելու ունակություններ ունեցող մասնագետներ: Բանն այն է, որ ինչպես անհատական, այնպես էլ հատկապես միջազգային հարաբերություններում հաճախ կարևորը ոչ թե զուտ ճշմարտությունը ներկայացնելն է, այլ այն ներկայացնելու տեղն ու ձևը, թե ինչ լեզվով ենք մենք հարաբերվում տարբեր երկրների հետ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր շահերը, սկզբունքներն ու առաջնահերթությունները:

Միայն այս դեպքում է հնարավոր ձեռնարկել հաջորդ քայլը՝ քաղաքական-դիվանագիտական ակտիվ գործունեություն, որն ուղղված կլինի միջազգային ասպարեզում համակիրների ու բարեկամների ձեռքբերմանը: Բայց այստեղ էլ, չգիտես ինչու, մեզանում տարածված է թյուրըմբռում, թե, լինելով փոքր երկիր, մենք գրկված ենք ակտիվ դիվանագիտություն իրականացնելու հնարավորությունից: Հետևաբար, դիվանագիտությունն այն ուղին չէ, որի վրա պետք է հիմնվել մեր խնդիրները լուծելու համար: Այնինչ փորձը ցույց է տալիս, որ ակտիվ դիվանագիտությունն առավելապես անհրաժեշտ է փոքր երկրներին, քանի որ խոշոր տերություններն իրենց իսկ հզորությամբ արդեն ունեն ծանրակշիռ դերակատարություն միջազգային ասպարեզում: Սակայն 90-ականներից Ղարաբաղյան հիմնախնդիրը հռչակելով քաղաքական, այս բնագավառում ևս մենք ոչ միայն համապատասխան մասնագետներ չենք պատրաստել, այլև դրա անհրաժեշտությունը ըստ արժանվույն նույնպես չենք գիտակցել: Տեղին է ինչելի ՀՀ առաջին նախագահի՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը վեց հոգու տիրապետելու մասին հայտարարությունը: Իհարկե, հետագա տարիներին հանդես են եկել առանձին փորձագետներ ու քաղաքագետներ, որոնք զբաղվել են դրանով, սակայն այդպես էլ հիմնախնդիրը ինստիտուցիոնալ մակարդակ չի բարձրացվել, և մեր գիտակրթական հաստատությունները անհրաժեշտ մասնագետներ չեն պատրաստել: Իհարկե, կարելի է ասել, գոյություն ունի արտաքին գործերի նախարարությունը, որի հիմնական գործառնությունը հենց միջազգային ասպարեզում երկրի խնդիրների ներկայացումն ու պաշտպանությունն է, այլ պետական կառույցներ՝ հայլև, և այլև: Սակայն արդի պետությունների՝ այդ թվում նաև աշխարհի առաջատարը համարվող ԱՄՆ-ի տվյալ ոլորտի փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ ունենալով հզոր դիվանագիտություն, շարունակում են օգտվել գիտակրթական կենտրոնների ծառայություններից:

Այդ մասին աղաղակող վերջին երկու ամենաթարմ օրինակը: Բոլորս տեղյակ ենք ՀՀ վարչապետի՝ գնեքի գնման հետ կապված խնդիրների վերաբերյալ հայտարարությանը և այն մասին, ինչպես նոյեմբերի 23-ի ՀԱՊԿ գագաթնաժողովը վկայեց, որ ռազմաքաղաքական այն կառույցը, որի անդամ է Հայաստանը, պատրաստ չէ նույնիսկ քաղաքական աջակցություն ցուցաբերելու մեր երկրին: Սա ոչ այլ ինչ է, քան հերթական ահագանգ քաղաքական-դիվանագիտական ոլորտում առկա լուրջ խնդիրների վերաբերյալ, որը, բնականաբար, տարիների բացթողումների արդյունք է:

Այս համատեքստում հարկ է խոստովանել, որ 2020 թվականի պատերազմի պարտությունը լայն իմաստով հայկական զույգ պետությունների պարտությունն էր ոչ միայն ռազմական ոլորտում, այլև քաղաքական, դիվանագիտական, իրավական, տեղեկատվական և մյուս բոլոր ոլորտներում, այդ թվում նաև՝ գիտակրթական ոլորտում, որը վերոնշյալ բոլոր բնագավառների հիմնասյունն է: Գաղտնիք չէ, որ ինչպես յուրաքանչյուր պայքարում, այնպես էլ պատերազմի ժամանակ բախվում են ոչ միայն գիտատեսակներն ու բանակները, այլև կամ զույգ ամենից առաջ՝ գաղափարներն ու ռազմավարությունները: Դա է պատճառը, որ նախքան պատերազմի դաշտում հակառակորդին պարտության մատնելը ժամանակակից պետությունները քայլեր են ձեռնարկում մյուս ոլորտներում թշնամական երկրի թուլացման և քայքայման ուղղությամբ: Վերջապես պատերազմում բախվում են նաև դրանց ղեկավարումն իրականացնող պատասխանատուների մտահղացումներն ու գիտելիքները, որտեղ հաղթում են առավել պատրաստվածներն ու հնարամիտները: Այս իմաստով պատերազմը նաև կամ նույնիսկ գաղափարների պայքար է՝ բառի լայն իմաստով:

Ամփոփելով ասելիքը՝ գալիս ենք այն եզրակացության, որ տեսանելի ապագայում ունենալով ադրբեյջանա-թուրքական տանդեմի նման հակառակորդ, մենք գրկված ենք կոշտ ուժով հիմնախնդիրը լուծելու հնարավորությունից: Այս դեպքում անհրաժեշտ է հնարավորինս ակտիվացնել փափուկ ուժի մեթոդներով հիմնախնդրի լուծմանն ուղղված քայլերը, որոնցից մեր կարծիքով առաջնային են համարվում քաղաքական, դիվանագիտական և իրավական ուղիները: Իսկ ունե՞նք մենք այդ հնարավորությունները: Պետք է ասել, որ այդպիսի հնարավորություններ որոշակիորեն կան, բայց բնականաբար դրանք բավարար չեն: Հետևաբար, այդ բացը լրացնելու համար հարկ է համապատասխան մասնագետներ պատրաստել, ուսուցանել ներկա սերնդին, որը ոչ միայն տվյալ ժամանակահատվածում, այլև ապագայում հնարավորություն կտա հիմնախնդիրը համակողմանիորեն ներկայացնել միջազգային հանրությանը: Նման խոսակցության դեպքում սովորաբար հարց է ծագում՝ ունե՞նք մենք համապատասխան մասնագետներ ու հնարավորություններ: Ինչպես արդեն նշեցի, գաղափարի կամ նպատակի առաջադրման դեպքում միշտ էլ կարելի է գտնել դրանց լուծման ուղիներն ու մեխանիզմները: Արդի իրողության պայմաններում խնդրի լուծման այլ տարբերակ գոյություն չունի: Պարզ օրինակ բերեմ, որին հավանաբար յուրաքանչյուրս ենք առնչվում մեր առօրյա կենսագործունեության ընթացքում: Երբ մենք մեր կյանքում որևէ նախաձեռնություն սկսելու որոշում ենք կայացնում, այնպես չէ, որ մշտապես առկա է լինում դրա իրականացման համար անհրաժեշտ ողջ գործիքակազմը: Բայց հենց կարևոր որոշում ենք կայացնում, այսինքն՝ ունենում ենք դրա իրականացման համար անհրաժեշտ վճարակառույցներ և գաղափար, մենք սովորաբար գտնում ենք այդ նպատակին հասնելու միջոցներն ու հնարավորությունները:

Բայց նույնիսկ հարցը միայն դրանում չէ:

Այսօր մեզանում շատ է խոսվում այն մասին, որ մենք անորոշության մեջ ենք, չկա հստակ տեսլական Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, ասել է թե մեր ազգաբնակչության՝ սեփական հայրենիքում ապելու ապագայի համար: Եվ երկի թե յուրաքանչյուրս էլ հեռուստացույցով հետևում կամ անձնական շփումների ժամանակ մոտավորապես նույն՝ «ի՞նչ կլինի» հարցն ենք ուղղում ինքներս մեզ, դիմացինին, այդ թվում նաև՝ հիմնախնդրին շատ թե քիչ տիրապետող փորձագետներին: Ակնկալելով որևէ կոնկրետ պատասխան, մենք սովորաբար ստանում ենք ընդհանրական, երբեմն ոչինչ չասող պատասխաններ:

ԱՆՍԱԿ ԿՆՐՈՍՆԵՐ

ՀԱՎԵՐԺ ՆԵՐԿԱ

Նոյեմբերի 10-ին մարդաշատ էր Իվանյանի համայնքային կենտրոնը: Այդ օրը այն հազեցած էր մեր համայնքի նահատակված հերոսների կենդանի շնչով, որոնցից շատերը դպրոցի շրջանավարտներ են:

Ներկա էին Ասկերանի ջրջվարչակազմի ղեկավար Հանկետ Ապրեսյանը, շրջվարչակազմի աշխատակազմի ԿՍ բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը, դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, զոհված տղաների հարազատներ, ուրիշներ:

Հուշ-ցերեկույթը կրում էր «Ձեզ բացակա չենք դնի» խորագիրը: Այն կազմակերպել են ՄԿԱ ԱՄԻ Մայիլյանը, ԳԱԿ Լիլիթ Գասպարյանը, փոխտնօրեն Ռոզա Գրիգորյանը և հայոց լեզվի ուսուցչուհի Անուշ Բեգլարյանը:

Ներս բերվեց ԱՅ պետական դրոշմը, հնչեց օրհներգը, ներկաները լռության թուփով հարգեցին Արցախյան պատերազմներում զոհված քաջորդիների հիշատակը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Անուշ Բեգլարյանը: Նա դափնե իրավիճակում դպրոցի կրտսեր աշակերտներին, որոնք աղոթք շնջալով՝ մոմեր վառեցին մեր նվիրյալների նկարների վահանակի առաջ: Իսկ ավագները ծաղիկներ դրեցին և խոնարհվեցին նրանց առջև: Հուզիչ և իմաստալից էր այդ պահը, հային հարիր, մատաղ սերունդը գլուխ էր խոնարհում մարտիրոսված հերոսների առջև: Ողջ միջոցառման ընթացքում դափնե թևածում էր հայրենասիրության ու հպարտության ոգին: Մատաղ ու երիտասարդ սերունդները միախառնվել էին իրար և իրենց միասնական խոսքն էին ուղղում բոլորին: Ցավը շատ խորն է, քանզի համայնքի նվիրյալ զավակներին հասարակությունը ճանաչում էր անձամբ, ու նրանց մասին անցյալով խոսելը շատ դժվար էր:

Համայնքի առաջին գոհը ԱՅ ՊԲ սպա Գարիկ Գուրգենի Ավանեսյանն է, որը 2016թ. մարտին խոցվել էր թշնամու գնդակից:

Ապրիլյան քառօրյա պատերազմում հերոսաբար ընկավ դպրոցի սան, ԱՅ ՊԲ փոխգնդապետ Օնիկ Կարոյի Գրիգորյանը, որն աշխատանքային մկրտությունը ստացել է հարազատ կրթօջայի ուղիով: Այժմ դպրոցը կրում է մեր հերոսի անունը:

2020 թվականի չարագույստ պատերազմը, ցավոք, համալրեց մեր նահատակված սաների շարքերը: Միջոցառման մասնակիցները անուն առ անուն հիշեցին նրանց: Իսկ տեսա-հոլովակները պատմեցին նրանց մասին:

**Արմեն Ավետիսյան**  
ԱՅ ՊԲ սպա, սկզբունքային ու նպատակակազմ, մորթաբուխ հրամանատար, որն անչափ նվիրված էր զինվորականի մասնագիտությանը և նահատակվեց հանուն հող-հայրենի: Ձոհվել է հոկտեմբերի 9-ին Մատաղիսում:

**Արտակ Ավետիսյան**

Հիպոկրատի երդմանը հավատարիմ, իր գործի նվիրյալ: Նա ընկավ իր կոչմանը հավատարիմ մնալով, մարտի դաշտում վիրավոր զինվորի կյանքը փրկելու ժամանակ: Ձոհվել է հոկտեմբերի 27-ին Մարտակերտում:

**Արսեն Արամի Արզումանյան**  
ԱՅ ԱԱԾ սպա, որն անմնացորդ նվիրված էր իր գործին, անչափ ընկերասեր էր ու բարի: Մասնակցելով ռազմական բազմաթիվ օպերացիաների՝



հերոսաբար նահատակվեց 2020թ. նոյեմբերի 3-ին Սղնախի մարտերում:

**Արտակ Յուրիի Միրզոյան**  
ՊԲ ժամկետային զինծառայող, բարեխիղճ ու համեստ, որը դեռ նոր էր ոտք դրել զինվորական ծառայությանը: Նահատակվել է հոկտեմբերի 23-ին Մատաղիսի մարտերում:

**Գուրգեն Գառնիկի Մնացականյան**  
Կամավորական, որը գթասրտության ու հայրենասիրության ամբողջական կերպար էր: Առանց երկմտելու նետվեց



թեժ առաջնագիծ հարազատ Ավետարանոցը պաշտպանելու և նահատակվեց հոկտեմբերի 30-ին Շուշիի մատույցներում:

**Արկադի Քաջիկի Շահբազյան**  
Կամավորական, լրջմիտ ու կամային բարձր որակներով անձնավորություն: Նա հարյուրավոր վիրավորներ տեղափոխելով ռազմաճակատից՝ նահատակվեց իր ծննդյան օրը՝ նոյեմբերի 7-ին, Շուշիի մատույցներում:

**Կարեն Դավիթի Բաղդասարյան**  
Կամավորական: Դժվարին մանկություն և պատանեկություն ապրած երիտասարդ, որը փորձում էր իր համար ստեղծել բարեկեցիկ կյանք: Չհասցրեց ճաշակել ընտանեկան օջախի ջերմությունը: Հերոսաբար նահատակվել է հոկտեմբերի 9-ին Ֆիզուլիում:

**Սասուն Անդրանիկի Թորոյան**  
Կապուտայա, գեղեցկադեմ, համեստ ու աշխատասեր երիտասարդ, որը դարձավ թուրք-ազերու սանձազերծած 44-օրյա պատերազմի անմեղ զո-

հերից մեկը:

Հիշեցինք նաև համայնքի մյուս քաջորդիներին՝ Արթուր Թորոյանին, ութ զավակների հայր Սերյոժա Դեմիրճյանին, ԱՅ ՊԲ սպա Արմեն Շահնազարի Աղաջանյանին, որը հայտնի էր «Ճյապա» անունով: Նա ուղևորվեց ծառայությանը հայրենիքից հեռավոր պատերազմների մասնակից: Նահատակվել է հոկտեմբերի 9-ին Ֆիզուլիում: Այժմ ՊԲ շարքերը համալրել են նրա երկու զավակները:

Իր սրտի խոսքը հայրենասիրական երգերի միջոցով ասաց 10-րդ դասարանի աշակերտ Դավիթ Ջահանգիրյանը: Դպրոցականների ելույթները ոգեշնչող ու պարտավորեցնող էին: Այսպիսի սերունդ ունեցող երկիրը իրավունք չունի վիատվելու, նահանջելու, մեջքը ծռելու: Այս արհավիրքն էլ կանցնի, և մենք կվերադարձնենք մեր կորցրածը: Ավա՛ղ, կորցրած կյանքերը հետ վերադարձնել անկարելի է: Մենք մեր հաղթանակով հանգստություն կբերենք նրանց հոգիներին, ու երկնքից նրանց աստղերը էլ ավելի վառ կփայլեն:

Փոքրիկները, խաղաղության աղավաղները բաց թողնելով դեպի երկինք, հաստատեցին խաղաղության կարևորությունը Արցախ աշխարհի համար: Նրանց ճախրանքը հույս ու հավատ էր ներշնչեց ներկաներին: Վերջում հերոսածին մայրերին ու հարազատներին աշակերտները ծաղկեփնջեր նվիրեցին: Միջոցառման ողջ ընթացքում տեսա-հոլովակում մեր տղաների ժպտերես դեմքերն էին, որոնք ասես պատգամում էին շարունակել իրենց կիսատ թողած գործը, ցանկանում էին սաստել արտասովոր ծնողներին, քույրերին, սիրածներին, իրենց դասավանդած ուսուցիչներին, որ չլացնեն: Նրանց դուր չեն գալիս մեր տխուր աչքերը, նրանք ուզում են մեզ տեսնել ուժեղ ու հավատով լեցուն, անկախ բոլոր հանգամանքներից: Դա են պահանջում մեզից նրանց չապրած տարիները:

*Սրբեք Ձեր աչքերը, հերոսածին մայրեր,*  
*Թող թշնամին երբեք չտեսնի Ձեր արցունքախառն դեմքերը,*  
*Սեղմեք Ձեր ատամները, հոգու ցավը,*  
*Հպարտացեք, որ Ձեր դաստիարակած որդիները օրինակ են ծառայում սերունդների համար:*

Այսօր դպրոցի փառքի սրահում մեր աշակերտներն ամեն օր տեսնում են Օնիկին, Կարենին, Արսենին, Գուրգենին, Արտակին, Արկադիային, Խաչատրյան եղբայրներին, Արթուրին, Սասունին ու Սերյոժային և փորձում իրենց օրինակելի վարքով և ուսմամբ արժանի լինել նրանց սխրանքին:

Այդպես է հիմա, այդպես է լինելու հավերժ:

**Մարիետա ՇԱՆԱԶԱՐՅԱՆ**

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՆՏԵՂԻ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իհարկե կարելի է պնդել, որ հիմնախնդիրն ինքը և **5** աշխարհաքաղաքական իրադարձություններն առհասարակ այնքան բարդ են, որ դրան հստակ պատասխանել հնարավոր չէ: Բայց դա միայն մեղալի մի կողմն է: Մյուս կողմում մասնագիտական համապատասխան կարողությունների տիրապետող մասնագետների համախմբի բացակայությունն է, որոնք պետք է համակողմանիորեն ուսումնասիրեն և ներկայացնեն համապատասխան առաջարկություններ: Համեմատության մեջ ասած, պատկերացնենք, որ ունենք ծանր հիվանդ, որին պետք է բուժել, բայց նրան հետազոտելու և ըստ այդմ համապատասխան դեղատոմս առաջարկելու փոխարեն զբաղվենք ինքնաբերական կամ ժողովրդական բժշկությամբ՝ ակնկալելով հապշտապ բուժում: Մենք հասկանում ենք, որ այդպես խնդիրը լուծել հնարավոր չէ:

Բայց եթե նույնիսկ բժշկության կամ ցանկացած այլ ոլորտի զարգացման նպատակով կարող ենք մասնագետներ վերապատրաստել աշխարհի առաջատար երկրներում, ապա Ղարաբաղյան հիմնախնդիրն տիրապետող համապատասխան մասնագետների դեպքում մենք զրկված ենք մասն հնարավորությունից: Իհարկե, ցանկության դեպքում կարելի է հիմնավորել, որ հիմնախնդիրը միջազգային հարթակներում ներկայացնելու նպատակով մենք կարող ենք համապատասխան փաստաբաններ վարձել կամ արտերկրում դիվանագետներ պատրաստել: Սակայն այս դեպքում անհրաժեշտ են ոչ միայն լուրջ ֆինանսական հնարավորություններ, այլև ռիսկեր՝ կապված այլ հանգամանքների հետ, օրինակ՝ թեկուզ նրանց անաչառության կամ կողմնակալության, կամ մենք ունենք բազմաթիվ դեպքեր, երբ հենց դիվանագիտական առաքելությունն ավարտած դեսպաններն են մնացել դեսպանընկալ երկրում, ինչը, խոստովանենք, հեռու չէ մեզափոխ:

Եթե դարձյալ վերադառնանք այն հարցին, թե այնուամենայնիվ մենք ինչպես ենք պատկերացնում հարցի լուծումը, ապա նորից հայտնվելու ենք ի շրջանս յուր: Բանն այն է, որ արդի աշխարհում ծառայած խնդիրները լուծելու համար պետք է համապատասխան մասնագետներ պատրաստել, ովքեր հիմնախնդրի ամենատարբեր տեսանկյունների վերաբերյալ հետազոտություններ կիրականացնեն և կներկայացնեն համապատասխան առաջարկություններ: Հեշտ գործ է դա, իհարկե ոչ, եթե հեշտ լինեք մենք համալսարանների՝ տարիներ շարունակ ամենաիդեալական և ամենամարդաշատը համարվող իրավագիտություն մասնագիտությունից գոնե տարեկան մեկ միջազգային իրավունքի մասնագետ կպատրաստե՞ք: Եվ այն փաստը, որ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի, ԿԳՄՍ նախարարության և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից ս. թ. նոյեմբերի 25-26-ին անցկացված գիտաժողովական համաժողովում, որի ընթացքում առաջին անգամ ներկայացվել է սույն հոդվածը, ներկա չէր գեթ մեկ իրավաբան, որը կփորձեր իրավական տեսանկյունից ներկայացնել խնդիրը և մեր այսօրվա անելիքները, դրա խոսուն վկայությունն է:

Հնարավոր է այսօր կարճ ժամանակում շտկել բացթողումները՝ ոչ, բայց կա՞ հիմնախնդրի կարգավորման այլ տեսլական, քան մեր մատնանշած ուղիներն են, կարծում են նույնպես՝ ոչ: Համեմայնդեպս էթնոքաղաքական հակամարտությունների պատմության ուսումնասիրությունները ցույց են տալիս (էթնոքաղաքական է նաև արդեջանա-դարաբաղյան հակամարտությունը), որ դրանք սովորաբար կարգավորվում են ռազմական, քաղաքական և իրավական ուղիներով, երբեմն էլ՝ դրանց համատեղմամբ: Այդ մասին են վկայում ինչպես Հարավային Օսիայի և Աբխազիայի (որոնք իրենց ներկա լուծումը ստացել են ռուս-վրացական պատերազմի հետևանքով), այնպես էլ Կոսովոյի (որն իր ներկա լուծումը ստացել է առավելապես իրավաքաղաքական ճանապարհով) և այլ էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման դեպքում:

Իհարկե վերոնշյալին հակադարձելու համար միշտ էլ կարելի ամենատարբեր պատճառաբանություններ բերել և շատերը կարող են հիմնավորել, թե դրա ժամանակը չէ, որ դրա փոխարեն ելենք զբաղվենք հասարակությունում առկա սոցիալ-տնտեսական բազմաբնույթ խնդիրներով և այլն, և այլն: Բայց եթե մենք ցանկանում ենք, որ մեր ժողովուրդը բազմաթիվ խնդիրների տակ կքած չմոռանա իր ինքնությունն ու չհամակերպվի կորուստների հետ, եթե ցանկանում ենք տարիներ հետո նորից ոտքի կանգնեք մեր իրավունքների ու ազատության համար, իսկ միջազգային հանրությունը ընկալելի վերաբերմունք դրսևորի մեզ ու մեր խնդիրների նկատմամբ, եթե ցանկանում ենք վերջնականապես չկորցնել Արցախը մենք պետք է այս ճանապարհն ընտրենք:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՍՈՒԲՅԵԿՏԸ ԺՈՂՎՈՒՐՆ Է



Արցախի ռազմավարական հետազոտությունների անկախ կենտրոնի նախաձեռնությամբ նոյեմբերի 23-ին կազմակերպվել է Կլոր սեղան Ա7 սահմանադրության փոփոխության նախագծի կապակցությամբ: Այդ մասին հայտարարությունը տրվել էր օրեր առաջ այն բանից հետո, երբ Ա7 Ազգային ժողովի՝ երկրորդ ընթերցմամբ ընդունված Սահմանադրության 162-րդ հոդվածում փոփոխություն կատարելու նախագիծը նոյեմբերի 17-ին Ա7 Գերագույն դատարանի կողմից ծանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող: Նոյեմբերի 22-ին Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանն իր մտահոգություններն է հայտնել Գերագույն դատարանի որոշման կապակցությամբ:

Կլոր սեղանի անցկացման օրը, այն սկսելուց առաջ հայտնի դարձավ, որ Ա7 նախագահ Արայիկ Չարությունյանը դիմել է Ազգային ժողովի նախագահին՝ Սահմանադրության փոփոխության նախագիծը վերադարձնելու նպատակով՝ այն հանելով շրջանառությունից:

«Նման որոշման համար պատճառ են հանդիսացել Արցախի Հանրապետության սահմանադրական փոփոխության նախաձեռնության իրացման ընթացքում հնչած տարաբնույթ քաղաքական գնահատականները, ինչը կարող էր ներքին պառակտման ու լարվածության հերթական պատճառ դառնալ»:

Ըստ երկրի ղեկավարի՝ ներքին համերաշխությունը ու միասնականությունը մեր ամենագործող ուժն են և ամենակարևոր երաշխիքը մեր պետականաշինության այս դժվարագույն փուլում առկա մարտահրավերներին արժանապատվորեն դիմագրավելու գործում:

Հանրապետության նախագահը նախաձեռնելու է լրացուցիչ քաղաքական խորհրդակցություններ սահմանադրական փոփոխությունների հետագա ընթացքի շուրջ:

Փաստորեն խնդրո առարկա հարցը հանվեց օրակարգից: Այնուամենայնիվ, Ռազմավարական հետազոտությունների անկախ կենտրոնը կլոր սեղանը անցկացրեց ոչ միայն այն բանի համար, որ մարդիկ արդեն ներկայացել էին քննարկման, այլև, ինչպես ասաց Կենտրոնի տնօրեն Ղարիբ Բաբայանը, սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ քննարկումները մնում են օրակարգային, քանի որ դա այսօր ճակատագրական հարց է. «Մեր երկրում, չգիտես ինչու, թեթևամտորեն են մտնում երկրի գլխավոր օրենքին՝ Սահմանադրությանը, որից ածանցվում են պետության մյուս բոլոր օրենսդրությունները: Դա շատ կարևոր, նուրբ նյութ է, և պետք է շատ զգուշորեն վերաբերվել դրան: Բայց մենք տեսնում ենք, որ մեզ մոտ կարող է Սահմանադրություն գրվել ինչ-որ մեկի համար, որ որոշ ուժեր դրանով ցանկանում են ամբողջ իշխանությունը յուրացնել: Մի խոսքով, այնպիսի երևույթներ, որոնք առաջացրել են մտավորականների մտահոգությունները: Ժողովրդի գերակշիռ մասն անտեղյակ է, թե ինչ է տեղի ունենում: Կարծես իշխանությունը մի կյանքով է ապրում, ժողովուրդը՝ մեկ այլ: Ցավոք, այս 30 տարիների ընթացքում դա հանգեցրել է այն բանին, որ մտավորականությունը վախենում է իր կարծիքը հայտնել, համոզես գալ մի ինչ-որ հարցի մասին և գրկվել է ժողովրդի խիղճը լինելու իր հիմնական իրավունքից: Սակայն այս վերջին պատերազմում կրած պարտությունից հետո մեր ժողովուրդն այլևս չի լռում. քաղաքացիական հասարակությունը սկսել է ցույց տալ իր հնարավորությունները»:

Կլոր սեղանի մասնակիցներն իրենց կարծիքը հայտնեցին Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ:



Արարատ ՂԱՆԻԵԼՅԱՆ, Ա7 արդարադատության նախկին նախարար:

Ընդհանրապես, սահմանադրական փոփոխությունները երբեք չպետք է դառնան քաղաքական պայքարի միջոց: Դա՝ առաջին: Երկրորդ, եթե երկրում ճգնաժամային իրավիճակ է, լինի դա սոցիալական, տնտեսական, քաղաքական, առավել ևս մեր այսօրվանը, երբ կան ռազմավարական բազմաթիվ խնդիրներ, ապա Սահմանադրությունը փոփոխության չի ենթարկվում, քանի որ երբ խոսում ենք իշխանությունների տարանջատման մասին (իսկ այդ նախագծով նախատեսվում էր, որ լիազորությունների մի մասը պետք է տրվի Արցախի խորհրդարանին), առաջին հերթին պետք է երկրում ձևավորված լինի գործող քաղաքական համակարգ: Խորհրդարանը պետք ունենա բարձր դիրք՝ օժտված պառլամենտարիզմի տարրերով: Եվ եթե մեր իրականությունում դա չկա և թե երբ կլինի՝ պարզ չէ, ուրեմն, հակակշիռները չեն գործում:



Ռաֆայել ՍԱՐՏԻՐՈՆՅԱՆ, փաստաբան:

Տիեզերական պարադոքս չէ՝ հասկանալու համար, թե ինչ է տեղի ունեցել այդ գործընթացում. Աժ-ն նպատակ ուներ ձեռք բերել քաղաքական իշխանության մեծաշնորհ ունենալու տարբերակ: Հարց է առաջանում. ինչո՞ւ Գերագույն դատարանը կայացրեց որոշում նախագիծը Սահմանադրությանը համապատասխանելու հարցում, երբ ակնհայտ է, որ այդ փոփոխությունները ժողովրդավարական կառավարմանը հակասող են: Սա խոսում է այն մասին, որ մեր երկրում իշխանությունների տարանջատման սկզբունքն ըստ էության գոյություն չունի: Եթե գոյություն ունենար, Գերագույն դատարանը կգործադրեր

իր զսպման մեխանիզմը պետական իշխանության կողմից ինքնիրավ գործողություններ կատարելու դեմ արդարադատության իր գործառույթը: Իսկ դա նշանակում է, որ մեր երկրի ներսում կան բավականին խորքային խնդիրներ: Ես այս ամենը դիտում եմ մեր երկրի անվտանգության համատեքստում: Ինչո՞ւ է դա արտահայտվում: Երբ մարդ տեսնում է, որ պետական մարմինը կամայական գործողություններ է կատարում կամ որոշումներ ընդունում, չի կարող հարգանք ունենալ պետության նկատմամբ: Իսկ մարդը իր խիզախությունները մարտի դաշտում կատարում է պետության նկատմամբ իր հարգանքին համաչափ: Դրանում են ես տեսնում մեծագույն վտանգը և գտնում եմ, որ այսուհետ ևս պետք է շարունակել աշխատանքը այս ուղղությամբ, որովհետև մենք չունենք ավելի գերագույն արժեք, քան մեր հայրենիքն է: Սահմանադրության 2-րդ կետում գրված է, որ իշխանության յուրացումը համարվում է հանցագործություն: Եվ սա քրեորեն հետապնդելի, պատժելի արարք է: Ընդ որում՝ խմբակային կարգով, քանի որ այս գործընթացը տեղի է ունեցել փոխգործակցության, փոխադարձ պայմանավորվածության արդյունքում:


Գեղամ ՍՏԵՓԱՆՅԱՆ, Մարդու իրավունքների պաշտպան:



Մեր մտավորականությունը, 74-ները, մասնագետները ավելի շուտ պետք է աշխատեին, որպեսզի հարցը չհասներ Աժ-ում 2-րդ ընթերցմամբ քվեարկության փուլ, հետո նոր հանվեր քվեարկությունից, որովհետև են գլխից պարզ էր, որ այս նախագիծը բազմաթիվ առումներով խնդրահարույց է: Նախորդ օրը հրապարակել ենք մեր կարծիքը նախագծի վերաբերյալ, որում մտահոգություններ ենք հայտնել մարդու իրավունքների, ազատությունների փոփոխությունները Աժ-ի իրավասությանը վերապահելու վերաբերյալ: Հատկապես մեզ համար կարևոր էր նշել այն, որ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխները, որոնք գործող Սահմանադրությամբ կարող

են փոխվել միայն հանրաքվեով, առաջարկվող նախագծով կարող են փոփոխվել նաև Աժ-ի կողմից: Առաջարկն, իհարկե, հետընթաց էր ժողովրդավարությունից, որի մասին բազմաթիվ հարթակներում արդեն խոսվել է: Սա հանրային օրակարգ չէր, որովհետև հանրության մեծ մասն անտեղյակ էր դրան: Պարզ է, որ մենք գործ ունենք անհատի կամ առանձին խմբի օրակարգի հետ, և մեզ համար շատ կարևոր է դա պարզել ու թույլ չտալ մնան բան:

Մանվել ՍԱՐԳՅԱՆ, քաղաքագետ:



Մարդիկ այս քանի օրը հանկարծ, որ եթե ցանկություն ունեն մի խնդիր դնել ու գնալ դրա լուծման հետևից, հասնում են իրենց նպատակին: Օրհասական վիճակում մարդիկ տարբեր ձևով են իրենց պահում. կա մարդ, որ թողնում փախչում է տարածքից, կա մարդ՝ ուզում է ինչ-որ մի բան անել վիճակը փոխելու համար, բայց մարդիկ էլ կան, որ մտածում են՝ ինչպես օգտվեն այս վիճակից: Մենք տեսանք այս վիճակից օգտվելու մի օրինակ, թե ինչպես են մարդիկ ստեղծում օրհասական վիճակ, որ հետո յուրացնեն իշխանությունը և ազգային հարստությունը: Եվ այս մի օրինակը ցույց է տալիս, որ դա անընդհատ լինելու է, ու միայն ժողովրդի պայքարը կարող է շեղել նրանց այդ ամենից, թույլ չտալ, որ հասնեն իրենց նպատակին: Փառք Աստծո, որ այդքանը գիտակցվել է և նույն չի տրվել: Բայց դա չի նշանակում, թե մորից չի կրկնվելու: Փորձելու են անել ուրիշ կերպ, մինչև որ ժողովուրդն իր իշխանությունը չհաստատի:

Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆ, «Միացյալ Հայաստան» 74 ղեկավար: - Դեռևս 2017-ին սահմանադրական փոփոխությունների ժամանակ մենք ընդդիմանում էինք: Այս Սահմանադրությունը շատ արագ փոփոխ

ման ենթակա էր լինելու: Եվ դա իմանալու համար մարգարե լինել պետք չէր. ամեն նոր եկող պաշտոնյա Սահմանադրությունը հարմարեցնում է իր իշխանությունը պահելուն, ցավոք՝ մեր պետականության, մեր ազգային շահի հաշվին:

Ներկայիս Աժ-ն ժողովրդի լայն տրամադրությունները չի արտացոլում: Անգամ եթե այն ձևավորված լիներ առողջ քաղաքական համակարգի շնորհիվ, և այնտեղ լինեին իրապես արհեստավարժ պատգամավորներ, դարձյալ այդ Աժ-ին չէր կարելի մնան մեծ լիազորություններ տալ: Եթե պետության ճակատագիրը կախված լինի այդ 33 հոգուց, ինչքան էլ որ նրանք մեր ժողովրդի ընտրության արդյունքն են, անհամեմատ ավելի հեշտ է նրանց վախեցնել, մոլորության մեջ գցել, քան ամբողջ ժողովրդին:

Գագիկ ԱՎԱՆԵՍՅԱՆ, Ա7 հանրային խորհրդի անդամ:



Իմանալով հանդերձ, որ այս օրինագիծը հակաժողովրդական է, խորհրդարանական բոլոր 5 ուժերը միավորվել են, ինչը խիստ կասկածելի է: Շատ լավ է, որ հիմա նրանց որոշումը կասեցված է, և այս պահին կանգնած չենք այդ խնդրի առաջ: Այդուհանդերձ, ունեն լուրջ կասկածներ, թե ուրիշ էլ ինչ կարող են մոզոցնել իրենց նպատակին հասնելու համար: Մենք պետք է ձեռքներս գարկերակի վրա պահենք: Միայն առողջ հասարակության միջոցով է հնարավոր լուծել բոլոր խնդիրները: Եվ հատկապես մեր երկրում, երբ գտնվում ենք վտանգի առաջ, կարծում են, որ սա հրամայական է:

Արթուր ՕՍԻՊՅԱՆ, «Իմ իրավունք» քաղաքացիական շարժում:



Սա այն վառ օրինակն է, երբ թվում է՝ մեզմից կախված բան չկա, բայց երբ համախմբված, արդար նպատակի համար պայքարում ենք, խնդիրը լուծվում է: Նախագծի ետ կանչելը հենց հասարակության հաղթանակն է: Ի՞նչ վտանգից ենք այս պահին ազատվել: Ձուգահեռ այն բանին, որ փորձ էր արվում ամբողջ իշխանությունը տալ Աժ-ին, Ադրբեջանի լրատվականներում նրանց փորձագետների կողմից այն հայտարարություններն են գնում, թե Ադրբեջանը պատրաստ է երկխոսել մեր պատգամավորների հետ. ոչ թե Միևսկի խմբի հետ, ոչ թե միջազգային հարթակներում, այլ անմիջապես՝ պատգամավորների: Դա մեր կասկածանքներն է խորացնում, որ ոչ միայն ներքին իշխանությունն են գավթելու, ժողովրդի ձայնը խեղդելու, այլև Արցախն են համոզելու: Այս պահին այդ խնդիրը լուծել ենք, բայց վտանգ կա, որ նույն խնդիրը մեկ ուրիշ կերպ չեն փորձելու առաջ տանել: Մենք պետք է հետևողական լինենք և թույլ չտանք դա: Մարտահրավերները պետք է ընդունենք և ոչ թե փախչենք դրանցից: Եթե փախչենք, վերջում հայտնվելու ենք Ադրբեջանի կազմում:

Ամփոփելով կլոր սեղանը՝ Ռազմավարական հետազոտությունների անկախ կենտրոնի տնօրենն ասաց, որ հասարակությունն ակտիվանում է, ինչի շնորհիվ այս խնդիրը լուծվեց, բայց խնդիրներ դեռ շատ կան:

Իշխանությունները պարտավոր են լսել ժողովրդի ձայնը, քանի որ առանց ժողովուրդի չկա իշխանություն: Պետության բարձրագույն սուբյեկտը ժողովուրդն է:

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՅԵԼՈՂ ԶՈՐԱԶՐԱՄԱՆԱՏԱՐԸ



Մեր բազմադարյան հոգևոր գանձարանում քիչ չեն մարդկանց մասին հիշատակումներ, որոնք իրենց արարքով, հայրենիքին նվիրվածությամբ, իրենց նվիրումը սրբագրելու մղումով պատրաստ են եղել ամեն ինչի, ամբողջ մահատակվելու: Այդ մարդկանց մասին մեզ հուշում են քարերի վրա, բերդամրոցների որմերին դաջված արձանագրությունները, մագաղաթյա թերթերի վրա գրված ասքերը, լեգենդները, ժողովրդի բերնից բերան ծոր տվող մեղեդիները, մեր պատմիչների, գրողների երևակայությամբ միս ու արյուն ստացած այրերը: Սակայն միանգամայն այլ զգացողություն է համակում քեզ, երբ բախտ է վիճակվում քայլել նման մարդկանց հետ, լսել նրանց կենդանի խոսքը, ականատեսը լինել, ժամանակ առ ժամանակ նաև մասնակիցը դառնալ նրանց հանդուգն ձեռնարկումների, որոնց նպատակը վեր է երևակայական մտածողության սահմաններից: Նման հերոսներից է Մոնթե Մելքոնյանը՝ մեր Ավոն:

Նոյեմբերի 26-ը Ավոյի ծննդյան օրն է: Նա կոչվում էր 65 տարեկան: Իր կյանքի 65 աշուններից Ավոն հասցրեց վայելել ընդամենը 36-ը: Բայց ճիշտ օգտագործեցի «վայելել» բառը: Չէ՞ որ նրա գիտակցական կյանքը միայն ու միայն պայքար է հիշեցնում: Տակավին պատանի էր, երբ նրանց ընտանիքը հեռավոր Ամերիկայի Վիսկոնսինսի տեղափոխվեց Եվրոպա: Տարիքը արգելք չէր դառնում համար, որ շրջագայեր Եվրոպայում, լինել Գլոստերի Աֆրիկայի երկրներում: Այս շրջագայությունների էպիկենտրոնում հայտնվեց խորհրդային Հայաստանը: Հենց Հայաստանում էր, որ Մոնթեի սրտի բաբախումը այլ երանգ ստացավ՝ արյունը երակներում եռալու չափ տաքացավ: Այստեղ էլ հասկացավ, որ ոտք է դրել իր պատերի հայրենիք, զգաց իր հայկական ժառանգության մասին: Ձգաց

և գիտակցեց նաև, որ հայրենիքին որդիական պարտք ունի տալու և որ այդտեղ «եկած է արյան կանչով»: Քաջատեղյակ լինելով (մասնագիտության բերումով) Հարավ-Արևելյան Ասիայի տարածաշրջանի պատմությունը (Հայաստանը նույնպես այդ տարածաշրջանում է)՝ ակտիվ մասնակցություն ունեցավ Արևմտյան Հայաստանի ազատագրության համար գաղտնի պլաններին, որն իր վրա էր վերցրել ԱՄՆ-ը (նույնպես գաղտնի) բանակը: Մի քանի անգամ ձերբակալվելը, դատվելը չխանգարեցին, որ նա վերջնականապես որոշում ընդունի իր կյանքի հետագա ընթացքի մասին: Իսկ այդ ընթացքը շատ պարզ էր. նա արդեն լսել էր Արցախում սկիզբ առած պայքարի մասին և առանց երկմտելու շտապեց այնտեղ: Դա 1991 թվականին էր. նախ՝ Շահումյանի շրջան, իսկ 1992թ. հունվարից ստանձնելով Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարի խիստ պատասխանատու (ինչ-որ տեղ՝ նաև վտանգավոր) պարտականությունները: Գրանցվեց Եմիշճան գյուղում՝ դառնալով Արցախի բազմաբազնի: Այդ պահը, ինչպես նաև Ավոյի մարտական երդումն այսպես է հավերժացրել բանաստեղծ Ս. Խանյանը լեգենդար հերոսին նվիրած «Նահատակ լուստ» պոեմում.

*Վրիժառու են, մայր իմ, իմացիք  
Երկու միլիոնի արյան սուրբ կանչով,  
Մենք ինչքա՞ն պարենք այսպես ցանուցիր,  
Այսպես բզկտված ու խոր հառաչով:  
Եկել են գիրկդ ափերից օտար,  
Դարձել գավակդ Եմիշճանեցի,  
Որդիդ՝ քեզ պաշտպան, մայրդ՝ ինձ սատար,  
Ես այս օրվանից մանկալի են գեների,  
Ձինվորի երդում ես քեզ եմ տալիս:*

Ավոյի նկատմամբ խորին հարգանքով և համեմելի հպարտությամբ են գրում այս տողերը, որ նա Մարտունու շրջանի շուրջ 40 բնակավայրերից նախընտրեց հենց իմ հայրենի Եմիշճանը: Երբ փորձում են վերհիշել մեր՝ Եմիշճանցիների մասնակցությունը Արցախյան ողջ գոյապայքարին, գիտակցում են, որ բոլորս հպարտությամբ ենք ընդունել Ավոյի այդ արարքը և արել ենք ամեն ինչ՝ նախ նմանվել նրան և բարձր պահել նրա պատիվը, մարդկային վեհ զգացմունքները: Ողջ խորությամբ ընկալել նրա վերուժությունները սկսված ռազմական գործողությունների ընթացքի, նպատակների, ապագայի մասին: Իսկ այս բոլորի առհավատչյալն միայն ու միայն սկսված պատերազմում հաղթանակի հասնելն է: Եվ այդ հաղթանակը ողջ հայության մասնակցությամբ է լոկ հնարավոր: Ստանձնելով Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատարի պարտականությունները՝ Ավոն փորձում էր ոչ միայն ազատամարտիկների, այլև ողջ բնակչության գիտակց

ությունը հասցնել հետևյալը. «Շատ պիտի ուզեմք, որ մեր ժողովուրդն ընդհանրապես սփյուռքի մեջ, Հայաստանի մեջ, ամեն տեղ հասկանա, որ պետք է օգնեն, պետք է այս խնդիրը հասկանան իբրև հայ ժողովրդի առաջնահերթ խնդիրը: Եթե չհաղթենք այս պատերազմի մեջ, բոլոր խնդիրները միայն ավելի բարդ պիտի դառնան, նաև մեր պատմությունը, իմ կարծիքով, կրնա վերջանալ, հայոց պատմության վերջին էջը կրնանք դարձնել, եթե կորցնենք այս հողամասը»:

Ավոն ավելի, քան մեզնից յուրաքանչյուրը, լավ էր գիտակցում, որ Արցախի հարցը հեշտությամբ լուծվողներից չէ: Ռազմաճակատում հաջողություններ գրանցելը դեռ չի նշանակում վերջնական հաղթանակ, հարցի վերջնական լուծում: Հարցի լուծումը հնարավոր է միայն համայն հայության ջանքերով: Սակայն ինչ-ինչ հանգամանքներից ելնելով՝ Ավոն ինչ-որ տեղ զարմացած էր տարակուսանքի հասնող զարմանքով. «Չարմանալիս այն է, որ ավելի շատ հայեր չեն եկած ինձ նման նույնը անելու, միայն այդ է զարմանալի: Շատ պիտի ուզեմայի, որ թե՛ Հայաստանեն ավելի շատ մարդիկ գան, թե՛ սփյուռքեն: Այսինքն՝ ինչքան հայ կա, իսկական հայրենասերներ, իրենց տեղը այսօր Արցախի մեջն է»:

Այսօր, 30 տարիների հեռավոր, երբ փորձում են վերհիշել, վերլուծել, գուգահեռներ անցկացնել մեր օրերի հետ, իմ ոչ հոգում և ոչ էլ ուղեղում չի տեղավորվում հայրենասիրության գաղափարի հեղինակը լինելը: Մի՞թե կարելի է հայրենիքը սիրել ժամանակ առ ժամանակ կամ այն սիրել մեկ ուրիշի թելադրանքով, կամ այն փորձել ստորագրել մեղ անձնական ինչ-որ քանակությամբ: Ցավոք, նման ծառերն այսօր ավելի շատ պտուղ են տալիս:

Ավոն չէր կասկածում Արցախյան պատերազմի հաղթանակին: Արցախ-Ադրբեջան ուժերի հարաբերակցությունը չի կարող պատճառ դառնալ: Նա համոզված էր՝ հիմք ունենալով Վիետնամ-ԱՄՆ ռազմական հակամարտությունը 70-ական թվականներին: Այդ տարիներին լինելով Վիետնամում՝ նա մեկ անգամ ևս համոզվեց, որ փոքր պետությունն էլ, լինելով կազմակերպված, վճռական, դրսևորելով կամային և հոգեկան որակներ, կարող է անհնարինը հնարավոր դարձնել: 90-ականների սկզբներին Ավոյի այս մտահղացումներն իրականություն դարձան միայն ու միայն վերը նշած որակները ռազմավարության հիմքում ունենալով: Ավոյի անձնական կյանքում կարևոր դեր խաղացին լիբանանյան տարիները: Նա Լիբանանում էր՝ մասնակցելով 5 տարի տևած քաղաքացիական պատերազմին: Այստեղ էլ նա հանդիպեց Մեդային: Սեղան բնավորությամբ շատ զօտրով

նման էր Ավոյին և ձգտում էր գոնե հայրենասիրությամբ նրանից հետ չմնալ: Դա էր պատճառը, որ գիտակցելով Ավոյի ընտրած ճանապարհի վտանգավոր լինելը, փորձ չարեց նրան կանգնեցնել, դեռ ավելին, դարձավ նրա գինակիցը, մարտական ընկերը, նրա խոհերի, մտորումների նվիրյալը:

Ավոյի ռազմական տաղանդի փայլատակումներից են ապագայի նկատմամբ կանխագուշակումները, որոնք ժամանակ անց դառնում էին իրականություն: Նման հարցերը քննարկելիս նա իրեն դրսևորում էր իբրև նուրբ ու հեռատես դիվանագետ, որպես խորաբան և հմուտ քաղաքական գործիչ. «Պետք է ըստն, որ Արցախի կորուստը հայ ժողովրդի համար հսկա կորուստ մըն է, որ կրնա մի քանի տասնյակ տարի հետո նշանակել հայ ժողովրդի ամբողջական անհետացում: Եթե ազերները գրավեն Արցախը, հաջորդ տեղը Չանգեզուրն է: Բոլորս գիտենք, որ Չանգեզուրի վրա հողային պահանջ ունին, պատերազմը կշարունակվի Չանգեզուրի վրա: Եթե Չանգեզուրը վերցուցին, բոլորիս համար հստակ է, թե ինչ պիտի նշանակե մեր հայրենիքի համար»:

Ավոն հիմա կդառնար 65 տարեկան: Եվ այդ տարիների կյանքի գագաթից նայելով անցած ճանապարհին՝ հավանաբար ինքն իրեն կմտորեր. «Իմ կյանքը, իրոք, անցել է փոթորիկների միջով, և այդ փոթորիկների վերջին խառնարանը եղավ իմ հայրենիքի՝ Հայաստան աշխարհի տասներորդ նահանգը՝ Արցախը: Ես Արցախ մեկնեցի ոչ պատահականորեն և ոչ էլ փախա հետապնդումից. նախ՝ երդում տված եմ մինչև վերջ պայքարել Հայ Դատի արդարացի լուծման համար և վերջապես՝ իմ բազմաչարքար ժողովրդի բախտը վճռվում էր այնտեղ՝ Ամարասի հովտում, Թարթառի հավերժական կարկաչի երկրում, և իրավունք չունեի թույլ տալ, որ բարբարոս մի թուրք ցեղ փորձ աներ շրջելու մեր պատմության վերջին էջը: Արցախը իմ վերջին հանգրվանը եղավ, պատերազմի վերջին թատերաբեմը, և ես, որպես իմ երկրի գինավոր, ամուր բռնեցի հաղթանակի դրոշը, այնքան ամուր, որ «թեկուզ վիրավոր, թեկուզ արնաքամ», ոչ մեկին թույլ չեմ տա նրան տիրել»:

Ավոն մոմի պես վառվելով՝ լույս ու հավատ, հույս և հաղթանակ պարզեց ազգին, սպառեց ինքն իրեն, բայց մնաց որպես հավերժ ճամփորդ, որպես ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմի վառ կերոն, որպես համայն հայության մշտաբորբոք պայքարի գանգակատար:

**Լեւոն ԱՄԱԷԼՅԱՆ  
գ. Եմիշճան**

## Հրանտ Մաթևոսյան

Հայրենիքները չեն տրվում մեկընդմիջ, հայրենիքները նվաճվում են ամեն օր: Մեկընդմիջ տրված հայրենիքներ չկան: Վատ են այն որդիները, որ հայրերի տան տեղը իրենց տները չեն բարձրացնում: Վատ սերունդներ են այն սերունդները, որ իրենց հայրենիքները նորից չեն գտնում: Ոչ մի ժառանգ, ոչ մի սերունդ, որտեղ և ունից սերված լինի, մեկընդմիջտ ապահովագրված չէ փչանալու ժանգից: Եվ եթե կարծե՞ք՝ ապահովագրված է, ավելի լավ՝ հարևանի համար, որ քո հացն ու ջուրը հավիտյան քստոց գիտի, և քեզ, ուրեմն, շատ գիտի և քո կանանց՝ հարձեր: Եվ միշտ, ամեն լուսաբացի և Աստծո ամեն մայրամուտի հետ փորձելու է պարիսպների դիմադրությունը: Պարիսպը եթե ամուր եղավ ու շները զարթուն, նա քեզ հարևան է մնալու, ոչ չար, ոչ բարի, հարևան: Հորդ տունն ու պարիսպը և

# ԵՆ ՏԵՐ ԵՄ ԻՄ ԺԱՄԱՆԱԿԻՆ...

անունն ու համբավը քո ձեռքով ու քեզանով եթե նորոգ չգտար, ուրեմն դու չկաս: Հետո գնա, նստիր օտար երկիցների տակ ու փախտակահարի տանջված ոտներդ տորթելով, գանգատվիր սրտիդ ուզածի չափ, թե՛ ախ, հորս բերդերն ու պարիսպները, հորս արտերն ու այգիները, հին վեհագույնների մեջ իր բարձր, նախկին շուքն ու փառքը: Իսկ քո՞նը, քո՞նը, քո անձնակա՞նը, քոտիցքի քո կաթիլը՝ քո դրած տունկի, քո արյան շիթը քո սահմանների վրա: Բերանդ ծվատող քո համբույրը այն երկրի, որ գուցեև իսկապես քո նախնուն էր, բայց այսօր արդեն բռնը չէ, օտար դատավորների առջև կանգնած գրկավածինդ չէ, որովհետև երկիրդ ապավինեցիր նախնուդ պարիսպներին ու նախնուդ Աստծո գործությանը: Աստծո վատ բնույթը գիտես. Աստված միշտ արթուն ողջերի հետ է: Հայրենիքը... Հայրենիքը դու ես քո պարած ժամանակի մեջ: Կա էլ ժամանակի մեջ քո ծննդյան ճիչը, քո

կյանքի երզը, կյանքի քո կարողը, քո շառաչուն ընդվզումը ու տիրական համբերությունը, կա քո մահվան թառանջը, հավերժորեն կա քո ժամանակը հայրենի տարածքների վրա: Լո՞ւմ է, լո՞ւմ է, չկա՞ քո հաղթի պարտի երզը քո ժամանակի մեջ՝ չկաս և դու, չես եղել, չի եղել քո ժամանակը: Այդպիսի ժամանակ առհասարակ չի եղել: Պատմությունը մկրատը զգել-մետել է քո ժամանակը քեզ հետ, ծայրը ծայրին բերելով՝ կցնցել է ուրիշների, ուրիշ ժամանակներ: Աշխարհը լի է ամայի հայրենիքների պարապ ժամանակներով: Այսօրվա իմ կայուն ներկայությունը պարտադիր է, որպեսզի նույնիսկ եղածը եղելություն լինի: Դե, իմ բացակայությունը այսօրվա մեջ, զինվորիս բացակայությունը այսօրվա մեջ պարտելու, ամայելու և ոչ միայն իմ ապագան իմ երկրում, այլև անցյալս:

Ձինվորի իմ բացակայությամբ այդ հնեաբանները իմ երկրի անցյալը հարմարեցնելու են իրենց ցեղերի ապագային: Նրանք տեսություն են հորինելու ու ամեն օր թույն են կաթեցնում ականջս, թե ազգերը հնամուր են ու եկողների ասպարեզից հեռանում են, թե ցեղեր են գալիս, ցեղեր են գնում: Ձինվորի իմ վստահ ներկայությունը «ոչ» է ասելու նրանց, ասելու է՝ հավերժորեն նորոգվում են ազգերը, և որդիները իրենց նորոգ հայրերն են, և նախնիներիս պատկերների հին աստվածները զորանում են իմ եռանդով և ճիշտ իմ պատկերին են գալիս: Ձինվորի իմ ու քո ներկայությունը այսօրվա մեջ շատ է հարկավոր, պարտադիր անհրաժեշտություն է, չարքաշ, լուռ զինվորի և ոչ խփող, փախչող ավագակի: Իմ ու քո մարմինը, գիտես, գանազան նյութերի շատ քմահաճ միություն է, չի սիրում աշխատել, դիմա-



ՍԱՐԴ-ԼԵԳԵՆԻ

ԻՄ ԿԵՆԱՑՈ ՄԻ՛ ԽՄԵՔ...

Արցախի կորուստը կնշանակե  
ամբողջ հայ ժողովրդի անհետացումը...

ՄՈՆԹԵ

Բոլոր ազգերն ունեն իրենց առաքյալները, Մոնթեն մեր ազգի առաքյալն է: Նա ավելին է, քան պատերազմի հերոսը, հայրենյաց պաշտպանը, որը հայրենիքին նվիրվելու վառ օրինակ էր, հայրենիքն ամեն ինչից վեր դասելու օրինակ:

Մոնթեն ընդամենը զինվորական չէր, ընդամենը հրամանատար չէր, եթե կարելի է այսպես արտահայտվել, ընդամենը պատերազմի հերոս չէր, քանզի պատերազմի հերոս կարող է դառնալ, ասենք, մի հնուտ զինվորական, բանակի զենքերալ կամ գնդապետ, շարքային մի զինվոր, որի համար հայրենիքի պաշտպանությունը մասնագիտություն է: Մեր հերոսի պարագայում այլ է...

Նոյեմբերի 25-ին դարձյալ լեվի-լեցուն էր Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի դահլիճը. չէ՞ որ մեր ազգի փառապան զավակի ծննդյան օրն է: Մոնթեն կդառնար 65 տարեկան:

Դպրոցի հմուտ կազմակերպիչ Մերի Գաբրիելյանի ջանքերով Մոնթեն-Ավոն այստեղ է, առավել կենդանի ու իրական: Այսպես են վերադառնում հաղթող հերոսները...

Նրա բացման խոսքում մեր առջև հանում է բոլոր դարերի համար հավերժ կենդանի հերոսի կերպարը՝ իր վեհությանը, գաղափարին նվիրվելու կարողությամբ, անկեղծությամբ, երկրային կյանքի տարուբերումներով, մեծ կենսագրությամբ, մեր ազատագրական պայքարի փայլուն ու ոգեղեն գործիչը լինելու իրողությամբ:

Այո, Մոնթեն սովորական հերոս չէր: Մարդ, որը ծնվել էր ԱՄՆ-ում և այդ երկրի քաղաքացի էր, գերազանցությամբ ավարտել էր միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Բերկլիի համալսարանը, հետո Օբսերվորում իր արտակարգ ունակությունների համար ուսանելու կրթաթոշակ ստացել, բայց մարդ, որը Անգլիա մեկնելու և աշխարհի ամենահեղինակավոր կրթօջախում սովորելու փոխարեն կտրուկ շրջադարձ է կատարում իր կյանքում և մեկնում Արևմտյան Հայաստան (12 տարեկանում է իմացել, որ հայ է. ծնողներն էին նրան անվանակոչել Մոնթե, որն անգլերեն նշանակում է լեռ, սար)՝ հայկական մշակութային ժառանգությունն ուսումնասիրելու համար: Մարդ, որը գերազանց տիրապետում էր յոթ լեզուների, բայց դրանցից ընտրեց հայերենը և վերջապես մարդ, որը երաշխավորված, բարձր վարձատրվող ամերիկյան որևէ կորպորատիվ գրասենյակային մենեջերական փափուկ ու ճոխ կյանքից գերադասեց պահանջատիրությունը, նվիրվեց հայրենիքի պաշտպանության գաղափարին ու սարի պես անսասան կանգնեց ոսոխի դեմ:

Հենց այս արժանիքներով է առանձնանում Մոնթեն մեր ազգի հերոսներից, որը, լավ հասկանալով իր առաքելությունը և ժողովրդի կողմից սիրված ու գնահատված լինելու իրողությունը, զգուշացնում էր հետնորդներին. «Իմ կենսոցը մի խմեք, այլ շարունակեք իմ գործը»:

Դպրոցի աշակերտուհի էլ են թովմասյանի հմայիչ ու թովիչ երգն արձագանքում էր դահլիճի պատերին ու վերադառնում ունկնդիրներին. «Գնաս բարով, հայ զինվոր...»: Ի դեպ, այս դպրոցում ոչ ուսուցիչներն են պարապմունք, ոչ էլ աշակերտները. միջոցառում՝ միջոցառումից հետո, հանդես՝ հանդեսից հետո...

Հագեցած է դպրոցի առօրյան:

Դահլիճում՝ հանդիսատեսների աչքի առջև, կերտվում էր լեգենդար մարտիկի կերպարը, ՀՀ Ազգային հերոս, Արցախի հերոս, «Հայրենիք», «Ոսկե արծիվ» և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանների ասպետ, հրապարակախոս, ուրարտագետ ու հնագետ, փոխգնդապետ Մոնթե Մելքոնյանի կերպարը, որին Արցախում կմբել են Ավո անունով, և որի պայքարի փիլիսոփայությունը հետևյալն էր. «Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք մեր պատմության վերջին էջը...»: Դու ի՞նչ հանճարեղ գուշակ էիր, Ավո, որ անընդհատ զգուշացնում էիր այդ աղետի մասին: Դու այն երջանիկներից մեկն էիր, որ տեսավ միայն հաղթանակները, ոչ թե 44-օրյա ծանր կորուստները: Դու հաստատ չէիր

ինքնապաշտպանական ուժերի շտաբի պետ, նրան հաջողվեց անկազմակերպ ջոկատներից կազմել բանակային կուռ համակարգ և ազատագրել Մարտունու բռնազավթված տարածքի 80 տոկոսը: Պատերազմի մեջ թե դրանից դուրս մեզ հայտնի հրամանատարները իշխել են կամքով, բռնությամբ, համակարգի «գործիքներով»: Մոնթեն ենթարկեցրեց իր բանակը ազնվության: Պատկերացրեք 35-40 տարեկան մեծ ինտելեկտի տեր գորավար՝ Փոքրիկ իշխանի ազնվությամբ ու պարզությամբ: Կանոնավոր բանակի հրամանատար էր, բայց ոչ մի անգամ իր աշխատավարձը չստացավ. գումարը մուտքագրվում էր գոհված, վիրավոր ազատամարտիկների օգնության ֆոնդին: Օտար երկրներից ստացած ֆինանսական օգնությունը ևս հատկացնում էր այդ ֆոնդին: Հնարավորություն ուներ լավագույն զինվորական հանդերձանքը հագնելու, բայց միշտ նույն հագուստով էր: Ջրկում էր իրեն ամեն վայրէջքի՝ մտածելով. «Ձինվորը պետք է կուշտ լինի»: Ասում են՝ գդալը թաթախում էր թեյի մեջ, ապա մտցնում շաքարավազի մեջ. որքան կաչեք թաց գդալին, այդքանով բավարարվում էր: Սիրում էր քաղցրը, բայց չէր ու-



ղիմանա, իսկ մենք հիմարի պես համառում ենք...: Հողի ո՞ւժն է գորեղ, թե՞ մեր կամքի. չգիտենք, միայն ապրում ենք՝ հույսի մի շյուղ փայփայելով:

Համեստ ու անկեղծ գորավար էր Մոնթեն, բայց ոչ փառամոլ: Այնքան անաղարտ էր նրա հոգին, որ կործին կանգնածը վարակվում էր նրանից:

Վիոլետա Շահրամանյանի և էլեն Թովմասյանի հուզիչ երգը նրա ելույթի մասին է.

*Կոիվներ էր մղում նա բոցերում անշեջ, Մխրաքները չի պատնում, պահում է իր մեջ... Դեռևս մանկությունից էր Մոնթեն տարբերվում իր հասակակիցներից. խաղը բոլորովին չէր հետաքրքրում նրան, բնավորությամբ շատ զուսպ էր ու սակավապետ: Ընտանեկան պարզ կենցաղով դաստիարակված երեխան ձերբագրված էր գայթակղիչ ու թանկարժեք իրերից, խաղալիքներից, պերճաշուք հագուստից, ընդհանրապես պարզ կենցաղը խաթարող ավելորդություններից: Այս ամենը նպաստավոր եղավ ընտանիքի երեխաների մեջ կարգապահ, իրենց ցանկություններում չափավոր, կենսասեր ազատությամբ, բնության ու կենդանիների հանդեպ ջերմ սիրով համակված հատկանիշներ ձևավորելու գործում:*

Մարտական ու զինակից ընկերները պատմում են, որ նա սուտ խոսել չսովորեց ու իր պահվածքով շատերին փոխեց: Երբ Վազգեն Սարգսյանի հրամանով 1992 թվականի փետրվարին նշանակվեց Մարտունու շրջանի

ինքնապաշտպանական ուժերի շտաբի պետ, նրան հաջողվեց անկազմակերպ ջոկատներից կազմել բանակային կուռ համակարգ և ազատագրել Մարտունու բռնազավթված տարածքի 80 տոկոսը: Պատերազմի մեջ թե դրանից դուրս մեզ հայտնի հրամանատարները իշխել են կամքով, բռնությամբ, համակարգի «գործիքներով»: Մոնթեն ենթարկեցրեց իր բանակը ազնվության: Պատկերացրեք 35-40 տարեկան մեծ ինտելեկտի տեր գորավար՝ Փոքրիկ իշխանի ազնվությամբ ու պարզությամբ: Կանոնավոր բանակի հրամանատար էր, բայց ոչ մի անգամ իր աշխատավարձը չստացավ. գումարը մուտքագրվում էր գոհված, վիրավոր ազատամարտիկների օգնության ֆոնդին: Օտար երկրներից ստացած ֆինանսական օգնությունը ևս հատկացնում էր այդ ֆոնդին: Հնարավորություն ուներ լավագույն զինվորական հանդերձանքը հագնելու, բայց միշտ նույն հագուստով էր: Ջրկում էր իրեն ամեն վայրէջքի՝ մտածելով. «Ձինվորը պետք է կուշտ լինի»: Ասում են՝ գդալը թաթախում էր թեյի մեջ, ապա մտցնում շաքարավազի մեջ. որքան կաչեք թաց գդալին, այդքանով բավարարվում էր: Սիրում էր քաղցրը, բայց չէր ու-



տում. իր զինվորը միայն թե կուշտ լինի: Մարտական ընկեր Ֆելիքս Պողոսյանը պատմում էր, որ ամեն օր առավոտից մինչ երեկո, դիրքերում էր և միայն երեկոյան էր գալիս շտաբ: Լինում էր, որ ճաշարանում (սկզբնական շրջանում) ուտելու բան համարյա չէր լինում, գոհանում էր եղածով: Հետո արդեն նրա բաժինը պահում էին առանձին: Մարտունու ժողովուրդը Մոնթեի կերպարից շատ է ազդվել ու փոխվել: Նա այնպիսի ծրագրեր էր կազմում, որ լիովին անհնար էր թվում իրագործելը, բայց ինքը հնարավոր էր դարձնում: Սա՛ էր Ավոյի ֆենոմենը:

Այսքանով հանդերձ, նա սովորական մարդ էր՝ իր սիրով, հումորով ու զայրույթով: Ողջ կյանքը հայ ժողովրդի իրավունքների վերականգնման համար պայքար դարձրած մարտիկը որոշել էր չսիրահարվել ու չամուսնանալ: «Պարտվեց սիրո դեմ պայքարում», - խոստովանում է Մոնթեի մեծ սերը՝ Սեդան, որին դեռևս 1988թ. բանտում էր տողեր նվիրել.

*Ամեն կողմ՝ մութ ու արգելք, Ամեն կողմ՝ տխուր ու մութ, Ամեն կողմ՝ պաղ ու թշնամի, Բայց գտած են բացություն ու լույս, Գտած են ուրախություն ու հույս, Գտած են՝ բու սիրո հուշերուն մեջ:*

Սեդան գաղափարակից ընկեր էր Մոնթեի համար և ոչ միայն սիրած կին: Ու չնայած այսօր չկա Մոնթեն, Սեդան էլ ամուսնացել է,

բայց նրա կյանքը շարունակում է կապված մնալ արտասովոր ճակատագրի տեր մի մարդու հետ, որը մահից հետո էլ դեռ ապրում է...

Պատերազմական իրավիճակում անգամ կատակը չէր լքում մեր զինվոր տղաներին: Մի օր Մոնթեն զանգում է Սերժ Սարգսյանին ու հայտնում, որ ճարտարգիները դիրքեր չեն գնում, դիրքերում մարդ չկա: Երբ Սերժ Սարգսյանը հարցնում է, թե ինչու չեն գնում, հրամանատարն ասում է.

- Որովհետև էլ են:

- Որ դիրքերում մարդ չկա, ինչու՞ ազերիները չեն գալիս այդ դիրքերը գրավելու, - հարցնում է Սերժ Սարգսյանը:

- Որովհետև անոնք մեզնան էլ են:

Մեծ գորավարի ամենամեծ հայիցանքը «էջն»-ն էր: Հաճախ էր հետախուզական խմբերին զգուշացնում՝ շեշտելով. «Քշուրթուն չանեք...», այսինքն՝ անխմաստ քաջություն:

Նա նպատակ չէր դնում որևէ մեկին իր համախոհ դարձնել. այդ մեկն էր ձգտում դեպի իրեն: Իր ուղղախոսությամբ կարողանում էր մարդկանց զինաթափ անել: Մոնթեն իր անձնական օրինակով, իր գործելակերպով նոր իմաստ ու բովանդակություն հաղորդեց հայրենասիրություն, արդարություն, ազնվություն, նվիրվածություն կոչվող արժեքներին՝ դրանք վերածելով վարքի ու սկզբունքի:

Կենդանության օրոք լեգենդ դարձած ռազմիկը մասնակցեց նաև Մարտակերտի շրջանի ազատագրմանը, իսկ 1993թ. մարտ-ապրիլ ամիսներին դեկավարեց Քարվաճառի ազատագրական գործողությունը Արցախի կողմից: Հրադադարի ժամանակ էլ զգուշացնում էր.

- Հրադադար է, տղաներ, չկրակեք:

- Իսկ եթե իրենք կրակե՞ն, - հարցնում էին տղաները:

- Մարերը լացացրեք, - լինում էր պատասխանը:

Մոնթեի երկրային կյանքն ավարտվեց 1993թ. հունիսի 12-ին՝ 36 տարեկանում: Նա հաղթեց, հերոսացավ, սրբացավ ու դարձավ աղոթք, մորմոք ու ցավ, խառնվեց ազգի հիշողությանը և դարձավ նրա մշտական ուղեկիցը: Վազգեն Սարգսյանը գրել է. «Մոնթեի կորուստը ամբողջ հայ ազգի կորուստն է»:

Այդ օրը՝ նրա ծննդյան 65-ամյակի օրը, խորհրդանշական էր նաև դպրոցի փոքրիկների համար. «Ձարթոնք» մանկապատանեկան կազմակերպության «Աստղիկներ»-ի խումբը համալրեցին 1ա և 1բ դասարանների աշակերտները: 1ա դասարանի խումբն այսուհետ կկրի 44-օրյա պատերազմի մասնակից, դպրոցի շրջանավարտ Լեռնիկ Գաբրիելյանի անունը, իսկ 1բ դասարանի խումբը՝ մյուս մասնակից Արմեն Աղաջանյանի անունը:

Հնորհակվորենք նրանց և համոզված լինենք, որ «Աստղիկներ»-ը կդառնան նրանց արժանի հետնորդները:

Հնորհակություն բոլոր կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ մեր Ազգային հերոսին մեծարելու, նրա ավանդը գնահատելու և սերունդներ կրթելու համար:

Հայ ժողովրդի հերոսների աստղաբույլի մեջ Մոնթեն բացառիկ հերոս է, հերոսների հերոս՝ միշտ ներկա, առավել կենդանի ու իրական:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

Անտիպներ

մեր երկար դարերի մեջ իմ ու քո աշխատանքային կամքի վրա է հավաքվելու, յուրաքանչյուրիս հոգու մանրիկ ավազակի հետ ոչ մի հույս չկապեմք: Նա բեռ տանող չէ, նա օջախը մառ պահող չէ, տեղում կանգնող չէ:

Հայաստանի Հանրապետության մոնումենտի ծեփը նրան չի բռնի և չի բռնելու, երբեք:

Ծանր է թշնամու ատելության մեջ ապրելը, բայց անտանելի անհնար

էր լինելու նրա արհամարհանքի մեջ քարշ գալը:

Ծանր է պարտությունը, բայց ավելի ծանրը փախչելն է: Ծփոթված դես ու դեն են ընկնում, քեզ պատերով են խփում և չես ազատվում, չես հեռանում թշնամու քամահրանքից, որովհետև դա նաև քո քամահրանքն է քեզ:

Քո նախնին իր և քո ճակատից սրբել է այդ կարմիր ամոթանքը: Թշնամու քամահրանքի բեռը նետել է

իր և մեր հոգուց: Այսօր էլ են կհաստատեն, որ իմ նախնու ժառանգն եմ. և՛ խիղճս մաքուր կլինի, և՛ ընթացքս թեթև:

Մեր վստահ ու լուռ գոյությունը համարիք պողպատի պինդ ներկայությունը տաճարների կառույցներում:

Այս տարածությունները ի մի է հավաքելու, պետությունը կորողային կառույց է դարձնելու զինվորը, ես ու դու, մենք:

Մեր ներկայությամբ երկիրդ Հայաստան է ասվելու, մայրդ՝ մայր, քույրդ՝ քույր, կաթողիկոսդ վեհափառ է կոչվելու, և նախագահդ՝ նախագահ: Թե չէ գիտես՝ աշխարհի լեզուն անսահմանորեն բառաշատ է, ուրիշ բառեր ունի և՛ երկրի, և՛ կաթողիկոսի, և՛ հենց ինձ ու քեզ համար: Ինձ ու քեզ համար:

Ես՝ զինվորս, կանգնել եմ մեծ մի անգամ, մի եզակի անգամ ինձ տրված ժամանակի մեջ ու ասում եմ.

«Ես՝ ես եմ, ես տեր եմ իմ ժամանակին, ես իմ ժամանակի տերն եմ, այս իմ չարչարված երկիրն է, որը ես հայրենիք եմ դարձնում, իմ հայրենիքը:

Իմ հաղթանակը այսօր սկիզբն է ամեն ինչի գոյության, երեկվա հաղթական կանչերի և այսօրվա իմ փառքի, ծնողի սուրբ գերեզմանի և երեխայի զնգուն օրվա, սկիզբն է ամեն, ամեն ինչի»:

ՏԱՌԻՍՈՒՑԱՆ ՏՈՆ

ԵՎ ԵՆՎԵՑ ԱՆ

2022 թվականի նոյեմբերի 9-ն էր... ոչ սովորական, ուրիշ էր, յուրահատուկ Սոսի Հայկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի առաջին դասարանցիների համար: Մինչ այդ օրը, չնայած սաները փոքր էին, օրացույցում այդ ամսաթվի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ունեին: Իսկ նրանց նրբանկատ դասվար Ա. Աղջոյանը որոշեց փոխել իր սաների պատկերացումները, դեպի լույսն ու լուսավոր ապագան տանող ուղու մեկնարկը խորհրդանշող դարձնել օրացույցի այդ օրը՝ նոյեմբերի 9-ը:



Աստվածապաշտ արցախցու աստվածասեր բալիկներն առաջին անգամ չէ, որ այցելում էին Ամարաս, բայց այս անգամ այլ էր. Այս անգամ նրանք վանքի կամարների տակ չէին կանգնելու՝ իրենց ծնողաց հուզառատ աղոթքներն ունկնդրելու, այս անգամ իրենց կյանք տվողներին ունկնդիրը պիտի դարձնեին իրենց աղոթքախառն ելույթների...

Ահա նրանք՝ արդեն դարձողական դարձած փոքրիկները, որ եկել էին՝ Սուրբ Մեսրոպի ծայրը լսելու Ամարասի պատերից ներս, եկել էին ազդարարելու, որ իրենք հենց այդ օրից գտել են հայոց այբուբենի ոսկե բանալին՝ իրենց շուրթերին ծնունդ տալով «Ա» տառին:

Վանքի պատերից ներս նորաթուխ մանկանց ունկնդրելու էին եկել դպրոցի տնօրինությունը, ծնողներ, դպրոցականներ: Ներկա էր Տեր Սեպուհ քահանայն: Պահը խորհրդավոր էր. թոթո-

վախոս մանուկների ծայրն արծազանքում էր եկեղեցու կամարների տակ՝ կարծես խառնվելով Մեսրոպի աշակերտների ծայրերին...  
Տառուցման այս մեծ տոնին Ամարասի չքնաղ հովտում Մեր հարգարժան ներկաներին Ջերմ ողջույնի խոսք ենք հղում: Եվ լուսավորչական այս վանական համալիրից կրկին աղոթք էր վեր բարձրանում հայ մանկան շուրթերից: Աղոթքին զուգահեռ փառաբանվում էր Գրեթի մեծ գյուտարարը՝ Սուրբ Մաշտոցը.  
Դու մեր մեծ պապ Հացիկ գյուտից, Մշո դաշտի բաղոցիկ հողից, Շրթունքներով մեր մանկական Քեզ հազար փառք հավերժական: Եվ աշակերտները, ի պատասխան իրենց գովեստի խոսքերի, հանկարծ լսում են Մաշտոցի խորախորհուրդ ծայրը.  
Խոր անցյալից ձեզ են պարզում Ավանդական պատգամն իմ հին ,

Սիրեք, փոքրեր իմ սիրասուն, Հայոց լեզուն՝ ձեր մայրենին: Թող մանկական ձեր շուրթերին Տառերը մեր առնեն թևեր, Տանեն զալիք սերունդներին Հավերժական կրակը մեր: Եվ այդ, հավերժական կրակն այս մանուկները կփոխանցեն սերնդեսերունդ՝ քաջ գիտակցելով դրա կարևորությունը.  
Այսօր՝ այս պահին, Հայացքներս հառած մաշտոցյան գրին, Երդում ենք տալիս. Ջերմորեն սիրել մեսրոպյան գիրը,  
Պահել մեր ազգի նկարագիրը, Արժանի լինել Սուրբ մայրենիին,  
Հավերժ շենացնել երկիրն հայրենին:

Թշնամու ուղիղ նշանառության տակ հենց նոյեմբերի 9-ին Ամարասի վանական համալիրում տառուցման այսպիսի դաս կազմակերպվել ոչ միայն հայրենասիր-

րություն է, այլև մեծ պատասխանատվություն: Երբ այդ օրը դեռ բոլորիս սրտերը համակում է թախիծը, ափսոսանքն ու ցավը կրծում է ամենքիս հոգին, այսպիսի միջոցառումը ոչ միայն սփովանք է, սպեղանի մեր դարդին, այլև՝ խորհրդավոր կոչ ամենքիս և համայն աշխարհին, որ արցախահայն այս հողում ապրել է վաղնջական ժամանակներից, ուսանել է դեռևս 5-րդ դարում և շարունակում է ապրել ու արարել իր հողում, իր պապերի շահած ու պահած հայրենիքում, իսկ որ ամենակարևորն է, մենք հանձնվող տեսակ չենք, մենք մեր սաներին հենց Ամարասի կամարներից ներքո ենք սեր ու նվիրվածություն քարոզում առ հայրենիք՝ Աստծո աչքերի մեջ ուղիղ նայելով, մենք պատգամում ենք մեր բալիկներին, որ հայը երկնչող ու ընկրկող տեսակ չէ, մեզ ոչ ոք և ոչինչ չի կարող խոչընդոտել՝ ապրելու և արարելու հայրենին, հայեցի, հայաբար:

«Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինելը, պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պետք է սիրել, պաշտել, գգվել հարազատ մոր հարազատ լեզվին. այս սերը միայն կբանա մեր առջև մեր լեզվի անհատում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը» (Ղ.Աղայան):

**Հ. ՉԱԲՐԻԵԼՅԱՆ**  
**Սոսի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի**

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆԻ ԿՏԱԿԸ



«Ինձ հաջորդող սերունդներին, թոռներին, ծոռներին կտակում են տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից, անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, եւ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է:

Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզու: Գիտցեք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կնա, քանի ապրում են, հայոց լեզվին տիրապետելը: Ցանկանում են երջանկություն բուրիոր»:

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՈՍԿԵՀԱՏԻԿ ՇԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՌԸ

Ժամանակակից մանկավարժության զարգացումը բազմակողմանի գործընթաց է, որը ենթադրում է նորարարական մեթոդների, եղանակների և հնարների գրագետ ու ճիշտ կիրառում: Առանց հաղորդակից լինելու ժամանակակից մանկավարժության նվաճումներին, հիրավի, անհնար է կազմակերպել լիարժեք ուսումնադաստիարակչական գործընթաց:

ուումներ, Ա. Սարգսյան-բաց դաս): Հայոց ոսկեդեմիկ այբուբենի ոսկե-հատիկ շարանի «Ա» տառն առաջինն է ներկայանում, որը նախ և առաջ մարմնավորում ու խորհրդանշում է ամենազոր Արարչին, որն ամենատես, ամենազոր ու ամենակարող է:

Այսօր ուրախ ենք այնքան, Հազմվել ենք մենք տոնական, Ինչ էլ պայծառ օր է բացվել, Որքա՛ն մարդ է հավաքվել, Մենք ուզում ենք պատմել կրկին, Թե ինչքան ենք մեծացել, Դարձել ու ինչ ու կարգապահ, Գրքին դարձել ընկեր վստահ:

Այս խոսքերով սկսեցին բաց դասը I «գ» դասարանի աշակերտները (դասվար՝ Ա. Սարգսյան), որին էլ հաջորդեց դասի խթանման փուլը: Այս փուլում ամփոփվեցին երեխաների նախաայբբենական շրջանի ձեռք բերած գիտելիքները՝ բառերի հնչյունային վերլուծություններ, ծայրավոր և բաղաձայն հնչյունների տարբերակում, միավանկ և բազմավանկ բառերի, պատմություն-նախադասություն-բան-վանկ-հնչյուն շղթայի ամրակալում և այլն: Տառի ուսուցանումն առավել մատչելի և հետաքրքիր դարձնելու համար կատարվեց խմբային աշխատանք, որը որպես ուսուցման համագործակցային մեթոդ՝ կենդանի ու մրցունակ է դարձնում դասի ամբողջ ընթացքը: Ուսուցչուհին յուրաքանչյուր խմբի բաժանեց համապատասխան նկարաբարտեր և հանձնարարեց նկարաբարտերը բաժանել վանկերի ու ներկել ծայրավոր հնչյունները: Խմբային



աշխատանքին հաջորդեց իմաստի ընկալման փուլը: «Ա» տառը երեխաներին ներկայացավ իյուրի կերպարով, որն իր հետ բերել էր հանելուկներ: Բոլոր հանելուկների գուշակներում վերաբերում էին «Ա» տառին, փառաբանում ու արժևորում էին «Ա» տառը: «Ա» հնչյուն-տառն էին հիշեցնում նաև դասասենյակի նկարապատկերները, խաղալիքները, խայտաբղետ տերևները և անուշաբույր մրգերը: Իսկ երգն ու ասմունքն ավելի տոնակալում ու հետաքրքիր էին դարձնում դասը: Հ է տ ա ք ք է ի ր երաժշտական դադարից հետո մեկնաբանվեց դասագրքի համապատասխան էջի նկարապատմությունը, առանձնացվեցին «Ա» ունեցող բառերն ու բառակապակցությունները, ընթերցվեցին ու բացատրվեցին նկար-բառերն ու նկարելուկները: Ապա ուսուցչուհին ցույց տվեց «Ա» տառի գրությունը և հանձնարարեց աշխատանք շարքերով. առաջին շարք-թելերով նստարանին գրել Աս

տառերը, երկրորդ շարք-ծեփոնով ծեփել Աս տառերը, երրորդ շարք-հավաքել կտրտած Աս տառերի մասնիկները: Դասի կշռադատման փուլն ամբողջացվեց «Ա» տառի մասին տեսաֆիլմի դիտմամբ և գեղեցիկ անակնկալների մատուցմամբ, որոնցից երեխաներն անչափ տպավորված էին: Նրանք, ստանալով «Ա» տառով քաղցրավենիքներ և շնորհավորագրեր, երդվեցին հետևյալ տողերով՝

Այսօր, այս պահին, Հայացքս հառած Մաշտոցյան գրին, Երդում ենք տալիս՝ Ջերմորեն սիրել Մեսրոպյան գիրը, Պահել իմ ազգի նկարագիրը, Արժանի լինել սուրբ մայրենիին, Հավերժ շենացնել երկիրը հայրենին:

Դասին կարևորվեց խաղ-ուսուցում-խաղ գործընթացը և միջառարկայական կապը: Չորս տարին մեկ պարբերականությամբ կազմակերպում ենք նմանատիպ միջոցառումներ, չորս տա-

րին մեկ բացում ենք այբուբենի «Ա» տառի էջը, չորս տարին մեկ մեզ բախտ է վիճակվում «Ա» տառի մասին տեղեկատվությունը փոխանցել մատաղ սերնդին: Եվ յուրաքանչյուր տարի, յուրաքանչյուր անգամ հույզերի մոր հրաբուխ է ծնվում, և հուզառատ խոհերով ճանապարհվում ենք Հացիկաց գյուղը, դեպի 5-րդ դար՝ Ոսկեդար: «Ա» տառի ուսուցման բերկարներ ոչ պակաս ապրում ենք նաև մենք՝ ուսուցիչներս, ընկալելով այն որպես հոգևոր-մշակութային կարևոր իրադարձություն: Իսկ ժամանակ առ ժամանակ մենք զգում ենք Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի աջակից լինելը:


Շատ կարևոր է «Ա» տառի բազմահանճար խորհրդի հետ երեխաներին փոխանցել հայապահպանումն ու հայրենամանաչյունը: Ի վերջո, այբուբենի շնորհիվ ենք մենք հաղթահարել քաղաքակրթության դառն ու դժմոհակ օրերը և հասել այսօրվան: «Ա» տառից պետք է սկսել ձևավորել ազգային արժանապատվությունը, «Ա» տառով պետք է երեխայի մեջ սկիզբ դնել հայոց բազմաչարքար պատմության մատուցմանը: «Ա» տառի ուսուցմամբ պետք է ոչ միայն արժևորենք Մեսրոպ Մաշտոցի հանճարը, ոսկեդեմիկ մայրենին, այլև մեր ինքնությունը, մեր սկիզբը, ընթացքն ու ավարտը:

Արարենք «Ա»-ով, պայքարենք «Ա»-ով՝ երբեք չկորցրելով պայքարի ոգին: Մենք կվերադառնանք «Ա»-ով:

**Կիանա ՇԱՏՐՅԱՆ**  
**Ստեփ. հ.8 մ/հ դպրոցի դասվար, մ/մ նախագահ**

ԲԱՐՔԱՆ

ԱՐՑԱՆՑԻՆ ԲԱՌԱՍՏԵՐՆԸ



Լեզվաբան, բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն ԲԱՌԱՍՏՐՅԱՆԻ արխիվիկ

ՀԱՐԱԳԻՐ ԲԱՅԵՐ 4

ԿՁՆՎՈՐՈՒՄ ԳՐԱՆԵՆ: Սաստիկ բարկանալ, ջղայնանալ, զայրանալ: ԿՂԳՅԵ ՏԱԼ: Կաղալ: ԿԸՆԳԱՆԱՎ ԱՍԵԼ: Կնոջը հայոյել: ԿԸՆԴԱՅԱԶ ՏԱԼ: Ընդհատ-ընդհատ հաչել: ԿԸՆԴԱՅԱՅՈՒԿ ՏԱԼ: Հասած մրգերը մեկ-մեկ ընկնել: ԿԸՆԸՓՈՒՆԻԿ ԱՍԵԼ: Թանցուկ անել: ԿՈՔՆԵՆ ՀՄԱՐԵԼ: Մեկի թույլ կողմերն իմանալ: ԿՈՔՆԵՆ ԳՐԵՆՑՆԵԼ: Ձայրանալ, ատամները կրծտացնել: ԿՅԸՐՈՒՄ ԳՐԵՆՑՆԵՆ ԻՆԻԼ: Գարուն դուրս գալ: ԿՈՒՆԸՎՈՐԵԿ ՏԵՆԱԼ: Իրար հետ մտերմանալ: ԿԻԺՈՒՄ ԳՐԱՆԵՆ: Գծությունը բռնել, կատարել, մոլեգնել: ԿՅԻՆ ԱՍԵԼ: Գին նշանակել, գնահատել: ԿՅԻՆԸ ԸՆԳՆԵԼ: 1.Արծեքը իջնել: 2.Արծեգրկվել: ԿՅԻՆԸ ԿՈՏՐԵԼ: Գինը պակասեցնել: ԿՅԻՆԸ ՔԸՇԸՑՆԵԼ: Արծեքն իջեցնել: ԿՅԻՆ ՏԱԼ: Ապրանքին համապատասխան արծեք տալ, գնահատել: ԿՅԻՆ ՔՅԻՆԻԼ: Գնահատվել: ԿՅԻՐ ԱՍԵԼ: Գրով հմայություն անել: ԿՅԻՐԿԱՊ ԱՍԵԼ: Հեղելով կարգալ: ԿՅԻՑ ԱՍԵԼ: Երկու ձեռքերի ափերը միացնել: ԿԸԱՓԵՆ ՏԱԼ: 1. Բերանը բացվելու անել ուշագնացության կամ մեռնելու ժամանակ: 2.Սաստիկ բաղոցի ոռոմալ: 3. Ուտելու կամ խմելու սաստիկ պահանջ զգալ: 4. Մեկին ունենալու, նրա հետ կենակցելու բուռն ցանկություն ունենալ: ԿԸԿՈՆԶԻ ՏԱԼ: Գլուխը ծոծի տալ: ԿԸՊՆԴՐԵԳԻ ՏԱԼ: Գլխի վրա գլորվել: ԿԼԽԱՎ ԱՍԵԼ: 1.Գլխի շարժումով մի բան գլխի գցել: 2.Բարևել: ԿԼԽԱՎԸ ՇՈՒ ՏԱԼ, ԿԼԽԱՎԸ ՊՏԸՊԱՏ ԱՍԵԼ: Մեկին շատ սիրել: ԿԼԽԱՎԸ ՔԱՍԵ ԸՆԳՆԵԼ: Երևակայական ամբողջությունից բաների մասին մտածել: ԿԼԽԱՎ ՏԱՆԵԼ: Խաբել, մոլորեցնել: ԿԼԽԵՆ ՁՈՒ ՏԱԼ: 1.Իր ուժերից վեր բաների մասին ապարդյուն շատ մտածել: 2.Շատ խորը, բազմակողմանի մտածել: ԿԼԽՈՒ ԸՆԳՆԵԼ: Հասկանալ, գլխի ընկնել: ԿԼԽՈՒ ՔՅԻԼ: Հասկացնել, բացատրել: ԿԼԿԼԻՄ ՏԱԼ: Զիլ ձայնով երգել: ԿԼՈՒԸ ԵՂԵԼ: Սուտ խոստումներով խաբել: ԿԼՈՒԸ ԹԱՓ ՏԱԼ: 1.խոսեցնելով զրուցակցի խելքը չափել: 2.խորամանկելով որևէ գաղտնիք իմանալ: ԿԼՈՒԸ ԹԻՄԱՐԵԼ: 1.Գլուխը շոյել: 2. Սուտ խոստումներով խաբել: ԿԼՈՒԸ ԹՔԱՆԱԼ: 1.Ձերմությունը բարձրանալ: 2.Հարբել: ԿԼՈՒԸ ԽԱՆՎԵԼ: Շատ զբաղված լինել: ԿԼՈՒԸ ԿԱՆ ԱՍԵԼ: 1.Ամոթից կամ վշտից գլխիկոր լինել: 2.Խեղճանալ, տխրել: ԿԼՈՒԸ ԿԱՊԵԼ: 1.Նշանել: 2.Ամուսնացնել: 3.Մեկին խաբելով մի բան վզին դնել: ԿԼՈՒԸ ՇԱՂՎԵԼ: Շփոթվել, անելիքը չիմանալ: ԿԼՈՒԸ ՍՂԱԼԻԼ: Գլուխը շոյել, փաղաքջել: ԿԼՈՒԸ ՏԱՆԵԼ: 1.Գլխահան անել: 2.Ձանձ-

րացնել, զգվեցնել: ԿԼՈՒ ԿՈՏՐԵԼ: Մի բանի վրա երկար մտածել: ԿԼՈՒ ՊԻՐԻԼ: Գործը հաջողեցնել: ԿԼՈՒ ՓՈՆԵԼ: Բանջարեղենը, արմատապտուղներ կամ գլուխ ձևավորել: ԿԼՎԸԿՈՒ ԱՍԵԼ: Գրկախառնվել: ԿԾԵԳ ՊԵՆԱԼ: 1.Որևէ նյութի շուրջ խոսակցություն սկսել: 2.Գաղտնիքը բանալ: ԿԾԵԳ ԿՏՐԵԼ: Կծկվել, կծիկ դառնալ, կուչ գալ, սեղմվել: ԿԾԿԾՈՆԸ ԵՐ ԱՍԵԼ: Սաստիկ ցավ պատճառել: ԿԾԿԾՈՆԸ ԵՐ ԻՆԻԼ: Սաստիկ ցավը զգալ: ԿՂԼԳՅԵ ՏԱԼ: Կաղալ: ԿԼԳՈՐՈՒՄ ԱՍԵԼ: Ամուսնու նկատմամբ իր պարտականությունները կատարել: ԿԼԴԸԿԱՅՈՒԿ ՏԱԼ: Հասած մրգերը կենտկենտ ծառից ընկնել: ԿԼԴԵ ՏԱԼ: 1.Գլորվել: 2. (փխբ.) Մեռնել: ԿԼԸՆԶԿՅԱՐՄՈՒՐ ԿԱՊԵԼ: 1.Երկնքում ծիածան հայտնվել: 2.Ամուսնանալ: ԿԼԹՈՆԱՎԵՐՍ ԱՍԵԼ: Քաղած այգու մնացած միջուկը հավաքել: ԿՈՐԱՅԱՆ ԱՍԵԼ: Գործիքի, մրգի կորը հանել: ԿՈՒԱՎՆ ԸՆԳՆԵԼ: Վզին փաթաթվել, գրկախառնվել: ԿՈՒՆԸ ԿԵՆԱԼ: 1.Գոտեմարտել: 2.Իրար հետ մրցել: ԿՈՒՆԵՆ ԸՆԳՆԵԼ: Համառել, կամակորուքությունը բռնել: ԿՈՒՆԿԸ ԿՏՐԵԼ: 1.Մոտից չհեռանալ: 2.Սիրահետել: ԿՈՒՆԵՆ ՔՅԻԼ: 1.Համառությունը հաղթահարել: ԿՈՒՆ ՏԱԼ: 1.Կոխտել: 2.Ոտքով տրորել: ԿՅՈՂԸ ԿԵՆԱԼ: Թաքնվել: ԿՈՒՂ ԱՍԵԼ: Մեռնել: ԿՈՒՂ ՓՈՆԵԼ: Բանջարեղենը արմատապտուղներ կամ գլուխ ձևավորել: ԿՈՂ ԱԾԵԼ: 1.Կծկել, սեղմել: 2.Աչքերը կկոցել: ԿՈՂ ԿՅԱԼ: 1.Կուչ գալ: 2.Կծկվել, սեղմվել: ԿՈՏԱՎ ԱՍԵԼ: Ձբաղեցնել: ԿՈՏԱՎ ԸՆԳՆԵԼ, ԿՈՏԱՎ ԻՆԻԼ: Կարևոր գործով մի տեղ գնալ և կերուխումի պատճառով ուշանալ: ԿՅՈՏԵՆ ԹՈՒԼԱՆԱԼ: Քաղցած լինել: ԿՅՈՏԵՆ ՀԱՍԸՑՆԵԼ: 1.Գիրանալ: 2.Հարստանալ: ԿՅՈՏԵՆ ՊԸՆԴՑՆԵԼ: Կուշուտել: ԿՈՏՐ ԸՆԳՆԵԼ: 1.Սնանկանալ: 2.Խեղճանալ: ԿՈՏՐ ՔՅԻԼ: 1.Սնանկացնել: 2.Նվաստացնել: ԿՈՐԾԱ ԸՆԳՆԵԼ: 1.Աշխատանքի չգնալ, աշխատանքից բացակայել: 2.Անաշխատունակ դառնալ: 3. Աշխատանքից գրկվել, աշխատանք չունենալ: ԿՈՐԾԸ ԱՉ ՔՅԻՆԻԼ: Գործերը հաջող ընթացալ: ԿՈՐԾ ՊԵՑ ԱՍԵԼ: Գործ բաց անել: ԿՈՐԾ ԾԵՆ ՔՅԻՆԻԼ: Գործը ձախողվել: ԿՈՐԾԸ ԿՈՐԾԵՆ ՕՏԵԼ: Շատ աշխատանք լինել: ԿՈՐԾԻ ՔՅԻԼ: Բանցնել, աշխատեցնել: ԿՈՐԾ ՓՈՆԵԼ: Գործ ձեռնարկել, սկսել աշխատեցնել: ԿՅՈՔ ՏԱԼ: Քաջալերել, ոգեշնչել: ԿՈՒՎԱՊ ՏԱԼ: Խաղողի որթը ձողին կամ լարին կապել: ԿՈՒՎԵԼԸ ՕՍՄԵԼ: Չարչարել, նեղել, տանջել: ԿՈՒՎ ԱՍԵԼ: 1.Կռվել, պատերազմել: 2.խոսքով կռվի բռնվել, վիճել: ԿՈՒՎ ԸՆԳՆԵԼ: Կռիվ, պատերազմ սկսվել: ԿՈՒՎ ՏԱԼ, ԿՈՒՎ ՏԱԼ: Կռվել, պայքարել, վիճել: ԿՈՒՎ ՔՅԻԼ: 1.Կռիվ, պատերազմ սկսել: 2.Կռիվ, խառնակություն առաջացնել: ԿՈՒՆԴԵԿ ՏԵՆԱԼ: Շերտությունից կամ հիվանդությունից կորսված դառնալ: ԿՈՒՊԱՏԻ ԽՈՒՆԵԼ: Այլաբանորեն խոսել: ԿՈՒՊԵՑՈՒՐ ԱՍԵԼ: Աշխատել: ԿՈՒՆԸՓՈՆՈՒԿ ԱՍԵԼ: Թանցուկ անել: ԿՈՔՆԵՆ ԱՈՆԵԼ: Թթու բան ուտելուց ատամները զգայուն դառնալ: ԿՈՔՆԵՆ ՀՄԱՐԵԼ: Մեկի թույլ կողմերը իմանալ և օգտվել դրանից:

ԿՈՔՆԵՆ ԳՐԵՑՆԵԼ: Սպառնալ: ԿՍԸՀԱՐ ԱՍԵԼ: Գուռը, պատուհանի փեղկը և այլն կիսաբաց անել: ԿՎԿԸՎՈՆԸ ԵՐ ԻՆԻԼ: Բարձր տրամադրություն ունենալ: ԿՏՈՑԸ ԿԱՐՈՒՄ ԱՍԵԼ: Սնվել, կերակրվել: ԿՏՈՑԸ ՔԱՐԵՆ ՔԱՍԵԼ: Տվածը ետ չտալ, ուրանալ: ԿՐԱՎ ԸՆԳՆԵԼ: Սկսել վառվել, հրդեհվել, բոցավառվել: ԿՐԱՎԸ ՈՒՐՈՒՐ ԱՍԵԼ: Կրակը խառնել, արծարծել, բոցավառել: ԿՐԱՎ ՏԱԼ: 1.Հրդեհել: 2.Վառել, արծարծել: ԿՐԱՎՏԱՆ ԱՍԵԼ, ԿՐԱՎՏԱՆ ՏԻՆԻԼ, ԿՐԱՎՏԱՆ ՔՅԻԼ: Կարկատել: ԿՐԱՎՈՒՎ ԿՅԱԼ: 1.Բողոքով լռել, պապանձվել: 2.Ախորժակը լրիվ փակվել: ԿՅՐՄԻՐԻՆ ՏԱԼ: Կարմիր գույն ստանալ: ԿՅԱՆ ԱՍԵԼ, ԿՅԱՆ ՏԱԼ: 1.Կցել, իրար միացնել: 2.Մեկին որևէ բանի մասնակցի դարձնել: ԿՈՒՎՈՒՔ ԱՍԵԼ: Կկզել, պագել: ԿՅՈՒՂԸԿԱՆԵՆ ՏԱԼ: Պահմտոցի խաղալ: ԿՈՒՄ ԱՍԵԼ: 1.Ընկնել: 2.Թուրքը հավաքել բերանի մեջ երեսին քթելու համար: ԿՈՒՊԱՐ ԱՍԵԼ: Մի տեղ շատ գնալ-գալ: ԿՈՒՐԿՈՒՄ ԱՍԵԼ: 1.Երկանքով ձավար պատրաստել: 2.Այլուր մեծ-մեծ աղալ: 3.(փխբ.) Արագ շատախոսել: ԿՈՒՓԵ-ԿՈՒՓԵ ԱՍԵԼ: ԿՈՒՓԵ ՏԱԼ: Հրահրել, հրել: Գ ԶԱԼԱՍ ԱՍԵԼ: Ներքին մղում ունենալ, կամենալ: ԶԱԼ ԸՆԳՆԵԼ: Սկսել հալվել: ԶԱԼ ԻՓԻԼ: Ճաշը որակով եփել: ԶԱԼԻ ՏԱԼ: Գնդակով խաղալ: ԶԱԼ ՏԱԼ: 1.Չգտել: 2.Տրամադրել: ԶԱԼՈՒՄԱԸ ԱՍԵԼ: Ուժասպառ անել, հյուծել: ԶԱԼՈՒՄԱԸ ԻՆԻԼ: Հալումաշ դառնալ: Ուժասպառ լինել, հյուծվել: ԶԱՎԱԼ-ԶԱՎԱԼ ԱՍԵԼ: Բռնելու համար հետևից ընկնելով հալածել: ԶԱՎԱԼ-ԶԱՎԱԼ ԸՆԳՆԵԼ: Շրջապատումից ազատվելու համար վերջին ճիգերը գործադրել: ԶԱՎԵՆ ԿԵՆԱԼ: Օգնել: ԶԱՄԵՆ ԸՆԳՆԵԼ: Մի ուտելիք շատ դուր գալ: ԶԱՄԸ ՏՅՈՒՄ ԿՅԱԼ: 1.Անհամանալ: 2.(փխբ.) Չանձրալի դառնալ: ԶԱՄԸ ՕՆԵԼ: Համտեսել: ԶԱՅԻԼ-ՄԱՅԻԼ ԿՏՐԵԼ, ԶԱՅԻԼ-ՄԱՅԻԼ ՄԱԼ: Զմայլվել, սքանչանալ, զարմանալ: ԶԱՅ-ՀՈՒՅ ԱՍԵԼ: Աղմկել, աղաղակել: ԶԱՅԳԵՐ ԱՍԵԼ: Նմանակել: ԶԱՇԱՆ ԱՍԵԼ: 1.Կալսելու համար հացահատիկի խրճերը կալում փռել: 2.Ցրել, ցրիվ տալ: ԶԱՊՈՒՆ-ՀԱՊՈՒՆ ԸՆԳՆԵԼ: Թռչուններին խուճապի մատնել: ԶԱՎԱ ԱԾԵԼ: Պարեղանակ նվազել: ԶԱՎԱ ԱՍԵԼ: Բարենպաստ եղանակ լինել: ԶԱՎԱՆ ԻՆԻԼ: ԶԱՎԱՆ ԿԵՆԱԼ: Հավան լինել: ԶԱՎԱՆ ՆՍՏԵԼ: 1.Եղանակը մեղմանալ: 2.Բարկությունը անցնել, տրամադրությունը լավանալ: ԶԱՎԱՆ ՕՆԵԼ: 1.Խեղճացնել: 2.Հնազանդեցնել: ԶԱՎԱՔ ԻՆԻԼ: Հավերի թառ լինել: 2.Խմբվել: 3.Չուսալ լինել: ԶԱՐԱՆՑ ՔՅԻՆԻԼ: 1.Ամուսնացած աղջիկը հոր տուն այցելության գնալ: 2.(փխբ.) Հասկալալած արտի ալիքածև շարժվելը քամուց: ԶԱՓՈՒՆ ՎԵՑ ՕՆԵԼ: Կանխագուշակել: ԶԱՔՅԻ ՆԵՍՍՍ ՏԱԼ: Մականուն կայցնել: ԶԱՔՅԻՆ ՔԵՎՈՒՆԵԼ: 1.Աշխատանքից հեռացնել: 2.Կնոջը մեկընդմիջտ հորանց տուն ուղարկել: ԶԵՂԵ ԱՍԵԼ: Դեռահաս ցորենը աղանձել: ԶԵՆ ԱԾԵԼ: 1.Եռացնել: 2.Չողել: ԶԵՆ ԸՆԳՆԵԼ: 1.Եռալ, եփել: 2.Շոգել: ԶԵՆ ՏԱԼ: 1. Եռացնել: 2.Մետաղը քուրալում շիկացնել: 3.Չողել: ԶԵՆ ՔԱՇԵԼ: Հիվանդանալ: ԶԵՏԱՆ ԸՆԳՆԵԼ: 1.Հետապնդել: 2.Հետևից գնալ: 3.Հալածել: ԶԵՏՈՒՄ ԿԵՆԱԼ: Ամեն ինչ անել, որ գործը գլուխ գա: ԶԵՐԻՔՅ ԱՍԵԼ: 1.Բավականացնել: 2.Բավարարել:

ԶԹԵԹԱ ՏԱԼ: Սպառնալ, վախեցնել: ԶԼՈՐ ԸՆԳՆԵԼ: Ոլորվել: ԶԴԵ ԸՆԳՆԵԼ: Ճանապարհվել: ԶԴԵ ՏԻՆԻԼ: 1.Ճանապարհել: 2.Ուղեկցել: ԶԿՂՊՈՆԱՍ ԱՍԵԼ: Տունը և բակը սրբել, մաքրել: ԶՈԼ ԿԵՆԱԼ: Այծերի, ոչխարների, եղջերավոր անասունների պոզերով կռվել: ԶՈՐ ԱՍԵԼ: 1.Դալար շիվը ոլորել: 2. (փխբ.) Ազահաբար խժռել: ԶՈՐԸ ՔԱՇԻԼ: Արտաքինով կամ բնավորությամբ հորը նմանվել: ԶՐԲԸՁՐՐԱՎ ԱՍԵԼ: Սպառնալ: ԶՐԵՅԻՆ ՀԱՍՆԵԼ: Օգնության հասնել: ԶՐԹՆՔԱ ԵՏ ՆՂԱՐԱ: Ուշացած նվազ: ԶՐԿԵՐՈՒՄ ԱՍԵԼ: Համատեղ աշխատել: ԶՈՒՇՏ ԱՍԵԼ: Թռչուններին խրտնեցնել: ԶՓՈՒՄԱՉԸ ՔՈՐ ԿՅԱԼ: Փողը ստանալու կամխանջան: Դ ԴԱԹԸ ԵՂԵԼ: Մի այլ բան անելու համար ժամանակ գտնել: ԴԵՂԱՃ ԵՇԻԼ: Թեք աչքով, անբարյացակամ նայել: ԴԵՅՆԻՆ ԵՇԻԼ: Եղունգին նայելով գուշակություն անել: ԴԺԻ ՏԱԼ: Մի բան ցույց տալով դիմացինի նախանձը շարժել: ԴԻ ՏԱԼ: Անասուններին քշել, հեռացնել: ԴՈՒՔ ԿԵՆԱԼ: Կռանալ, կկզել: ԴՈՒՐՈՒ ԿԱՆԶԻԼ: Մեռնակ սգալ: Ծ ԾԱԹՏԻ ՏԱԼ: Ծամածություններով պարել: ԾԱՎԱՍԸ ՆՄԱՆԱԼ: Թեթև քրտնել: ԾԱՎԱՍՈՒ ԿՅԻՐ: Ծակատագիր: ԾԱՎԸ ԸՆԳՆԵԼ: Մեկի ձեռքն ընկնել: ԾԱՎԳՑ ԶՅԻԼ: 1.Չեք բերել: 2.Որսալ: 3.Ճանկել: ԾԱՇՔՈՆ ՏԱԼ: Ծաշից հետո քնել: ԾԵԼԼ ԱՍԵԼ: Շտապել: ԾԵՐՍԸ ՓՈՆԵԼ: Տեղեկ: ԾԻՆՁԵՆ ԱԾԵԼ: Ճոճքով օրորվել: ԾԻՏ ԱՍԵԼ, ԾԻՏԱՎՆ ԸՆԳՆԵԼ: Գրկախառնվել: ԾԽԸՊՈՒՐԹ ԱՍԵԼ: Ձարդուփշուր անել, ջարդել: ԾԽԸՊՈՒՐԹ ԻՆԻԼ: Ձարդուփշուր լինել, ջարդվել: ԾՆԱՆԱԿ ԿՏՐԵԼ: Շատախոսել: ԾՄԲԸՊՈՒՄԻ ԱՍԵԼ: Երերալ: ԾՄՈՐ ԱՍԵԼ: Հացը ձեթի մեջ տապակել: ԾՈԹ ԱՍԵԼ: 1.Ճեղքել, կտրել: 2.Կիսել, բաժանել: ԾՈԹ-ԾՈԹ ԱՍԵԼ: 1.Կտոր-կտոր անել: 2.Սաս-մաս անել: 3.Իրար միջև բաժանել: ԾՈՒՅՏ-ԾՈՒՅՏ ԱՍԵԼ: Զույգերով հաշվել: ԾՈՒՅՑԻ ԱՍԵԼ: Լրիվ մզել: ԾՈՒՐ ԱՍԵԼ: Սերտել, անգիր անել: Ս ՄԱՆԱՆ ՎԵՑ ՕՆԵԼ: Կռահել, գուշակել: ՄԱՆԸ ԹԱՓ ՏԱԼ: Սպառնալ: ՄԱՆԸ ԹԻԼ ԿԱՊԵԼ: Տվյալ բանը անելու համար ազդանշան ծառայել: ՄԱՆԸ ԿԾԵԼ: Կռահել, գուշակել: ՄԱՆՈՒ ՓԹԱԹԱՆ ԾԻՆԻԼ: Մի անախորժ դեպք շարունակ հիշեցնել, հանդիմանել: ՄԱՇԿԵՆ ԸՆԳՆԵԼ: 1.Համառությունը կորցնել: 2.Պարտվել: ՄԱՉ ԱՍԵԼ: 1.Ընկույզի, տկողմի միջուկը հանել: 2.Չոր լորու, ոլորի միջուկը պատյանից հանել: 3.Հավի, հնդկահավի փորը լցնել: ՄԱՐԹԱՄԱՉ ՄՆԵԼ: Մարդկանց շարքն անցնել, շրջապատ ստեղծել: ՄԱՐԹՈՒ ՔՅԻՆԻԼ: Ամուսնանալ (աղջիկը): ՄԱՐ ՏԱԼ: 1.Կոնկել: 2.Կթելուց հետո հորթը, գառը, ուլը թողնել, որ մորը ծծի: ՄԵՆԱԿ ԸՆԳՆԵԼ: Վատ պայտելով անասունը կաղ դառնալ: ՄԵՆԱԿ ՔՅԻԼ: Վատ պայտելով անասունը կաղ դարձնել: ՄԵՆԿԸ ԿՅԱԼ: Խղճալ, գթալ, կարեկցել: Շարունակելի

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ ՍԱՄՐՈՅԻ ԱՃԵՆԱՐԿԻ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՃԵՆԱՐԿԻ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ



Գաղտնիք չէ, որ սպորտի ոլորտում մեր մարզիկների արձանագրած հաղթանակներն ու նվաճած բարձր մրցանակները ռազմավարական նշանակություն ունեն մեզ համար: Տարբեր մրցահարթակներում լավագույնս հանդես գալով՝ մեր մարզիկները բարձրացնում են մեր երկրի վարկանիշը՝ միջազգային հանրությանը ցույց տալով արցախցու անկողնում ոգին: Պատերազմից հետո նման հաղթանակներն ավելի քան պահանջված են: Ըստ այդմ էլ մեր մարզիկները, պայքարելով տարբեր մրցասպարեզներում, կարողանում են հայրենիք վերադառնալ հաղթանակներով ու տարբեր մրցաշարերում մրցանակային պատվավոր տեղեր գրավելով:

Հերթական մրցանակն Արցախ բերվեց սամբոյի աշխարհի եւ Եվրոպայի մրցանակակիր, Եվրոպայի գավաթի մրցանակակիր, Եվրոպական երկրորդ խաղերի մրցանակակիր, արդեն աշխարհի փոխչեմպիոն Դավիթ Գրիգորյանի շնորհիվ: Արցախցի մարզիկը ծնվել է 1990թ. դեկտեմբերի 7-ին Ստեփանակերտում: Մանկությունից սկսած հաճախել է սամբոյի մարզումների ու պարապել սամբոյի անվանի մարզիչներ ու հեղինակություններ Էռնեստ Միրզոյանի, Ազատ Անդրյանի եւ Աշոտ Դանիելյանի հետ:

Նոյեմբերի 11-ից 13-ը Գրղըզստանի մայրաքաղաք Բիշքեկում անցկացվեց Սամբոյի աշխարհի 2022թ. առաջնությունը, ուր խաղարկվեց մարզական սամբոյի կանանց եւ տղամարդկանց, մարտական սամբոյի տղամարդկանց 7-ական քաշերում մեդալների 21 հավաքածու: Առաջնությանը մասնակցեց ավելի քան 50 երկիր՝ աշխարհի չորս մայրցամաքներից: Հաղթողի կոչման արժանանալու համար պայքարում էին սամբոյի աշխարհի ուժեղագույն մարզիկները:

Արցախից առաջնությանը մասնակցելու էին մեկնել 4 հոգի՝ երկու մարզիկ եւ վաստակավոր մարզիչ Էռնեստ Միրզոյանն ու միջազգային կարգի մրցավար Ազատ Անդրյանը՝ Հայաստանի հավաքականի կազմում:

Դավիթ Գրիգորյանը (20+) գոտեմարտել է 88 կգ քաշային կարգում աշխարհի տիտղոսակիր սամբիստների հետ: Դավիթի ելույթները հաջող էին: Նախնական գոտեմարտերում նա հեշտությամբ հաղթեց ֆրանսիացի ժան Դելոնսային (3:1), ապա գրեթե հավասար պայքարում (1:1) հաղթահարեց վրացի Պատա Դվինիաշվիլու արգելքը: Մեր մարզիկի հաջորդ մրցակիցը ադրբեջանցի Ջեյհուն Հուսեյնովն էր: Բավականին դրամատիկ ու լարված գոտեմարտն ի վերջո ավարտվեց արցախցի մարզիկի հաղթանակով (5:4): Ոսկե մեդալի համար նրա մրցակիցը ռուս մարզիկ՝ աշխարհի քառակի չեմպիոն Սերգեյ Ռյաբովն էր: Ահեղ մրցակցին դիմադրել չկարողանալով՝ Դավիթը բավարարվեց արծաթե մեդալով, որը նույնպես մեծ հաջողություն է:

Մեզ հետ ունեցած հեռախոսակապով Դավիթը խոստովանեց, որ դժվար գոտեմարտեր էին, քանի որ պայքարում էր ուժեղագույն սամբիստների հետ: Վրացի մարզիկի հետ ունեցած գոտեմարտն է առանձնացնում որպես ամենադժվարը, իսկ կարեւոր գոտեմարտը համարում է ադրբեջանցու հետ ունեցածը, որին կարողացավ հաղթել: Ռուս մարզիկը շատ էր փորձառու, այս անգամ նրան հաղթել չստացվեց, բայց հավանականություն կա, որ հաջորդ տարի Դավիթ Գրիգորյանը կրկին կմասնակցի առաջնության եւ կհանդիպի նույն մարզիկին, որին արդեն կկարողանա հաղթել:



Ս տ ե փ ա ն ա կ ե ռ տ ի օղակածե պուրակը դարձել է հաղթանակներ նշելու, հաղթողներին դիմավորելու ու փառավորելու խորհրդանիշ, ինչի ակամատեսը եղանք նաեւ նոյեմբերի 22-ին ավանդական կարատե-դո մարտարվեստի աշխարհի փոխչեմպիոնին դիմավորելիս:

Նոյեմբերի 15-20-ը Սլովենիայի Կրանսկա-Գորա քաղաքում անցկացվեց Ավանդական կարատեի աշխարհի 21-րդ առաջնությունը (ITKF), որին մասնակցում էին 25 երկրներից 530 մարզիկներ: Հայաստանի ավանդական կարատեի հավաքականի 18 մարզիկներ մասնակցեցին առաջնությանը, որոնցից մեկը արցախցի Տիգրան Գեւորգյանն է: Մեր հայրենակիցը կարողացել է լավագույնս հանդես գալ եւ ունենալով հինգ մեդալներ՝ արծաթե մեդալի:

Առաջնությանը մասնակցում էին աշխարհի ուժեղագույն մարզիկները լավագույն քիմերից, ինչպիսիք են Բրազիլիան, Ռումինիան, Իտալիան, Եգիպտոսը: Արցախցի մարզիկ Տիգրան Գեւորգյանն առաջին մեդալներն ունեցել է Լեհաստանը ներկայացնող մարզիկի հետ եւ կարողացել է հաղթել նրան: Հետո մրցագործուն

հանդիպել է ռումինացի մրցակցին, որին նույնպես հաղթել է: Հաջորդ մրցակիցը բրազիլացի էր, որին հաղթելուց հետո մտել է կիսաեզրափակիչ, որտեղ նույնպես հանդիպել է բրազիլացի մրցակցի ու հաղթելով՝ մտել եզրափակիչ: Սակայն եզրափակիչում Տիգրան Գեւորգյանին չի հաջողվել ոսկի գրավել, նա բավարարվել է երկրորդ մրցանակային տեղով: Ավանդական կարատե-դոյի փոխչեմպիոնը պատրաստվում է մասնակցել հաջորդ տարվա աշխարհի առաջնությանը եւ խոստանում է ոսկե մեդալ բերել Արցախ:

Սիրելի մարզիչն մեծ ոգեւորությամբ դիմավորելու էին եկել ավանդական կարատե-դոյի ֆեդերացիայի սաները: Փոխչեմպիոնին դիմավորել են ավանդական աղուհացով, դափնեա՝ սակով ու մեծ ուրախությամբ: Ընդհանրապես էին եկել ԱՀ կրթության, գիտության, մշակույթի



եւ սպորտի նախարարը, սպորտի ոլորտի պատասխանատուներ, մարզիչներ, մարզիկներ, ընկերներ, հարազատներ ու երկրպագուներ: Իսկ ամենամեծ բերկրանքը մարզիչ ու սեմսեյ Արամ Գեւորգյանին է, որի հայրական ու մարզական հովանու ներքո ծեւավորվել է այսօրվա փոխչեմպիոնը:

Ընդհանրապես ենք ու շնորհակալ ենք մեր եռագույնը տարբեր մրցահարթակներում մշտապես ծածանելու համար, նրանց քրտնաջան աշխատանքի արդյունքը վայելում ենք մենք բոլորս:

- Հաղթանակը նվիրվում է մեր զոհված ընկերների հիշատակին,- Գնել է Տիգրան Գեւորգյանը:

ՓԱՓՈՒԿ ՃԱՆԱԴԱՐԻ ԱՐՎԵՍԸ



Կանոյի մարտարվեստը միայն առանց զենքի ձեռնամարտ չէ: Դա ամբողջական ուսումնական համակարգ է, որը զարգացնում է ֆիզիկապես եւ բարոյապես: Չյուդոն տվորեցնում է հաղթել հակառակորդին ազնիվ պայքարով, հաշվարկել սեփական ուժերը, կոփում է կամքը, դարձնում կարգապահ, զարգացնում ինքնատիրապետումը: Չյուդոն իր մեջ ներառում է մի քանի ճապոնական մարտարվեստների լավագույն տեխնիկաներ: 1964 թվականից այն մտել է օլիմպիական ծրագրի մեջ:

Չյուդոյի բնութագրիչ առանձնահատկությունը վտանգավոր հարվածների բացակայությունն է, որոնք մրցակցի համար կարող են մահաբերել էլ լինել: Դրանով Չյուդոն հասանելի է երեխաների եւ հասուն տարիքի մարդկանց համար:

2011թ. Չյուդոյի միջազգային ֆեդերացիան, որի կազմի մեջ են մտնում շուրջ 200 ազգային ֆեդերացիաներ բոլոր մայրցամաքներում, որոշել է առանձնացնել օր՝ նվիրված ձեռնամարտի պայքարի արդի-

ական ու մարդկային տեսակին:

Չյուդոյի համաշխարհային օրը նշում են մարզիկներ, մարզիչներ եւ այն մարդիկ, ովքեր հետաքրքրված են այս մարզածեսով: Ավանդության համաձայն կազմակերպվում են միջջրգառումներ, մաստեր-կլասներ չեմպիոնների մասնակցությամբ: Փորձառու մարզիկները կիսվում են սկսնակների հետ հաղթանակի իրենց գաղտնիքներով, բացատրում են պայքարի փիլիսոփայական հիմունքները: Այդպես ավելի է մասսայականանում ճապոնական այս մենամարտը, որը, սակայն, գովազդի կարիք չունի, քանի որ իր ֆանատների թվով այն երկրորդ տեղում է ֆուտբոլից հետո: Չյուդոյի երկրպագուների մեջ կան շատ նշանավոր մարդիկ՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինը, Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը, ռեժիսոր Գ. Ռիչին, դերասաններ Չ. Նորիսը, Ս. Սիգալը:

Չյուդոյիստների տոնի խորհրդանիշը միմյանց խոնարհումն է, որից սկսվում են մենամարտերը: Այն ցուցադրում է հարգանք մրցակցի հան-

դեպ:

Չյուդոյի պատմությունը անհնար է հիշատակել առանց նրա հիմնադրի մասին պատմելու: Հետաքրքրաշարժ են ոչ միայն Չյուդոյի ծագման հետ կապված պատմությունները, այլև նախապատմությունն ու առասպելները:

17-րդ դարի սկզբին ճապոնիայում դադարել էին ներքին կռիվները: Անվերջանալի ճակատամարտերի դարաշրջանը մնացել էր անցյալում, գրահն այլեւս պետք չէր: Մինչդեռ մարտարվեստները շարունակում էին զարգանալ: Ավելին, գրահի բացակայությունն ավելացրել էր ճակատամարտողների հնարավորությունները: Այդ ժամանակաշրջանին է հարիր առանց զենքի օգտագործման մարտ վարելու արվեստի ծաղկումը: Այն ժամանակ է ծեւավորվել ջուջուցուի տեխնիկան, որը հետագայում դարձել է Չյուդոյի հիմքը: Ճապոնեցի թարգմանաբար «ջուջուցու»՝ նշանակում է փափկության արվեստ: Այդ անվանումը ճշգրտությամբ բնութագրում է տվյալ տեխնիկան: Ջուջուցուի հե-



Ջիգարու Կանո, մարտարվեստների վարպետ, Չյուդոյի հիմնադիր

տեւորը հաղթում էր մրցակցին՝ չդիմադրելով իր ուժով, այլև օգտագործելով առաձգական հնազանդության սկզբունքը՝ սկզբում հյուծել մրցակցին, հետո հաղթել: Անհրաժեշտ է բաց թողնել մրցակցի ուժը, թողնել, որ այն անցնի կողքով կամ վերաուղղորդել այն, իսկ երբ նա կիրովի, ավելացնել քո ջանքը: Թե ինչպես է առաջացել այդ տեխնիկան, պատմում է առասպել-

Չոկտեմբերի 28-ը հայտնի ամսաթիվ է ամբողջ աշխարհի Չյուդոյիստների եւ ճապոնական մենամարտի երկրպագուների համար, որը մտնում է աշխարհի ամենահայտնի մարզածեսների քառյակի մեջ: Դրանով մարզվում է 28 միլիոն մարդ, որից 8 միլիոնը ճապոնացիներ են: Չյուդոյի համաշխարհային օրը նվիրված է մարտական այս արվեստի հիմնադիր Ջիգարու Կանոյին, որը ծնվել է 1860թ. հոկտեմբերի 28-ին:

ՀԱՐՁԱՆԱԿՆԵՐ

ԿԻՈԿՈՆԻՆ ԿԱՐԱՏԵԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՅԵԼ ԵՆ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ



Արցախի «Օյամա» կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի սաները մասնակցել են տարեկան առաջնությանը և արձանագրել լավ արդյունք: Նոյեմբերի 26-28-ը Երեւան քաղաքում անցկացվեց կիոկուշին կարատեի ֆեդերացիայի առաջնությունը, որին Արցախից մասնակցել է 58 մարզիկ: Առաջնությանը մասնակցել են կիոկուշին կարատեի մարզիկներ Հայաստանի տարբեր թիմերից Երեւանից, Արտաշատից, Տավուշի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի եւ Արարատի մարզերից:

Առաջնությանը մասնակցել են այն մարզիկները, որոնք չէին մասնակցել մինչ

այդ կայացած միջազգային առաջնությանը: Մասնակցող մարզիկներից ամենափոքր տարիք ունեցողները 6 տարեկան մարզիկներն էին, իսկ ամենաբարձրը՝ 17: Համապատասխան տարիքային խմբերում եւ քաշային կարգերում պայքարել են դեռես սկսնակ մարզիկներ եւ զոտեվորման միջին ու բարձր որակավորում ունեցող մարզիկներ:

Կարատեիստներին Արցախից ուղեկցել են կիոկուշին վեց մարզիկներ: Մեր մար-



զիկները զբաղեցրել են 43 մրցանակային տեղեր, որից 9-ը՝ առաջին, 16-ը՝ երկրորդ եւ 18-ը՝ երրորդ տեղեր: Արցախի «Օյամա» կիոկուշին կարատեի ֆեդերացիայի մարզչական կազմը համարում են ինչպես սկսնակ, այնպես էլ կիոկուշինում մեծ մարզչական փորձ ունեցող ճանաչված մարզիկներ: Ըստ համապատասխան խմբերի՝ ար-

ցախից մարզադպրոցի կիոկուշին կարատեի Այգեստանի մասնաճյուղի մարզիչ Դավիթ Ավետիսյանի 16 մասնակից սաներից 9-ը դարձել են մրցանակակիրներ՝ 2/4/3, Հաղորթի մարզադպրոցի մարզիկ, կիոկուշին կարատեի Նորագյուղի մասնաճյուղի մարզիչ Արամ Միքայելյանի 5 մասնակից սաներից 4-ը դարձել են մրցանակակիրներ՝ 1/2/1, Հաղորթի մարզադպրոցի մարզիկ, կիոկուշին կարատեի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մասնաճյուղի մարզիչ Ռուդոլֆ Քանայանի սաներից 6-ը մասնակցել են առաջնությանը եւ արժանացել մրցանակային տեղերի՝ 0/3/3:

Ցանկանում ենք հաջողություն մարզիկներին ու մարզիչներին, գալիք տարվա համար մտքում մեր հաղթանակներ:



ը: Հետաքրքիր առասպելում ասվում է, որ ջուջուցուի հնարքները մշակել է ճապոնացի բժիշկ Ակայամա Սիրոբեյը (այլ տարբերակով՝ Սիրուրա Յոսիմ), որը Նագասակի քաղաքից էր: Նա մեկնում է Չինաստան եւ այնտեղ ուսումնասիրում բժշկություն ու մարտական հնարքներ: Այդ երկրում նա յուրացնում է նետումների, ցավեցնող հնարքների ու հարվածների տեխնիկաները: Վերադառնալով ճապոնիա՝ Սիրոբեյը ստացած գիտելիքների հիման վրա մշակում է խակուդայի տեխնիկան եւ սկսում դասավանդել դա անհատական դպրոցում: Բայց պարպումը միապաղաղ էին, եւ որոշ ժամանակ անց աշակերտները մեկը մյուսի հետեւից լքեցին այդ կազմակերպությունը: Սիրոբեյը ստիպված էր փակել չորս տարի գոյություն պահպանած դպրոցը: Նա լքում է իր ապրելու վայրը եւ բնակություն հաստատում բուդոյայական վանքում, որտեղ որոշում է կատարել հարյուրորդ մեդիտացիա: «Ջուջուցու» տերմինը հայտնի էր ոչ միայն Արեւածագի երկրում, այլեւ մայրցամաքում: Այն լայնորեն օգտագործվում էր մարտարվեստի չինական եւ կորեական դպրոցներում: Այնուհետեւ առասպելն ասում է հետեւյալը: Մի առավոտ Սիրոբեյը տնից դուրս է գալիս պարտեզում գրոհներով: Ամբողջ գիշեր ծյուն էր տեղացել, եւ շատ ծառերի ճյուղեր կտրվել էին, միայն ուռենու (այլ տարբերակով՝ բալենու) ճյուղերից ոչ մեկը չէր վնասվել, քանի որ ծյունը սահել էր նրա ճկուն ճյուղերից: Նայելով այդ ծառին՝ Սիրոբեյը զգաց անսովոր լուսավորվածություն: Այդ իսկ պահին նա հասկացավ, որ չարժե դիմադրել մրցակցի ուժին, պետք է շեղվել նրանից, փոխել նրա ուղղությունը եւ օգտագոր-

ծել այն քո նպատակների համար: Արդյունքում նա վերամշակեց իր հնարքների մի պաշար, որի հիմքը փափկությամբ եւ ճկունությամբ ուժին հաղթելն էր: Սիրոբեյը նոր դպրոց հիմնադրեց, որտեղ սովորել են նրա շատ հետնորդներ, որոնք էլ ուսուցչի մահից հետո դպրոցը կոչել են Յոսիմ-Ռյու՝ ի պատիվ նրա:

Ջուջուցուի ավանդույթների ծաղկման բուռն շրջանը դիտվել է 17-18-րդ դարերի սահմանին: Այդ ընթացքում առաջացել էին մի շարք նոր դպրոցներ, որոնց թիվը հասել էր 700-ի: Մինչդեռ անցել է եւս երկու հարյուրամյակ, եւ դպրոցների շատերն անպասելիորեն անհետացել են, քանի որ դրանց ավանդույթները համարվել են հնացած: Դրանցից ոմանցում ներկայումս պարապում են այկիդո եւ ծյուդո, մյուսները խանդավառների ջանքերով շարունակում են պահպանել հնագույն ավանդույթները: Ժամանակակից փուլում ճապոնիայում ջուջուցուի մեջ տեսնում են ազգային արժեք եւ ձգտում են դա պահպանել ու վերականգնել:

Չյուդոն ճապոնական մենամարտերի ժամանակակից տեսակ է, որը հայտնվել է 19-րդ դարի վերջին: Այս ոճի հիմնադիրը Ջիգարո Կանոն է, որը մանկության ժամանակ առանձնանում էր թույլ առողջությամբ: Կոփվելու եւ ուժ հավաքելու նպատակով նա սկսել էր ջուջուցուի պարպումըների հաճախել: Ավարտելով գիշերօթիկը՝ նա ընդունվել էր ճեմարան, բայց չէր դադարեցրել մարզումները: Կանոն ուսումնասիրել էր ջուջուցուի շատ ոճեր: Նրա փորձը նրան հիմք էր տալիս եզրակացնել, որ «...տարբեր դպրոցների տեխնիկաները միշտ չեն գովեստի արժանի, այնտեղ կան եւ բացասա-

կան բաներ»: Բացահայտելով շատ ոճերի թերությունները՝ նա սկսեց նորի մշակումը, որի մեջ մտնում էին ջուջուցուի լավագույն հնարքներն ու վարժությունները, ինչպես նաեւ իր սեփականը: Երկար ժամանակ Կանոն դիտում էր կատվի շարժումները, թե ինչպես է նա հարձակվում իր գոռի վրա եւ թե ինչպես է վայրէջք կատարում իր չորս թափ վրա, ու հենց այդ պատճառով էլ կատուներին բնորոշ նազանքը հատուկ էր իր նոր տեխնիկայի հնարքներին:

Ֆիզիկական մեծ ուժը ծյուդոյում չի համարվում առաջնային պահանջ: Թույլ մարդը, օգտագործելով ծյուդոյի հնարքները, կարող է հաղթել հակառակորդին, որն իրենից առավել է ուժով: Ինքը՝ Վարպետը, մեծ մենամարտն այսպես էր նկարագրում. «Ենթադրենք, թե մեկ մարդու ուժը չափվում է միավորներով: Իմ զուգընկերը, ասենք, տիրապետում է ուժի, որը հավասար է 10 միավորի: Ինքս նշանակալի փոքր եմ ու թույլ եմ նրանից, տիրապետում եմ 7 միավոր ուժի: Եթե նա ճնշի ինձ իր ուժով, ապա բնականաբար ես կզիջեմ եւ կարող եմ նույնիսկ ընկնել: Բայց եթե ես այն նույն ուժով, որով ինքը հարձակվում է, փախչեմ նրա պահումներից, այսինքն մանևրեմ, ապա նա ստիպված կլինի խոնարհվել դեպի իմ կողմը եւ այդպես կկորցնի հավասարակշռությունը: Իհարկե, նրա ուժը կմնա իր մոտ, բայց նա այդ պահին չի կարող դա օգտագործել: Նա կորցրել է հենման կետը: Եվ հիմա նրա 10 միավորանոց ուժից մնացել է միայն 3-ը: Իսկ

ես, չկորցնելով հավասարակշռությունս, պահպանում եմ նույն 7 միավորանոց ուժս: Ինչ-որ պահի դառնում եմ ուժեղ իմ հակառակորդից, եւ հենց այդտեղ էլ ես պետք է նրան հաղթեմ՝ դրա վրա չծախսելով շատ



Իվան Ազիզբեկյան

ջանքեր»: Այս արտահայտությունը ներկայումս համարվում է դասական, որն ավելի ճշգրիտ է արտացոլում ծյուդոյի էությունը:

Կանոն իր ոճն անվանել է «ծյուդո», որը ճապոներենից թարգմանաբար նշանակում է՝ «փափուկ ճանապարհ»: Հատուկ պահանջն այս մարտարվեստում դարձավ պատվավոր վերաբերմունքը մրցակցի հանդեպ. պարտադիր է մենամարտողների՝ միմյանց խոնարհունը մարտից առաջ եւ հետո, ինչպես նաեւ էթիկայի որոշ կանոններին հետեւելը:

1882թ. Կանոն դառնում է Գակուսյուի արտոնյալ ճեմարանի ղեկավար ու իրահանգիչ: Դրանից ոչ հեռու գտնվող Եսյոձի վանքում նա

բացում է ըմբռնարտի համար մարզադահլիճ, որը հետագայում դարձավ ծյուդոյի մասնագետների պատրաստման աշխարհի հզորագույն կենտրոն: Ներկայումս այն հայտնի է «Կոդոկան» անվանումով: Կանոյի մշակած մարզումների համադարձը կիրառվում է մինչ այսօր:

Ի տարբերություն հարվածային ոճի այլ մենամարտերի՝ ծյուդոյի հիմքն են կազմում նետումները, ցավեցնող հնարքները, պահումները եւ պարտերի վիճակում խեղդելը: Հարվածները եւ մի քանի առավել վնասվածքավոր հնարքների ուսումնասիրությունը կատարվում է կատայի ձեւով, որտեղ մրցակցի վրա հնարքի իրականացման նպատակը միայն շարժումների ճշգրտությունն է:

Արցախի ծյուդոյի ֆեդերացիան գործում է վաղուց: Հարյուրավոր մարզիկներ են թողարկվել, ծյուդոյի չեմպիոններ, ու առողջ ապրելակերպի հետեւորդներ ենք ունեցել եւ շարունակում ենք ունենալ շնորհիվ վաստակավոր մարզիչ Իվան Ազիզբեկյանի, որի շնորհավորական ուղերձը Չյուդոյի օրվա առթիվ հետեւյալն է. «Շնորհավորում ենք բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը կապել են փափուկ ճանապարհի փիլիսոփայության հետ: Արցախի ծյուդոյի ֆեդերացիայի բոլոր ժամանակների գավակներ, թող ձեր կյանքում հաղթանակներն անպակաս լինեն: Հաւառակորդի ուժը հօգուտ ձեզ օգտագործելու արվեստը թող ձեզ ու մեզ նոր հաղթանակներ պարգևի. ոչ միայն մրցագորգի վրա»:

ՆԿԻՐՅԱԼՆԵՐ

ՈՒՍՈՒՑՉՈՒՐԻՆ



Մայրս ինձ ու եղբորս մի կերպ էր ուղարկում երաժշտության դասերի: Տանը դաշնամուր չունեինք: Ընդհանրապես ոչ մի երաժշտական գործիք չունեինք: Պատերազմից հետո էր: Շուշուս: Մի կարգին տուն էլ չունեինք: Կիսակառույց առանձնատուն էր: Ձմեռը՝ ցուրտ: Ջուրը հարևան բակից էինք բերում: Գազ չկար: Խանութները՝ կիսադատարկ: Այսօրվա առատությունը չկար: Մայրս շատ քիչ աշխատավարձ էր ստանում: Մի կերպ էինք ծայրը ծայրին հասցնում: Բայց երբեք չեմ լսել, որ նա ասի՝ չկա: Երբեք չեմ լսել, որ ասի՝ մենք սուղ ենք ապրում: Մենք էլ չէինք մտածում, որ չկա: «Չկա» բառը մեր տանը չէր գործածվում, ու մենք էլ՝ երեխաներս, չէինք ասում՝ չկա: Ու երբեք չէինք ասում՝ ուզում ենք: Ինչ կար՝ էն կար, ու դրանով էլ բավարարված էինք: Բայց, այ, դաշնամուրի դասերին չէինք ուզում գնալ: Պատճառներից մեկն էլ այն էր, որ երբ նոր երաժշտության դասատու էր գալիս, հենց մեզ էր դասավանդում: Մի խոսքով՝ տարվա ընթացքում մի քանի դասատու էինք փոխում: Մինչև մեկի հետ ծանոթանում էինք, համակերպվում, մեկ ուրիշն էր մեզ դաս տալիս: Եվ այն ժամանակ չէի հասկանում, թե ինչու է մայրս ուզում մենք անպայման երաժշտության դասերի գնանք: Այն դեպքում, երբ ասում էր, որ հասկանում է, որ տանը չունենալով երաժշտական գործիք, ու տանը չպարապելով՝ մենք մի կարգին երաժիշտ չենք դառնա: Ուսումը վճարովի էր: Վճարում էր մեր սուղ միջոցներից: Չէ, չէինք ուզում հաճախել երաժշտական դպրոց: Եղբայրս մի քանի անգամ դասերից բացակայեց: Երբ տնօրենը այդ մասին մորս հայտնեց ու ասաց, որ պիտի մեզ հեռացնի դպրոցից, մայրս տուն եկավ ու լացակունամ ձեռքը թակելով: Երբ մեր քույրը, որ մենք պետք է թեկուզ ոչ լիարժեք, երաժշտական կրթություն ստանանք: Մենք էլ ստիպված, ազդված մորս հուզմունքից՝ ինչպես ասում են, մեզ սպանելով շարունակեցինք հաճախել դաշնամուրի դասերի: Մի օր էլ, երբ դասարան մտանք, ասացին, որ էլի փոխվել է մեր դասատուն: Անտարբեր սպասում էինք նրան: Նա ներս մտավ՝ ինչպես ճաճանջ: Ասես նրա լայն ժպիտից դասարանը ջերմացավ: Ասես շատ հարազատ մեկը ներս մտավ ու մեզ ողողեց սիրով: Մենք էլ ժպտացինք ու ձգվեցինք դեպի նա, թե՛ դեպի դաշնամուրը: Դասն այնքան արագ անցավ, որ

մենք, դեռ չբաժանված՝ արդեն մեր ուսուցչուհուն կարոտած, ուզում էինք շուտ գա հաջորդ դասաժամը, ու մենք նորից տեսնենք արևաշող մեր ուսուցչուհուն: Տանը ասացինք, որ մեզ նոր ուսուցչուհի է դասավանդում: Մայրս հիասթափված արձագանքեց՝ էլի նոր, էլի ձե՞զ, ինչ է, դուք փորձադաշտ ե՞ք, ինչ նոր ուսուցիչ գա, հենց ձե՞զ պիտի դասավանդի, ուրիշ դասարան չկա՞, ուրիշ աշակերտ չկա՞... Վերջ, ես կգամ ու մի լավ կխոսեմ տնօրենի հետ: Բայց այնպես եղավ, որ մայրս, զբաղված իր գործերով, չկարողացավ մոտ շաբաթներին դպրոց գալ: Ու վերջապես, երբ մի օր աշխատանքը շուտ ավարտեց ու ավելի վաղ եկավ տուն, հարցրեց եղբորս մասին, ասացի, որ գնացել է երաժշտական դպրոց, մի քիչ շուտ է գնացել, ինձ չի սպասել, ես էլ հիմա կգնամ: Արագ նոտաներս վերցրի ու տնից դուրս թռա: Մենք դաշնամուրի առջև նստած՝ պարապում էինք, երբ մայրս դասարան մտավ: Ներողություն խնդրեց մեր ուսուցչուհուց և ասաց, որ եկել է տեսնի, թե այդ ինչ հրաշք է կատարվել, որ երեխաները ոգևորված դասի են գալիս: Մենք կարճ ժամանակում շատ էինք առաջադիմել, տնօրենն էլ միջանցքում մորս տեսել էր ու մեր մասին գովասանքի խոսք ասել: Մինչ մենք պարապում էինք, մայրս մեզ էր նայում, ուսուցչուհուն էր նայում զմայլված, մի կերպ կարողանում էր մրմնջալ՝ «Շնորհակալ եմ, շնորհակալ եմ...» ես չեմ ասում, որ նրանք մեծ երաժիշտներ կդառնան, բայց համոզված եմ, որ մարդու զարգացման համար երաժշտական թեկուզ ամենատարրական կրթությունն էլ անհրաժեշտություն է...»: ...Եղանակները փոխվեցին: Սկսվեցին Շուշիի թխպոտ ու անձրևոտ օրերը, որից շատ էի նեղվում, բայց որոնց հիմա շատ եմ կարոտում: Ու այդ անձրևոտ օրերի կարոտներում ձեր բարության խորհրդանիշ-լուսառատ դեմքն է պատկերվում իմ աչքի առջև, տիկին Ռոզետա: Կարող է՝ Դուք մոռացել եք, բայց ես չեմ մոռանում այն մի գույզ կիսակոշիկները, որ Դուք, ասես քաշվելով, ինձ մեկնեցիք, որ փորձեմ՝ ոտքիս գալիս է՞, թե՛ չէ՞... Ինչպե՞ս էիք նկատել, որ կոշիկս ծակված է. ես քայլելիս անզգուշաբար ոտքս քարին էի խփել (այն ժամանակվա Շուշիի քարքարոտ ճանապարհները...), ու կոշիկս դիմացից մի թեթև ծակվել էր: Ես ձգտում էի այնպես անել, որ Դուք այն չնկատեք, բայց Դուք նկատել էիք: Ու բերել էիք այդ կոշիկները՝ մեջը փափուկ, շատ սիրուն կոշիկները: Մինչ փորձում էի, Դուք ժպտում էիք: Այն ժամանակ շատ քիչ էին ժպտացող մեծեր, ու մեկ էլ մտահոգ հարցրիք՝ հո մայրս չի՞ մեղանա, հո սխալ չի՞ հասկանա... դա քո աղջկա կոշիկներն են, ոտքերին չեն գալիս, աղջիկդ շուտ է մեծացել, թափ է տվել, չի հասցրել նույնիսկ մի երկու անգամ հագնել, լրիվ նոր են...», թող մայրս հանկարծ սխալ չհասկանա... Մեր շատ սիրելի Ռոզետա Կարլենովնա, իմ պապը կոշկակար էր, այն-

քան սիրուն կոշիկներ էր կարում, բայց որդու զոհվելուց հետո ինսուլտ էր ստացել ու էլ կոշիկ չէր կարում: Մայրս խանութպանի հետ խոսել էր, որ երևանից ապրանք բերելուց անպայման իմ ոտքի համարի էլ կոշիկ բերի... Այն ժամանակ այսպես առատություն չէր, խանութներն այսպես լցված չէին, ընտրություն չկար: ...Ես կոշիկները տոպրակի մեջ տուն տարա: Ուզում էի հագած գնալ, բայց Դուք ասացիք՝ դեռ տար՝ մորդ ասա, հանկարծ սխալ չհասկանա... Ես էլ մոլորված, տունդարձի ճամփին մտածում էի՝ ինչո՞ւ պիտի սխալ հասկանա..., ի՞նչ ասել է՝ սխալ չհասկանա: Երբ տան դուռը բացեցի, որ ներս մտնեմ, զղջացի, որ կոշիկները վերցրել եմ. բա որ մայրս սխալ հասկանա՞... Շփոթված՝ տոպրակը մորս մեկնեցի, բացեց, հարցնելով՝ էս ի՞նչ է: Ասացի՝ ինձ համար է, ուսուցչուհին է տվել, իր աղջիկը շատ քիչ է հագել, լրիվ նոր է... դե, հարց է, թե խանութպանը երբ կբերի կոշիկներս... Մայրս մտավ սենյակ, տոպրակից հանեց կոշիկները, ցույց տալով պապիկիս, ասաց՝ դասատուն է տվել: Պապս անկողնում նստած էր: Նրա աչքերից արցունքներ հոսեցին..., մորս աչքերից արցունքներ հոսեցին: Նրանց նայելով՝ ես էլ հուզվեցի..., տեսա՝ քիթս խուտուտ է գալիս, ուր որ է, իմ աչքերից էլ արտասուքներ կթափվեն... Զարցրի՝ պապ, չպիտի՞ վերցնեի..., վաղը կտանեմ հետ կտամ, ինչո՞ւ եք լացում: Պապս ինձ գրկեց, համբուրեց ու ասաց՝ չէ՛. մատաղ, չէ՛, հարցը կոշիկները չեն... հարցն էն ա, որ... ինչ լավ է, որ դեռ բարի մարդիկ կան..., ուսուցչուհուդ կասես՝ շատ ապրես... Ողջ օրը պապիս դեմքից ժպիտը չի ջալ..., ու անդադար կրկնում էր՝ ի՞նչ լավ է, որ այդպիսի մարդիկ դեռ կան... «Շատ ապրես»-ը հաջորդ դասիս մայրս եկավ, ուսուցչուհուս անձամբ ասաց... Ասաց՝ շատ շնորհակալ եմ, որ դու հորս մի բուռ լույս պարզեցիր... Մի ամսից խանութպանը ինձ համար նոր կոշիկներ բերեց, բայց ես քո տված կոշիկները շատ երկար պահեցի, հետո այն նվիրեցի մեր հարևանի աղջկան... Տիկին Ռոզետա, այսքան տարիներ անց գիտե՞ք ինչու այս ամենը վերհիշեցի, որովհետև ես այսօր առաջին օրը առաջին ժամը դպրոցի ամենաչար համարվող յոթերորդ դասարան մտա որպես ուսուցչուհի, և ինձ աշակերտները հենց առաջին վայրկյանից ընդունեցին, և գիտե՞ք ինչու, որովհետև Ձեր պարզած այն ժպիտից ես իրենց բաժին հանեցի... Շնորհակալ եմ Ձեզ: Նաև ասեմ, որ իմ ու եղբորս կյանքում Ձեր կողմից ստացած երաժշտական կրթությունը կյանքում մեզ շատ պետք եղավ... Շնորհակալ եմ Ձեզ, շնորհակալ եմ մորս մեր ապագայի համար արած ամեն բանի համար... և շնորհակալ եմ բոլոր Ձեզ պես ուսուցիչներին ու մորս պես ծնողներին՝ մեզ մեծ սերունդ դաստիարակելու համար: Դուք ինձ համար միշտ ուղեմիշ կլինեք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Արցախի պետական համալսարանում կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի երկարամյա դասախոս ֆիզկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Խաչատրյանին:

Մեծ է Ա. Խաչատրյանի ավանդը ԱրՊՀ-ում մաթեմատիկայի ամբիոնի կայացման ու մասնագիտության զարգացման գործում: Նրա հետազոտությունների արդյունքները հրատարակվել են ավելի քան 50 գիտական հոդվածներով, որոնք տպագրվել են ՀՀ և արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում և միջազգային գիտաժողովների նյութերում: Ա. Խաչատրյանը երեք ուսումնական ծեռնարկների հեղինակ է, պարբերաբար մասնակցել է հետաքրքիր գեկուցումներով հանդես եկել միջազգային գիտաժողովներում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ պատվով ներկայացնելով ԱրՊՀ-ն: Նրա ղեկավարությամբ ու անմիջական օգնությամբ ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի երեք երիտասարդ դասախոսներ (Գ.Պետ-



րոյան, Ն. Սարգսյան, Եվ. Բալասանյան) պաշտպանել են գիտական ատենախոսություններ և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ռեկտոր Արմեն Սարգսյանը բարձր է գնահատել պրոֆեսոր Խաչատրյանի վաստակը՝ իր ելույթում ընդգծելով նրա ոչ միայն մասնագիտական, այլև մարդկային որակները: Համալսարանի զարգացման գործում ունեցած ավանդի համար ԱրՊՀ գիտխորհրդի որոշմամբ Ալեքսանդր Խաչատրյանն արժանացել էր «Ոսկե մեդալ»-ի: Միջոցառման ընթացքում ռեկտոր Ա. Սարգսյանը պարգևը հանձնել է Ա. Խաչատրյանի դստերը՝ Սոնա Խաչատրյանին: Մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Գայանե Պետրոսյանի խոսքով, Ա. Խաչատրյանը կարողանում էր իր սաների մեջ սեր արթնացնել գիտության հանդես: «Այսօր մենք հավաքվել ենք՝ հիշելու մեր բոլորի կողմից սիրված ու հարգված մի մարդու՝ պրոֆեսոր Ալեքսանդր Մովսեսի Խաչատրյանին: Ցավոք, այժմ Խաչատրյանը մեզ հետ չէ, և ստիպված ենք նրա մասին խոսել անցյալ ժամանակով: Այստեղ ներկաները կարող են հաստատել, որ Ա. Խաչատրյանը հիմնադիր գիտական ու դասախոս լինելուց բացի օժտված էր մարդկային բարձր հատկանիշներով, - նշել է Գայանե Պետրոսյանը և հավելել, - Ա. Խաչատրյանի հիշատակը վառ կմնա ԱրՊՀ նրա գործընկերների, դասախոսների և հարյուրավոր ուսանողների սրտերում»: Ա. Խաչատրյանի մասին հուշեր ու կենսագրական դրվագներ են ներկայացրել բնագիտական ֆակուլտետի ղեկան Կոլոբյա Սիրգոյանը, մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դասախոսներ Կարինե Մարությանը, Կարեն Արամյանը, Գայանե Պետրոսյանը, Նարինե Սարգսյանը, Եվգենյա Բալասանյանը, ուսանողուհի Ռուզաննա Սահակյանը: Ա. Խաչատրյանի դուստր Սոնա Խաչատրյանը և եղբայրը՝ Գուրգեն Խաչատրյանը, շնորհակալություն են հայտնել համալսարանի ղեկավարությանն ու դասախոսներին՝ Ա. Խաչատրյանին նվիրված միջոցառում կազմակերպելու և գնահատանքի համար: Ալեքսանդր Խաչատրյանին նվիրված միջոցառման շրջանակներում ԱրՊՀ-ում տեղի են ունեցել գիտական ընթերցումներ մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դասախոսների և ուսանողների:

ԱՊՐԵԼՈՒ ՈՒԺ

ՀՈՒՅ - ՑԵՐԵԿՈՒՅԹ ՀԱԴՐՈՒԹԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Ստեփանակերտի Մ. Սանվելյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցում կազմակերպվեց հուշ-ցերեկույթ՝ 44-օրյա պատերազմում նահատակվածների հիշատակին: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան բոլոր պատերազմներում անմահացած հերոսների սուրբ հիշատակը:

զրկեց իրենց բնօրրանից...»: Սակայն հարյուրիցի պատանհներն իրենց

զրնգալու է հայ շինարարի մուրճը: Միջոցառմանը ներկա էին Արցախի ՊԲ

հայրը, անդամալի կսկիծը սրտում, վկայելով, որ պատերազմի պատճառած վերքերը չեն սպիանում (հարազատների կորուստ, բզկտված, կորուսյալ բնօրրան), այնուամենայնիվ, ապրելու ուժ մաղթեց բոլորին դարերով գեներոսներին ժառանգած մոխիրներից վեր հառնելու ունակությամբ: Ուստի յուրաքանչյուրս պետք է անենք մեզնից կախվածը Արցախի համար: Դպրոցականների պարագայում, հասկանալի է, լավ գիտելիքներ ստանալն է, որպեսզի կարողանան հետագայում մեր շահերը պաշտպանել արտաքին աշխարհում: Դժգոհել անարդարություններից, որոնք շատ են և մի կողմ քաշվել՝ հարցի լուծում է: «Պետք է առաջ նայենք և գործնականորեն ապացուցենք, որ մեր տղաներն իզուր չեն իրենց կյանքը զոհաբերել Արցախի համար, որից հեռանալու բարոյական իրավունք չունենք, այլպես դավաճանած կլինենք մեր գոհվածներին: Յուրաքանչյուրս մեր լուծանք պետք է ներդրենք այս հողի համար: Այլընտրանք չկա: Մենք ներսից պետք է ուժեղանանք, հետո ակնկալենք ուրիշի աջակցությունը: Ոչ ոք չերազմի, որ ինքը տանը մտած, ձեռքերը ծակած, ոչինչ չանելով՝ ուրիշները գալու են իր հարցերը լուծեն: Մեր բոլորից է կախված ինչ-որ մի բան: Հանուն հայրենյաց նահատակների՝ մեր խղճի առաջ պետք է լինենք ազնիվ», - ասաց Ա. Ասրյանը: Հուշ-ցերեկույթի ավարտից հետո մասնակիցներն ուղղվեցին դեպի Ազատամարտիկների պուրակ՝ ծաղիկներ խոնարհելու զոհվածների հիշատակին:



«Աշնան արյունոտ տերևաթափ». այս խորագիրն էր կրում հուշ-ցերեկույթը: Դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Արեգա Մարտիրոսյանի բացման խոսքը ցավոտ հիշողություններ էին 2020թ. սեպտեմբերին սկսված պատերազմից, որը Արցախի ամենահիմքնատիպ ու կոլորիտային շրջանի բնակիչներին զրկեց տուն ու տեղից. «Տարիներով մանուկ սերնդին սովորեցնում էինք, որ հայրենիքը սկսվում է քո տնից, բակից, դպրոցից, դպրոց տանող քո ճանապարհից: Ամիսյալ 2020թ. սեպտեմբերի 27, կարոտ թողեցիր մեզ այս ամենին: Այժմ, ծվարած վիրավոր Արցախում, ինչպես նաև բզկտված Հայաստանի տարբեր շրջաններում ու նաև՝ օտար ափերում, չպատկերացնելով մեր ապագան, նետված կյանքի հորձանքին, սպասում ենք մեր ճակատագրին»: Հոգեմաշ այդ սպասման մեջ կարոտներն են խտանում. «Գեղեցիկ էր մեր ծննդավայր Հարդուքը տարվա բոլոր եղանակներին, բայց հատկապես աշնանը՝ իր հեքիաթային գույներով, երազանքներով լի: Բայց ո՞չ 2020-ի աշունը, երբ տերևաթափը մի քիչ շուտ սկսվեց ու հազարավոր զարուն կյանքեր տարավ,

ուսուցիչների հետ չէին հավաքվել ողբալու կորուստները, որքան էլ թանկ լինեն դրանք, այլ իրենց խոնարհումը բերելու հերոսների հիշատակին, հավաստիացնելու, որ նրանք միայն ֆիզիկապես են բացակա, բանցի միշտ իրենց սրտերում են: Հավաքվել էին, որ ասեն՝ նրանց առջև պարտք ունեն կատարելու, նրանց վրեժն առնելու, կորուսյալ հայրենիքը վերադարձնելու: Հավաքվել էին՝ տիրոջ պատվախնդրությամբ վատահեցնելու, որ դեռ լուսավոր մայիսներ ենք ունենալու, որ Հայոց լեռնաշխարհում դեռ

հինձառայողներ: Նրանցից սպա Բախչյանն ասաց, որ մեր հայրենիքը ծնկած է, բայց ընկած չէ: Ապա կոչ արեց աշակերտներին լավ սերտել հայոց պատմությունը և իմանալ, որ մեր ժողովուրդը մեկ անգամ չէ հայտնվել լինել-չլինելու իրավիճակներում, բայց կարողացել է ամեն անգամ վերընծյուղվել: Նա կոչ արեց լինել հայրենասեր, իսկ հայրենասիրությունը լոկ գաղափար չէ, այլ անձնվիրություն:

Հուշ-ցերեկույթն ավարտվեց Արցախյան 3-րդ պատերազմի զոհված և անհայտ կորած զինձառայողների հարազատների միության նախագահ Արմեն Ասրյանի ելույթով: 44-օրյա պատերազմում զոհված որդու



Մշակութային առօրյա

ՊՈՒՇԻԱՅԻ ԵՐԵԿՈ ՄՈՒՐԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանը ակտիվ ընթերցողների ուժերով նոյեմբերի 22-ին կազմակերպել է պոեզիայի երեկո՝ «Արցախի կողքին, Արցախի հետ» խորագրով: Միջոցառմանը, Վարդգես Պետրոսյանի «Կրակն շապիկ»-ի խոսքերը վերածնելով մեր օրերի հանգուց, բացեց բացեց գրադարանի տնօրեն Անահիտ Միրզոյանը. «Քո ցավը, հայրենիք, կրակն շապիկ է, հազում են՝ վառվում է, հանում են՝ մեռնում են: Այստեղ մի երկիր կա՝ խոցված, հազար անգամ հոշոտված, վերքերից տանջված, այստեղ մի ժողովուրդ կա, որ ամեն օր սպասում է խաղաղության, այստեղ հնամյա հավատ կա, որ վերջում բարին կհաղթի, և երկիրը նորից թևերը կբացի, կորագած մեջքը կուղղի: Բացրե՛ք, երկիր՝ Արցախս, Հայաստանս, թռիչքիդ են սպասում զավակներդ, ամպերից վեր սրբերն են ապրում»: Չնայած այս ամենին՝ Արցա-

խը, թեկուզ վիրավոր, ապրում է: Ապրում է հայեցի, զավակների կորստի ցավը սրտում սեղմած, վաղվա օրվա հանդեպ չմարող հավատով: Ապա շարունակում են ընթերցողները. «-Արցախը ես եմ...»

-Ես եմ... -Ես եմ... -Արցախը մենք ենք...» իրենց աղոթքները միախառնելով բանաստեղծների խոսքին. «Հայր մեր, որ երկիրն ես, Քո անբիծ սրտով լույսի պես իմ ազգին հայրություն արա, ողորմիր, Աստ-

ղիմացել է ապրելու տենչով: Հին մա էլ ծանր օրեր ենք ապրում, ինքներս մեզ ապրեցնելու համար պետք է չիուսահատվենք, ուժ պետք է գտնենք մեր մեջ, նորից ապրենք ու արարենք. սա գիտակցում է նաև նոր սերունդը, որ մեր մեծ բանաստեղծ Հանո Սահյանի և ցավն է ապրում և նրա լավատեսությունը կիսում. Թող աստված եղածը պահի, Բայց հետո ինչ էլ որ պատահի, Գարունը հայերեն է գալու, ...Դարերդ հայերեն են գալու:

Իսկ դրա համար պետք է, որ ամուր կառնենք մեր արձատներից. չէ՛ որ ազգովին զինվորյալ ենք, քանի որ պահում ենք հող հայրենին, մայրենի լեզուն և մեր անասան հավատը:

Ամբողջ միջոցառման ընթացքում գրադարանի ակտիվ ընթերցողները, որոնք մայրաքաղաքի դպրոցների սովորողներն էին, այս ոգին փոխանցեցին ներկաներին բանաստեղծներ Հ. Բեգլարյանի, Ս. Խանյանի, Վ. Օվայանի, ինչպես նաև հայ դասականների չափածո տողերով: Իսկ Արցախի բարբառով փոքրիկ բեմականացումը Այայի ու Ապայի մասնակցությամբ համ ու հոտ տվին միջոցառմանը:

Ներկաներից ԱՀ անհայտ կորած հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը, բանաստեղծուհի Ծովինար Բաղդասարյանը, ընդգծելով երեկոյից ստացած դրական լիցքերը, նշեցին, որ այսօր մեզ համար շատ կարևոր է հույս ու հավատը չկորցնելը, ինչն ամրապնդվում է նաև այսպիսի միջոցառումներով և իրենց զրբերից նվիրեցին երեսաներին:



ված, երկիրս հինավուրց, որ ոտքի կանգնի ու դառնա ամրոց, մի նոր լուսաբաց ուղարկիր մեզ, Տեր, որ իր հետ բերի լոկ ջերմ արևներ, որ էլ արյուն չթափի, էլ պատերազմ չլինի: Հայն իր բախտն այլ երկրում էլ չփորձի... Ողորմիր, Աստված երկիրս հայոց, որ դառնա սիրո, հույսի մի դարբնոց, որ հայը ժպտա, լցվի հավատքով, երկիրս ծաղկի խիճը ու բերրանքով...»: Քրիստոսի չարչարանքները ուսած մեր ազգը, որ բազմիցս անցել է գողգոթայի ճանապարհով, ցավ ու դառնություն այդ ե՞րբ չի տեսել, բայց

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ-310

Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում նոյեմբերի 29-ին կազմակերպվել է երեկո՝ նվիրված ուշ միջնադարի հայ մեծ քնարերգու, աշուղ Սայաթ-Նովայի ծննդյան 310-ամյակին: Քոլեջի դասատուների և ուսանողների ուժերով ներկայացվեց գրական-երաժշտական



հիասքանչ կոմպոզիցիա, որում նկարագրված էր տաղանդավոր երգասացի կյանքը: Ցուցադրվեցին դրվագներ «Սայաթ-Նովա» ֆիլմից: Ներկաներին անչափ հուզեցին քոլեջի շնորհաշատ ուսանողների ու դասատուների՝ Սայաթ-Նովայի ստեղծագործությունների կատարումները երգով, երաժշտությամբ, ասմունքով:

Երեկոյին ԱՀ ԿԳՄՍ նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Մինասյանը քոլեջի 60-ամյակի կապակցությամբ ԱՀ նախագահի հրամանագրով շնորհված բարձր պարգևները հանձնեց մի խումբ աշխատողների:

Սեփ. լրատվություն

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄՈՒՈՐԱԿ

ԲՈՒՐԱՏԻՆՈՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋՈՒՄ

Ստեփանակերտի հ. 5՝ «Մանուկների մոլորակ» անվանյալ պետական մանկապարտեզում հերթական տոնն էր, որը ներկայացում էր՝ Ալ. Տոլստոյի «Բուրատինոյի արկածները կամ ոսկե բանալի» հեքիաթը: Առանձնահատուկն այն էր, որ բեմականացումը բնագրով էր՝ ռուսերեն: Գերասանները դաստիարակներ, դայակներ և իհարկե, ամենազվախաբուրդ՝ երեխաներն էին:

Ծավալվող գործողություններում բարի ու չար ուժերի դեմ պայքարն է, որն ավարտվում է բարու հաղթանակով՝ բոլորի համար բացելով Երջանկության դուռը:

Գործող անձինք այնքան վարժ էին խոսում ռուսերեն, որ այն տպավորություն էր, թե մանկապարտեզը ռուսական խումբ ունի: Այնինչ այդպես չէ: Ինչպես ասաց ման-

պահպանել մեր մայրենին՝ հայերենը ու այն անհարտ փոխանցել սերունդներին և շնորհակալություն հայտնեց մանկապարտեզի տնօրինությանը, կոլեկտիվին, որ, կարևորելով լեզուների իմացության նշանակությունը, ինչն ապացուցում է նաև կյանքը, ռուսաց լեզվի գիտելիքներ են տալիս երեխաներին: Դպրոցում և հետագայում նրանց համար դյուրին կլինի յուրացնել այն:

«Արցախի բոլոր մանկական օջախներում այսպիսի միջոցառումները մեզ հույս, հավատ են ներշնչում, դրական լիցքեր հաղորդում: Հավատանք փոքրերին, որ կլինի հարատև խաղաղություն Արցախում»,- իր տպավորությունները հայտնեց ԱՀ ԿԳՄՍՆ նախադպրոցական կրթության բաժնի պետ Էլմիրա Հովհաննիսյանը, որը նաև գնահատանքի խոսք ասաց «Մանուկների մոլորակ» մանկապարտեզի կոլեկտիվի հասցեին՝ մշելով, որ այստեղ աշխատում են մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար սկզբունքով, իսկ դաստիարակները, դայակներն իսկական դերասաններ են, ինչը լավ դաստիարակ լինելու համար կարևոր հանգամանք է:

Ռուսական համայնքի ներկայացուցչի կողմից երեխաներին հանձնվեցին գրքեր ու քաղցրավենիք:

Մեկ ժամ տևած այս միջոցառումը մեծերիս ներքաշեց մանկության՝ ուրախության, անկեղծության աշխարհ՝ առժամանակ մեզ կտրելով անորոշության թանձր շղարշով պատած մեր իրականությունից:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ



կապարտեզի տնօրեն Սուսաննա Ավշարյանը, իրենց այս հերթական միջոցառումը որոշեցին անցկացնել ռուսերեն՝ ի մշան երախտագիտության և հարգանքի բարեկամ ռուս մեծ ժողովրդի և արցախցիների անվտանգությունը պահող ռուս խաղաղապահների, որոնց շնորհիվ երեխաները կարողանում են ապրել Արցախում և այսպիսի միջոցառումներ անցկացնել:

Ծնող, ներկայացման գլխավոր աջակիցներից Մայա Ղազարյանը՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ռուսացումը և աշխատանքը և կատարվել մանկապարտեզի կոլեկտիվի ու ծնողների համագործակցությամբ:

ԿԱՐՈՏԻ ԵՐԳԵՐ

\*\*\*

Ա՛խ, գյուղս, գյուղս, հարազատ գյուղս, Ուզում եմ տեսնել տունս հարազատ, Ուզում եմ տեսնել, կարոտս առնել... Գիտեմ, ավերված ես, բայց մեկ է, հարազատ ես, Ուզում եմ շնչել սրբազայրերիս ծուխը մոմերի, Ուզում եմ խմել մեր աղբյուրների ջրերը զուլալ, Ուզում եմ շնչել քո օդը մաքուր: Ոչ մի տեղ չկա քո ջուրն ու օդը, Քո քարն ու սարը, քո անտառները Հարազատ հողում ես օտարացած, Ուզում եմ նորից ես վերադառնամ Գիրկը քո՝ գյուղ իմ, Մեծ Թաղեր...

\*\*\*

Կարոտել եմ, իմ ծննդավայր, Քո երկնքին, ջիմջ աստղերին վառ ու լուսավոր, Կարոտել եմ քո սարերին՝ Դիզափայտին, քո Քիրս սարին, Գտչավանքին, Աղբյուրներին զուլալ ու պաղ, Որ հոսում են գիշեր-ցերեկ քջքալով, Մենք էլ էստեղ՝ կարոտ, կարոտ, Ամեն օրը անհմաստ, Լուսանում է ու մթնում, Չգիտեմք էլ, թե ոնց անցավ Երկու տարին քեզինց հեռու. Կարոտ, կարոտ, Տանջում է մեզ Լուսադեմին, թե ուշ գիշեր, Երագներով մխիթարվելով՝ Ապրում ենք մենք տանջվելով:

\*\*\*

Շփոթվել եմ գյուղի ճամփին, Արահետներ էլ չկան, Թփուտներ ու մացառուտներ Փակել ճամփան մեր գյուղի: Բայց գիտեմք մենք ամեն անկյուն, Ամեն կածան... Գիտեմք ճամփան մեր գյուղի: Կմաքրենք ճամփաները մեր, Միայն գնանք գյուղը մեր, Գնանք հասնենք պապենական մեր օջախներին: Մոմեր վառենք մեր սրբերին, Մոտը նստենք հանգստանանք, Շնչենք օդը մեր մաքուր, Խմենք ջուրը պապենական մեր աղբյուրների, Կարոտ առնենք մեր տներից Ու սարերից՝ Գտչավանքից, Դիզափայտից մինչև Քիրսը:

Մարիտա ՍԱՐԿԻՅԱՆ  
Հաղորդի «Դիզակ»  
մանկապարտեզի տնօրեն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի դեկտեմբերի 15-ից սկսում է 2023թ. բուհերի՝ ընդունելության համար սահմանված հունվար ամսում անցկացվող միասնական քննությունների հայտագրման գործընթացը:

Դիմորդը միասնական քննությունների դիմում-հայտը լրացնելու նպատակով պետք է դիմի Արցախի Հանրապետության Գնահատման և թեստավորման կենտրոն:

Դիմորդը դիմում-հայտում հայտագրված առավելագույնը երկու միասնական քննությունները պետք է հանձնի 2023թ. հունվարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ձևավորված քննական կենտրոնում:

Քննություններին մասնակցելու դիմում-հայտի համար անհրաժեշտ է՝

- 3 x 4 չափսի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ԳԹԿ-ի 900018003401 հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար փոխանցած 4500 դրամ վճարի անդորրագիրը

Ընդունելության քննությունների վճարից ազատվում են՝

- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները,

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,

- առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխաները:

Նշված արտոնություններից օգտվող դիմորդները համապատասխան տեղեկանքի էլեկտրոնային տարբերակն ուղարկում են քննությունների հայտագրման դիմում-հայտի հետ:

Դիմում - հայտերի ընդունման վերջին ժամկետը ս. թ. դեկտեմբերի 23-ն է, ժամը՝ 18:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (047)97-40-51 հեռախոսահամարին:

ԱՃՈՒԴ-ՄՐՅՈՒՅԹ

Մնանկության գործով Ա/Չ կառավարիչ Արայիկ Հակոբջանյանը հայտարարում է, որ 2022թ. դեկտեմբերի 9-ին, ժամը 12:00-ին Ստեփանակերտ քաղաքի ԸԻ դատարանի նստավայրում տեղի է ունենալու աճուրդ-վաճառք:

Լոտ 1՝ Ստեփանակերտի Ադմ. Իսակովի փողոցի 7/40 հասցեում բնակարան. մակերեսը՝ 90.63 քմ, մեկնարկային գինը՝ 14762250 ՀՀ դրամ, սեփականության իրավունքով գրանցված:

Լրացուցիչ տեղեկություններ և աճուրդին մասնակցելու թույլտվություն ստանալու համար զանգահարել 097-26-66-28 հեռախոսահամարով:

Ա/Չ կառավարիչ՝ Արայիկ Հակոբջանյան

ԸԻԳ/0008/04/22 «ԴՐԱՅՄ ԳԻՍՏՐԻԲՅՈՒՇՆ» ՄՊԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՃՈՒՅԱԿ

| Պարտատեր        | Պարտավորության չափը | «Մնանկության մասին» ԱՀ օրենքի 56-րդ և 95-րդ հոդվածով սահմանված հերթականություն |
|-----------------|---------------------|--|
| ԱՐՑԱԽԱԲԱՆԿ ՓԲԸ  | 6 800 057,5 ՀՀ դրամ | Ապահովված պահանջ ( հոդված 56)  |
| ԱՍԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ  | 3 299 581,7 ՀՀ դրամ | Ապահովված պահանջ ( հոդված 56)  |
| ԱՌԳԵ ԲԻՉԵՆՍ ՄՊԸ | 25457383 ՀՀ դրամ    | Ապահովված պահանջ ( հոդված 56)  |
| ԱՍԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ  | 70 000 ՀՀ դրամ      | 7-րդ հերթ ( հոդված 95, մաս 7-րդ)   |
| ԱՀ ՊԵԿ          | 2 180 600 ՀՀ դրամ   | 7-րդ հերթ ( հոդված 95, մաս 7-րդ)   |
| ՍԱՌՆԱՐԱՆ ՄՊԸ    | 2 894 000 ՀՀ դրամ   | 7-րդ հերթ ( հոդված 95, մաս 7-րդ)   |
| ՍԱՌՆԱՐԱՆ ՄՊԸ    | 250 000 ՀՀ դրամ     | 4-րդ հերթ ( հոդված 95, մաս 4-րդ)   |

Ա/Չ Ա.Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԸԻԳ/0006/04/22 ԾՈՎԻՆԱՐ ԶԱՎԵՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՃՈՒՅԱԿ

| Պարտատեր       | Պարտավորության չափը | «Մնանկության մասին» ԱՀ օրենքի 95-րդ հոդվածներով սահմանված հերթականություն |
|----------------|---------------------|---|
| ԱՊՐՇԻԱԲԱՆԿ ՓԲԸ | 2 862 986,7 ՀՀ դրամ | Չափափակված պահանջ ( հոդված 95, 4-րդ հերթ)                                 |

Կառավարիչ՝ Ա. Ա. Հակոբջանյան

ԿՈՐԵԼԷ

Գրիգորի Լևոնի Սարգսյանի 9-րդ դասարանի Ա 249289 համարի վկայականը՝ տրված Շուշիի շրջանի Հին շենի Ա.Մկրտչյանի անվան հիմնական դպրոցի կողմից՝ 2019 թվականին: Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ  
ԽՄԲԱԳԻՐ՝  
Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
ՓԲԸ

Ստեփանակերտ,  
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրպարություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 30.11.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: